# եվրոպայի խորհուրդ

*800 միլիոն եվրոպացիներ*

# Ուղերձ

**Թերրի Դեյվիս,**
**Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար**



Եվրոպայի խորհրդի հիմնական նպատակն է անհատական ազատությունների, քաղաքական ազատության և իրավունքի գերակայության երաշխավորման գործում իր 46 անդամ պետությունների միջև հասնել առավել մեծ միասնության. սկզբունքներ, որոնք ընկած են իրական ժողովրդավարության հիմքում և վերաբերում են բոլոր եվրոպացիների կյանքի բազմաթիվ տարբեր ոլորտներին: Եվ բոլոր անդամ պետությունները պարտավորվել են իրենց կառավարությունների գործունեությունը հիմնել այս սկզբունքների վրա:

1949թ. իր ստեղծումից ի վեր Եվրոպայի խորհուրդը խաղաղության պահպանման ու համագործակցության ապրված շարժիչ ուժ է՝ խարսխված մեր ընդհանուր ժառանգության, մարդու իրավունքների և ժողովրդավարության վրա: 1989թ. Բեռլինյան պատի փլուզման, ինչպես նաև Եվրոպայով մեկ ժողովրդավարական արժեքների տարածման արդյունքում, Կազմակերպությունը մուտք գործեց քաղաքական նոր հարթություն: Այսօր Կազմակերպությունը մարմնավորում է շուրջ 800 միլիոն եվրոպացիների նվիրվածությունը մարդու իրավունքներին, ժողովրդավարությանը և իրավունքի գերակայությանը:

Այս գրքույկը հնարավորություն է տալիս ծանոթանալ Եվրոպայի խորհրդի հետ, իմանալ, թե ինչ է այն իրենից ներկայացնում և ինչպես է գործում: Այն նկարագրում է Կազմակերպության հիմնական մարմինների դերը, որոնք համատեղ աշխատում են Եվրոպայում անվտանգության և ժողովրդավարության խթանման ու ամրապնդման համար: Սա է մեր Կազմակերպության խնդիրը. Կազմակերպություն, որի հիմնական նպատակն է ընդհանուր ժառանգությամբ և հավասար իրավունքներով եվրոպացիների համար բազմազանության մեջ միասնականության ապահովելը:

**Եվրոպայի խորհուրդ**
**800 միլիոն եվրոպացիներ**

Ուղերձ. Թերրի Դեյվիս, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտու

# Բովանդակություն


Եվրոպայի խորհուրդը. ընդհանուր տեղեկություններ

Նախարարների կոմիտե

Խորհրդարանական վեհաժողով

Գլխավոր քարտուղար

Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես

Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների համաժողով

Մարդու իրավունքներ. պաշտպանություն, խթանում և կանխարգելում

Լրատվամիջոցներն ու ժողովրդավարությունը

Իրավական համագործակցություն

Սոցիալական համախմբվածություն

Եվրոպայի խորհրդի զարգացման բանկ

Հյուսիս-հարավ կենտրոն

Առողջության պաշտպանությունն ու խթանումը

Եվրոպական մշակութային կոնվենցիան. գործողությունների շրջանակ

Կրթություն

Մշակույթ և ժառանգություն

Բնական ժառանգություն, լանդշաֆտի պաշտպանություն և կայուն զարգացում

Սպորտ

Երիտասարդություն

Եվրոպական դրոշը, հիմնը ու մրցանակները

Եվրոպական կառույցները

Կարևոր իրադարձությունները

Եվրոպայի խորհրդի տեղեկատվական կենտրոնները

Եվրոպայի խորհրդի 46 անդամ պետությունները

# Եվրոպայի խորհուրդը. ընդհանուր տեղեկություններ

*Մարդու իրավունքների վրա հիմված կանոնադրություն*

Ցանկացած եվրոպական պետություն կարող է դառնալ Եվրոպայի խորհրդի անդամ, եթե այն ընդունում է իրավունքի գերակայությունը և երաշխավորում իր իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր անհատի մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:

*Նպատակները*

Եվրոպայի խորհուրդը միջկառավարական կազմակերպություն է, որի նպատակն է.

- պաշտպանել մարդու իրավունքները, բազմակարծ ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը,
- բարձրացնել իրազեկությունը և խթանել Եվրոպայի մշակութային ինքնության և բազմազանության զարգացումը,
- գտնել ընդհանուր լուծումներ եվրոպական հասարակության առջև ծառացած մարտահիրավերներին, ինչպիսիք են փոքրամասնությունների նկատմամբ խտրականությունը, ատելությունն այլազգիների նկատմամբ, անհանդուրժողականությունը, կենսաէթիկան և կլոնավորումը, ահաբեկչությունը, մարդկանց թրաֆիկինգը, կազմակերպված հանցագործությունները և կոռուպցիան, կիբեռհանցագործությունները, երեխաների նկատմամբ բռնությունը, և այլն,
- ամրապնդել Եվրոպայում ժողովրդավարական կայունությունը՝ նեցուկ լինելով քաղաքական, օրենսդրական և սահմանադրական բարեփոխումներին:

*46 անդամ պետություններ*

Եվրոպայի խորհուրդը հիմնադրվել 1949թ. մայիսի 5-ին 10 երկրների կողմից (Բելգիա, Դանիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Միացյալ Թագավորություն, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Ֆրանսիա), որոնց 1949թ. օգոստոսին միացան Հունաստանը և Թուրքիան: Այսօր այն ունի 46 անդամ պետություն՝ Իսլանդիա, Գերմանիա (1950թ.), Ավստրիա (1956թ.), Կիպրոս (1961թ.), Շվեյցարիա (1963թ.), Մալթա (1965թ.), Պորտուգալիա (1976թ.), Իսպանիա (1977թ.), Լիխտենշտեյն (1978թ.), Սան-Մարինո (1988թ.), Ֆինլանդիա (1989թ.), Հունգարիա (1990թ.), Լեհաստան (1991թ.), Բուլղարիա (1992թ.), Էստոնիա, Լիտվա, Սլովենիա, Չեխիայի Հանրապետություն, Սլովակիա, Ռումինիա (1993թ.), Անդորրա (1994թ.), Լատվիա, Ալբանիա, Մոլդովա, Ուկրաինա, « Մակեդոնիայի նախկին

հարավսլավական հանրապետություն» (1995թ.), Ռուսաստանի Դաշնություն, Խորվաթիա (1996թ.), Վրաստան (1999թ.), Հայաստան, Ադրբեջան (2001թ.), Բոսնիա և Հերցեգովինա (2002թ.), Սերբիա (2003թ.) և Մոնակո (2004թ.):

Եվրոպայի խորհուրդը չպետք է նույնացնել Եվրոպական միության հետ: Այս կազմակերպությունները միանգամայն տարբեր են, սակայն Եվրոպական միության անդամ բոլոր 25 պետությունները միաժամանակ Եվրոպայի խորհրդի անդամ երկրներ են:

*Անդամակցության թեկնածու պետություն*

1993թ. մարտի 12-ից Բելառուսը անդամակցության թեկնածու պետություն է:

*Դիտորդի կարգավիճակ*

ԱՄՆ-ն, Կանադան, Ճապոնիան, Մեքսիկան և Վատիկանը Եվրոպայի խորհրդի միջկառավարական մարմիններում ունեն դիտորդի կարգավիճակ:

*Եվրոպայի պալատ*

Ստրասբուրգում (Ֆրանսիա) գտնվող Եվրոպայի պալատը Եվրոպայի խորհրդի գլխամասային գրասենյակն է:

*Գործունեության լայն շրջանակ*

Եվրոպայի խորհուրդը զբաղվում է եվրոպական հասարակության առաջ ծառացած բոլոր կարևոր խնդիրներով, բացառությամբ պաշտպանության խնդիրների: Նրա աշխատանքային ծրագրին ընդգրկում է հետևյալ ոլորտները՝ մարդու իրավունքներ, լրատվամիջոցներ, իրավական համագործակցություն, սոցիալական համախմբվածություն, առողջապահություն, կրթություն, մշակույթ, ժառանգություն, սպորտ, երիտասարդություն, տեղական ժողովրդավարություն և անդրսահմանային համագործակցություն, շրջակա միջավայր և տարածքային պլանավորում:

*Համագործակցության շրջանակ*

- Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի որոշումներ կայացնող մարմինն է, որի կազմում են բոլոր 46 անդամ պետությունների արտաքին գործերի նախարարները (կամ նրանց մշտական ներկայացուցիչները):
- Խորհրդարանական վեհաժողովը Կազմակերպության խորհրդակցական մարմինն է, որի անդամները նշանակվում են ազգային խորհրդարանների կողմից (315 անդամ և 315 փոխարինող):
- Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը խորհրդակցական մարմին է, որտեղ ներկայացված են տեղական և տարածքային իշխանությունները:

Այսպիսով՝ կառավարությունները, ազգային խորհրդարանները և տեղական ու տարածքային իշխանությունները Կազմակերպությունում առանձին են ներկայացված:

- Եվրոպայի խորհրդի Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովը ընդգրկում է շուրջ 400 միջազգային հասարակական կազմակերպություններ, որոնք Եվրոպայի խորհրդում ունեն մասնակցի կարգավիճակ:

*Գլխավոր քարտուղարի ընտրովի պաշտոնը*

2004թ. հինգ տարի ժամկետով Թերրի Դեյվիսը (Միացյալ Թագավորություն) Խորհրդարանական վեհաժողովի կողմից ընտրվեց Գլխավոր քարտուղար: Նա ղեկավարում և համակարգում է կազմակերպության գործունեությունը:

*Գագաթաժողովները՝ որպես նոր խթաններ*

Կոմունիստական ռեժիմների փլուզումից հետո Եվրոպայի խորհուրդը նոր քաղաքական խթան ստացավ ամենաբարձր մակարդակում՝ Պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթաժողովների կազմակերպման միջոցով: Մինչ օրս տեղի է ունեցել երեք գագաթաժողով:

1993թ. Վիեննայում կազմակերպության 32 անդամ պետությունների քաղաքական առաջնորդները ժամանակի թելադրանքով որոշեցին ընդլայնել Եվրոպայի խորհրդի անդամակցության շրջանակները:

1997թ. Ստրասբուրգում արդեն 40 անդամ պետությունների քաղաքական առաջնորդներն ընդունեցին չորս թեմաների վրա հիմնված Գործողությունների ծրագիր՝ ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, սոցիալական համախմբվածություն, քաղաքացիների անվտանգություն և կրթություն ժողովրդավարության և մշակութային բազմազանության համար:

2005թ. 16-ից 17-ը Վարշավայում (Լեհաստան) տեղի ունեցավ երրորդ գագաթաժողովը, որը ձևակերպեց ԵԽ հետագա նպատակները և գերակայությունները նոր քաղաքական մանդատի շրջանակներում՝ վերահաստատելով նրա հիմնարար արժեքներն ու չափանիշները նոր հարյուրամյակի մարտահրավերների համատեքստում:

*Ճյուղային նախարարների համաժողովներ*

Եվրոպայի խորհուրդը պարբերաբար անց է կացնում ճյուղային նախարարների համաժողովներ՝ ըստ նրանց գլխավորած ոլորտների (արդարադատություն, կրթություն, ընտանիքի խնդիրներ, առողջապահություն, շրջակա միջավայր, տեղական իշխանություններ, միգրացիա, կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարություն, աշխատանք, զանգվածային լրատվության միջոցներ, մշակույթ, սպորտ, երիտասարդություն և այլն):

Համաժողովները վերլուծում են տվյալ բնագավառի կարևորագույն խնդիրները և խթանում կապերը անդամ պետությունների

համապատասխան նախարարությունների միջև: Դրանք մշակում են համատեղ իրականացման ծրագրեր և առաջարկում միջոցառումներ Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրի համար:

*Եվրոպայի սահմանադրական կառուցում*

Եվրոպայի խորհրդի աշխատանքի արդյունքում ստեղծվում են կոնվենցիաներ և համաձայնագրեր: Անդամ պետությունները կարող են ներդաշնակեցնել և լրացումներ կատարել իրենց օրենքներում՝ դրանք կոնվենցիաներին համապատասխանեցնելու համար:

Որոշ կոնվենցիաներ և համաձայնագրեր բաց են նաև ոչ անդամ պետությունների ստորագրման համար: Հետազոտությունների և գործունեության արդյունքները մատչելի են կառավարություններին՝ Եվրոպայում համագործակցությունը և սոցիալական առաջընթացը խրախուսելու նպատակով:

Եվրոպայի խորհուրդն ընդունում է նաև մասնակի համաձայնագրեր, համագործակցության «փոփոխական երկրաչափության» մի տեսակ, որը հնարավորություն է տալիս մի շարք անդամ պետությունների մյուսների համաձայնությամբ իրականացնել ընդհանուր շահերից բխող կոնկրետ միջոցառումներ:

*Միջազգային անձնակազմ*

Գլխավոր քարտուղարը ղեկավարում է 1800 միջազգային քաղաքացիական ծառայողների, որոնք անդամ պետությունների քաղաքացիներ են:

*Եվրոպական ֆինանսավորում*

Եվրոպայի խորհուրդը ֆինանսավորվում է անդամ պետությունների կառավարությունների կողմից: Բյուջեի ներդրումները հաշվարկված են պետության բնակչության թվին և տնտեսական զարգացման մակարդակին համապատասխան: Եվրոպայի խորհրդի 2006թ. ընդհանուր բյուջեն կազմել է 262 միլիոն եվրո:

*Պաշտոնական լեզուները*

Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներն են անգլերենն ու ֆրանսերենը, սակայն գերմաներենը, իտալերենը և ռուսերենը նույնպես օգտագործվում են որպես աշխատանքային լեզուներ: Մի շարք տեքստեր մատչելի են մի քանի տարբեր լեզուներով կազմակերպության ինտերնետային կայքում՝www.coe.int:

# Նախարարների կոմիտե

Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի որոշումներ կայացնող մարմինն է: Դրա կազմում են բոլոր անդամ պետությունների արտաքին գործերի նախարարները կամ Ստրասբուրգում նրանց մշտական դիվանագիտական ներկայացուցիչները: Այն և՛ կառավարական մարմին է, որտեղ հավասար հիմունքներով քննարկվում են եվրոպական խնդիրների նկատմամբ ազգային մոտեցումներ, և՛ այդ մարտահրավերներին ընդհանուր լուծումներ մշակելու հարթակ: Խորհրդարանական վեհաժողովի հետ համագործակցելով՝ այն պահպանում է Եվրոպայի խորհրդի հիմնարար արժեքները և վերահսկում անդամ պետությունների պարտավորությունների կատարումը:

## Կառավարությունների ձայնը

*Որոշումներն ու գործողությունները*

Նախարարների կոմիտեն որոշումներ է կայացնում Եվրոպայի խորհրդի գործունեության վերաբերյալ: Այն նաև որոշում է այն միջոցառումների ցանկը, որը պետք է իրականացնել՝ հիմնվելով Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի և Տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնարարականների և տարբեր միջկառավարական կոմիտեների ու ճյուղային նախարարների համաժողովների առաջարկություններին: Այն հաստատում է Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագիրը և բյուջեն:

*Երկխոսություն*

Նախարարների քննարկումները ներառում են ընդհանուր հետաքրքրություն առաջացնող քաղաքական բոլոր հարցերը, բացի պաշտպանության ոլորտից. դրանք են՝ եվրոպական ինտեգրման քաղաքական ասպեկտը, համագործակցության ընդլայնումը, ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների պաշտպանությունը, այլ կերպ ասած, այն բոլոր խնդիրները, որոնք պահանջում են միասնական համաեվրոպական լուծումներ:

*Ակտիվ գործող մարմին*

Անդամ երկրների արտաքին գործերի նախարարները հանդիպում են տարեկան մեկ անգամ՝ քաղաքական խնդիրներն ու եվրոպական համագործակցությունը գնահատելու և Եվրոպայի խորհրդի գործունեությանը անհրաժեշտ քաղաքական լիցք հա-

ղորդելու նպատակով: Նրանց մշտական ներկայացուցիչները (դեսպանները) հանդիպում են շաբաթը մեկ անգամ, իսկ զեկույցներ պատրաստող ու աշխատանքային խմբերը հանդիպում են՝ հանգամանորեն ուսումնասիրելու տարբեր խնդիրներ, նախքան դրանց առնչությամբ որոշումների ընդունումը:

Յուրաքանչյուր նախարար վեց ամիս նախագահում է Կոմիտեն: Նախարարների կոմիտեի նախագահությունը փոխանցվում է հաջորդ նախագահող երկրին մայիս և նոյեմբեր ամիսներին:

*Ճկունություն*

Երբ առանձին նախագծեր չեն ստանում բոլոր անդամ պետությունների հավանությունը, Նախարարների կոմիտեն կարող է դրանք ներկայացնել մասնակի համաձայնագրերի ձևով, ինչը որոշ անդամ պետությունների որոշակի ոլորտներում համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորություն է տալիս:

Մյուս կողմից, ընդլայնված համաձայնագրերը որոշ կամ բոլոր անդամ պետություններին թույլ են տալիս համագործակցել անդամ չհանդիսացող պետությունների հետ՝ ընձեռելով Եվրոպայի խորհրդի մշտական կառույցներից օգտվելու հնարավորություն:

## Եվրոպական լուծումներ

*Կարևոր փաստաթղթեր*

Նախարարների կոմիտեի որոշումները պետությունների կառավարություններին տրվում են հանձնարարականների ձևով կամ եվրոպական կոնվենցիաների և համաձայնագրերի տեսքով, որոնք պարտադիր են դառնում դրանք վավերացնող պետությունների համար:

Նախարարների կոմիտեն նաև ընդունում է հայտարարություններ և բանաձևեր ընթացիկ քաղաքական հարցերի վերաբերյալ:

Մինչ այսօր մշակված է շուրջ 200 կոնվենցիա: Հիմնականում դրանք վերաբերում են մարդու իրավունքների ոլորտին, բայց ընդգրկում են նաև այն բնագավառները, որոնք հաստատում և ամրապնդում են Եվրոպայի ժողովրդավարական, սոցիալական և մշակութային համախմբվածությունը:

Նախարարների կոմիտեի որոշումների մեծ մասն ընդունվում է ձայների ընդհանուր թվի երկու երրորդով, սակայն ընթացակարգային հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու համար բավարար է ձայների պարզ մեծամասնությունը:

*Մասնագետների մասնակցությամբ փաստաթղթերի պատրաստում*

Կոնվենցիաներն ու հանձնարարականները պատրաստում են Նախարարների կոմիտեի կողմից լիազորված կառավարությունների փորձագետները, որոնք քաղաքական խնդիրները ներդաշ-

նակեցնում են տեխնիկական և գերատեսչական նկատառումնե-րին: Բազմաթիվ քաղաքական նախաձեռնություններ նաև առաջ են քաշվում ճյուղային նախարարների պարբերաբար գումարվող համաժողովներում:

*Ժողովրդա-վարություն և համերաշխություն*

Նոր անդամ պետությունների համար Եվրոպայի խորհուրդը մշակել է համագործակցության և օժանդակության ծրագրեր, որպեսզի նրանք կարողանան օգտվել Կազմակերպության կու-տակած փորձից: Այդ ծրագրերը հիմնված են Եվրոպայի խորհր-դում միջկառավարական համագործակցության արդյունքների վրա (տեղեկատու տեքստեր, փորձագետների ցանցեր և համա-գործակցության կառույցներ): Դրանց նպատակն է խորացնել, ամրապնդել և խթանել ժողովրդավարական բարեփոխումները տվյալ երկրներում՝ նրանց հետզհետե և ներդաշնակորեն ին-տեգրելով եվրոպական համագործակցության գործընթացներում և կառույցներում, և առաջին հերթին Եվրոպայի խորհրդի շրջա-նակներում: «Վստահության ամրապնդման միջոցառումների ծրագիրն» աջակցում է քաղաքացիական հասարակության նա-խաձեռնություններին, որոնց նպատակն է մեծամասնություն և փոքրամասնություն կազմող համայնքների միջև գիտելիքների փոխանակումը և համագործակցությունը:

## Արժեքների պահապան

*Կանոնադրության պահպանումը*

Եվրոպայի խորհրդին անդամակցող երկրները պարտավորվում են ընդունել իրավունքի գերակայության սկզբունքը և մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելու՝ իրենց ժողովուրդների իրավունքը: Բացի այդ նրանք պարտա-վորվում են ազնվորեն և արդյունավետ համագործակցել առավել միասնականության հասնելու և տնտեսական ու սոցիալական առաջընթացին օժանդակելու համար: Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է կատարի իր պարտավորությունները, և Նա-խարարների կոմիտեն ապահովում է դրանց կատարումը:

Անդամ պետությունների կողմից կանոնադրական պարտավո-րությունների լուրջ խախտումների դեպքում Նախարարների կո-միտեն կարող է դադարեցնել տվյալ պետության ներկայության իրավունքը, Կազմակերպությունից դուրս գալու պահանջ ներկա-յացնել կամ, նույնիսկ, դադարեցնել նրա անդամությունը:

*Կոնվենցիաների կատարումը*

Նախարարների կոմիտեն նաև վերահսկում է անդամ պետություն-ների կողմից ընդունված կոնվենցիաների և համաձայնագրերի կատարումը: Դա հատկապես կարևոր է մարդու իրավունքներին առնչվող փաստաթղթերի դեպքում, որոնցից ամենակարևորները (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, Վերանայ-ված եվրոպական սոցիալական խարտիան, Խոշտանգումների

կանխարգելման եվրոպական կոնվենցիան և Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան) ունեն կատարման վերահսկման սեփական մեխանիզմներ:

Նախարարների կոմիտեի պատասխանատվությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իրագործման ոլորտում արտացոլում է այս կոնվենցիայի կարևորությունը: Այն հանդիսանում է Եվրոպայի մարդու իրավունքների պաշտպանության համակարգի հիմնաքարը: Վերահսկելով անդամ պետությունների կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների կատարումը՝ Նախարարների կոմիտեն կարևորագույն դեր է խաղում աշխարհում իր նմանը չունեցող մարդու իրավունքների պաշտպանության համակարգի նկատմամբ վստահության պահպանման գործում:

*Պարտավորությունների կատարում*

Նախարարների կոմիտեն իրականացնում է իր պարտականությունները անաչառ և կառուցողական ոգով, համաձայն Բեռլինի պատի անկումից ի վեր Եվրոպայի խորհրդի ընդլայնումը առաջնորդող քաղաքականության՝ կարևորելով երկխոսությունը և դեպի դրական զարգացում առաջնորդող քաղաքական և նյութական պայմանների աստիճանական կառուցումը: Այս նպատակով այն ստեղծել է վերահսկողության համակարգ, որը կոչված է ապահովելու բոլոր անդամ պետությունների կողմից նրանց ստանձնած պարտավորությունների կատարումը: Համակարգը բոլոր անդամներին առաջարկում է այն պայմաններն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են Եվրոպայի խորհրդի հիմնարար արժեքները պահպանելու համար:

Եվրոպայի խորհրդի ընդլայնումը լուրջ փոփոխություններ առաջացրեց Նախարարների կոմիտեի կառուցվածքում և դերում՝ զգալիորեն մեծացնելով նրա աշխատանքների քաղաքական ոլորտը:

*Երկխոսություն և փոխլրացում*

Եվրոպայի խորհուրդը երկխոսություն է խթանել Եվրոպայի՝ պետական և տեղական մակարդակների ընտրովի մարմինների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև իր քաղաքական քննարկումների մասնակիցների կազմում ընդգրկել է անդամ չհանդիսացող դիտորդի կարգավիճակ ունեցող երկրներ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կանադա, Ճապոնիա, Մեքսիկա, Վատիկան): Եվրոպայի խորհուրդը զգալիորեն մեծացրել է իր համագործակցությունն այլ եվրոպական կազմակերպությունների, հատկապես Եվրոպական միության և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հետ:

Մինչ այսօր Եվրոպայի խորհուրդը հրավիրել է իր բոլոր անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների երեք

գագաթաժողով:
Առաջին գագաթաժողովը տեղի ունեցավ Վիեննայում 1993թ., որին նախորդեցին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում կոմունիզմի փլուզումն ու նոր ժողովրդավարությունների զարգացումը: Սա հաստատեց Եվրոպայի խորհրդի՝ բաց և ընդլայնվելուն միտված քաղաքականությունը, ինչպես նաև սկիզբ դրեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի բարեփոխմանը՝ այն առավել արդյունավետ դարձնելու համար: Երկրորդ գագաթաժողովը տեղի ունեցավ 1997թ. Ստրասբուրգում, ինչը նոր լիցք հաղորդեց մարդու իրավունքների պաշտպանությանը. գագաթաժողովը որոշեց Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար նշանակել:

*Վարշավայի գագաթաժողովը. մեր նպատակների վերահիմնավորումն ու վերաձևակերպումը*

Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթաժողովը տեղի ունեցավ 2005թ. մայիսին: 46 անդամ պետությունների առաջնորդները փառաբանեցին Եվրոպայի աննախադեպ միասնականությունը և հաստատեցին Կազմակերպության գերակայությունները՝ ընդունելով հռչակագիր և գործողությունների ծրագիր:

Հիմնական նպատակները՝

- ամրապնդել Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ապահովման և խթանման հիմնական առաքելությունը,
- մշակել համաեվրոպական քաղաքական երկխոսություն միջկառավարական, միջխորհրդարանական և տարածաշրջանային/տեղական մակարդակներում,
- իրականացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բարեփոխումները՝ որոշումների կայացման գործընթացն արագացնելու և երկարաժամկետ արդյունավետություն ապահովելու համար,
- խորացնել սոցիալական համախմբվածության, միջմշակութային երկխոսությանն և ժողովրդավարական քաղաքացիության ամրապնդմանն ուղղված Եվրոպայի խորհրդի գործունեությունը,
- ամրապնդել Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության և Միացյալ ազգերի կազմակերպության հետ համագործակցությունը:

*Համաեվրոպական արշավներ*

Այս տարի եվրոպայի խորհուրդը մեկնարկում է չորս համաեվրոպական արշավ՝

- Երեխաները և բռնությունը. կառուցել Եվրոպա երեխաների հետ և երեխաների համար,

- Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողություններ,
- «Բոլորը տարբեր, բոլորը հավասար». բազմազանության, մարդու իրավունքների և մասնակցության եվրոպական երիտասարդական արշավ,
- Պայքար կանանց նկատմամբ բռնության դեմ, ներառյալ ընտանեկան բռնությունը:

# Խորհրդարանական վեհաժողով

Խորհրդարանական վեհաժողովը Եվրոպայի խորհրդի երկու գլխավոր կանոնադրական մարմիններից մեկն է և ներկայացնում է կազմակերպության անդամ պետությունների խորհրդարանական հիմնական ուժերը: Վեհաժողովը համարվում է այն շարժիչ ուժը, որը Եվրոպայի բոլոր ժողովրդավարական պետություններին ընդգրկում է եվրոպական համագործակցության մեջ:

*Եվրոպայի ժողովրդավարական համոզմունքը*

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը մայրցամաքի պատմության մեջ առաջին եվրոպական վեհաժողովն է: Բացի այդ, այն ամենաընդգրկունն է՝ 46 ազգային խորհրդարաններից բաղկացած ներկայացուցիչներով:

Լինելով ազատ իր օրակարգի մշակման մեջ՝ Վեհաժողովը զբաղվում է արդիական և հեռանկարային նշանակության հարցերով, ներառյալ ընթացիկ սոցիալական խնդիրներն ու միջազգային քաղաքականության հայեցակետերը:

Վեհաժողովի աշխատանքները մեծ դեր են խաղում Նախարարների կոմիտեի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի միջկառավարական սեկտորների գործունեության ուղղությունների որոշման գործում: Բացի այդ, Վեհաժողովի անդամներն իրենց ազգային խորհրդարանների միջոցով ներգործում են իրենց կառավարությունների վրա:

90-ական թվականների սկզբին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պատմական իրադարձությունները Վեհաժողովի առջև դրեցին բացառիկ մի խնդիր՝ եվրոպական ժողովրդավարությունների ընտանիք վերադարձնել այդ երկրները և խրախուսել եվրոպական բոլոր երկրների խորհրդարանների միջև համագործակցությունը: Այսպիսով, Վեհաժողովն իր լուման ներդրեց առանց բաժանարար գծերի միասնական Եվրոպայի կառուցման գործում:

1989թ. Խորհրդարանական վեհաժողովը ստեղծեց «հատուկ հյուրի» կարգավիճակը: Դա թույլ տվեց դեռևս անդամ չհանդիսացող Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բազմակարծ ժողովրդա-

վարությունների խորհրդարանական պատվիրակություններին մասնակցել Վեհաժողովի լիագումար նիստերին և հանձնաժողովների աշխատանքներին: Այս ճանապարհով հաստատված շփումներն ու կարծիքների փոխանակումը նպաստեց այս երկրների ժողովրդավարացմանը և արագացրեց Եվրոպայի խորհրդին նրանց անդամակցությունը:

*Կառուցվածքը և կազմակերպչական ջիղը. եվրոպական ժողովրդավարությունների արտացոլումը*

Խորհրդարանական վեհաժողովի 315 անդամները և նրանց տեղակալները ընտրվում կամ նշանակվում են ազգային խորհրդարանների կողմից՝ իրենց իսկ կազմից: Բնակչության թվից կախված յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչների թիվը տատանվում է 2-ից մինչև 18-ը:

Ազգային պատվիրակությունները կազմվում են՝ երաշխավորելով ազգային խորհրդարանների, ներկայացված քաղաքական կուսակցությունների ու խմբերի ներկայացուցչականությունը:

Վեհաժողովում գործում են հինգ քաղաքական խմբեր՝ Սոցիալիստների խումբը, Եվրոպական ժողովրդավարական կուսակցության խումբը, Լիբերալների, ժողովրդավարների և բարեփոխիչների խումբը, Եվրոպական ժողովրդավարական խումբը և Միավորված ձախ ուժերի խումբը: Վեհաժողովի որոշ անդամներ նախընտրում են չանդամագրվել քաղաքական որևիցե խմբի:

Ստրասբուրգում տարին չորս անգամ Եվրոպայի պալատի նիստերի դահլիճում տեղի են ունենում Խորհրդարանական վեհաժողովի մեկ շաբաթ տևող լիակազմ նիստերը: Դրանք բաց են հասարակության համար: Վեհաժողովը գարնանը հանդիպում է անցկացնում նաև անդամ պետություններից որևէ մեկում:

Վեհաժողովն իր անդամների կազմից ընտրում է Նախագահ՝ սովորաբար երեք իրար հաջորդող մեկամյա ժամկետով: Նախագահները, նրա տեղակալները (ներկայում թվով 19), հինգ քաղաքական խմբերի նախագահները և տասս հանձնաժողովների նախագահները կազմում են Վեհաժողովի բյուրոն:

Վեհաժողովը նաև ընտրում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, նրա տեղակալին, Խորհրդարանական վեհաժողովի Գլխավոր քարտուղարին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներին, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարին:

Վեհաժողովի գործունեությունը հիմնված է մասնագիտացված հանձնաժողովների աշխատանքի հիման վրա, որոնք առնչվում են հետևյալ ոլորտներին՝ քաղաքական, իրավաբանական հարցեր և մարդու իրավունքների պաշտպանություն, սոցիալական,

առողջապահական և ընտանեկան հարցեր, շրջակա միջավայր և գյուղատնտեսություն, տեղական և տարածքային հարցեր, տնտեսություն և զարգացում, միգրացիայի, փախստականների և բնակչության խնդիրներ, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, ընթացակարգային կանոնների և անձեռնմխելիության հարցեր, ինչպես նաև անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարում:

*Եվրոպական և համաշխարհային իրադարձություններ քննարկում*

Յուրաքանչյուր նստաշրջանի օրակարգում քննարկման են դրվում եվրոպական և միջազգային իրադարձություններ: Մասնավորապես Վեհաժողովը կենտրոնանում է այն հարցերին, որոնց լուծումները պահանջում են գործողություններ եվրոպական մակարդակում: Այս քննարկումներին մասնակցել են աշխարհի հայտնի գործիչներ և պետությունների ղեկավարներ (Հովհաննես Պողոս II-ը, Միխայիլ Գորբաչովը, Վացլավ Հավելը, Վիկտոր Յուշչենկոն և շատ ուրիշներ):

Վեհաժողովում հարցերի քննարկումներին մասնակցում են նաև միջազգային տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես օրինակ՝ ՏՀԶԿ-ն, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) և Միավորված ազգերի կազմակերպության մի շարք մասնագիտացված գործակալություններ:

Ոչ կառավարական կազմակերպությունները որոշ հանձնաժողովների աշխատանքներին մասնակցում են որպես դիտորդ և այդպիսով նշանակալի ներդրում են ունենում Վեհաժողովի կողմից իրականացվող կարևոր միջոցառումների իրականացմանը:

*Նախաձեռնություններն ու արդյունքները*

1989թ.-ից Վեհաժողովն ակտիվ դեր է խաղում Եվրոպայում ճգնաժամերի կառավարման գործում: Նրա շրջանակներում անցկացվող քաղաքական քննարկումները, որպես կանոն, հիմնվում են տեղերում այցելությունների արդյունքների, ինչպես նաև համապատասխան պետությունների հետ տարվող մշտական երկխոսությունների վրա: Վեհաժողովի այսպիսի գործունեությունը ամրապնդել է Եվրոպայի խորհրդի քաղաքական դերը:

Վեհաժողովն ընդունում է փաստաթղթեր, որոնք Նախարարների կոմիտեի, ազգային կառավարությունների, խորհրդարանների, քաղաքական կուսակցությունների և հասարակական այլ կարևոր հաստատությունների գործունեության համար կարևոր ուղենիշներ են հանդիսանում: Բացի այդ, Վեհաժողովի նախաձեռնությամբ մշակվել են բազմաթիվ միջազգային պայմանագրեր (Եվրոպական կոնվենցիաներ), ինչպես նաև այլ իրավական փաստաթղթեր, որոնք կազմում են իրական եվրոպական օրենսդրական համակարգի հիմքը:

Նրանցից ամենահայտնին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան է, որը 1950թ.-ից բաց է ստորագրման համար (տես «Մարդու իրավունքները, նրանց պաշտպանությունը, խթանումը և խախտումների կանխարգելումը» բաժինը): Մինչև կոնվենցիաների ընդունումը Նախարարների կոմիտեն Վեհաժողովի հետ քննարկում է դրանց նախագծերը:

Բացի վերը նշվածից, Վեհաժողովը կանոնավոր կերպով կազմակերպում է համաժողովներ,սիմպոզիումներ և բաց խորհրդարանական լսումներ ժամանակի կարևորագույն խնդիրների, մասնավորապես բռնության, անհանդուրժողականության, շրջակա միջավայրի, ներգաղթի, թմրանյութերի, կենսաէթիկայի և զանգվածային լրատվության միջոցների հարցերով: Այս լսումները խորհրդարանականների և մասնագետների միջև երկխոսություն են խթանում:

*Խորհրդարանական համագործակցության հասպարում*

Ղեկավարվելով Վեհաժողովի բյուրոյի որոշումներով՝ Վեհաժողովը հարաբերություններ է պահպանում ԵԽ անդամ և ոչ անդամ պետությունների ազգային խորհրդարանների, միջազգային միջխորհրդարանական վեհաժողովների և միջպետական կազմակերպությունների հետ:

Ազգային խորհրդարանների հետ հարաբերությունները կարգավորվում են պետությունների անդամակցության դրույթներով և «հատուկ հյուրի» ու «դիտորդի» կարգավիճակից բխող մեխանիզմերով: Վեհաժողովը նաև կապեր է պաշտպանում այլ միջխորհրդարանական վեհաժողովների հետ, ինչպիսիք են՝ Եվրոպական խորհրդարանը, Արևմտյան եվրոպական միությունը, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովը, Միջխորհրդարանական միությունը, Բենելյուքսը, Հյուսիսային խորհուրդը, ՍԾՏՀԽՎ (Սևծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողով) և ԱՊՀ-ն:

*Ապագան*

Ավելի քան հիսուն տարի առաջ հիմնադրվելուց ի վեր Խորհրդարանական վեհաժողովը միշտ ճկուն է եղել: Մասնավորապես, այն հարմարվել է վերջին տարիներին տեղի ունեցած կտրուկ փոփոխություններին: Ոչ մի ուրիշ միջազգային խորհրդարանական ֆորում այսչափ լավ պատրաստված չէր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի նոր ժողովրդավարություններին եվրոպական ազգերի ընտանիք ինտեգրելուն: Այն հանգամանքը, որ նրա անդամները նաև հանդիսանում են իրենց ազգային խորհրդարանների անդամներ, առավելություն է. դա Վեհաժողովին անդամ պետությունների ազգային քաղաքականության հետ սերտ կապի մեջ է պահում:

Խորհրդարանական վեհաժողովը նաև կարևոր դերակատարում

է ունեցել թեկնածու երկրներին Կազմակերպությանն անդամակցելուն նախապատրաստելու համար: Այն աջակցում է զարգացող ժողովրդավարություններին և անդամակցության դեպքում վերահսկում նրանց պարտավորությունների կատարումը:

*Ո՞րն է տարբերությունը*

*Խորհրդարանական վեհաժողովը* կազմված է Եվրոպայի խորհրդի 46 անդամ պետությունների ազգային խորհրդարանների անդամներից:

*Եվրոպական խորհրդարանը* համալրվում է Եվրոպական միության 25 անդամ երկրներից ուղղակի ընտրությամբ ընտրված ներկայացուցիչներից:

*Խորհրդարանական վեհաժողովի անդամ պետությունները և նրանց ներկայացչությունը*

Ադրբեջան (6), Ալբանիա (4), Անդորրա (2), Ավստրիա (6), Բելգիա (7), Բոսնիա և Հերցեգովինա (5), Բուլղարիա (6), Գերմանիա (18), Դանիա (5), Էստոնիա (3), Թուրքիա (12), Իսպանիա (12), Իռլանդիա (4), Իտալիա (18), Իսլանդիա (3), Լյուքսեմբուրգ (3), Լատվիա (3), Լեհաստան (12), Լիխտենշտեյն (2), Լիտվա (4), Խորվաթիա (5), Կիպրոս (3), Հայաստան (4), Հունգարիա (7), Հունաստան (7), Մալթա (3), Մոլդովա (5), Միացյալ Թագավորություն (18), Մոնակո (2), Նորվեգիա (5), Նիդեռլանդներ (7), «Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետություն» (3), Շվեյցարիա (6), Շվեդիա (6), Չեխիայի Հանրապետություն (7), Պորտուգալիա (7), Ռուսաստանի Դաշնություն (18), Ռումինիա (10), Սլովակիա (5), Սլովենիա (3), Սան-Մարինո (2), Սերբիա (7), Վրաստան (5), Ուկրաինա (12), Ֆինլանդիա (5), Ֆրանսիա (18):

*Դիտորդի կարգավիճակ*

Կանադայի, Իսրաելի և Մեքսիկայի խորհրդարանները Խորհրդարանական վեհաժողովում ունեն դիտորդի կարգավիճակ:

*Հատուկ հյուրի կարգավիճակ*

Բելառուսի խորհրդարանի հատուկ հյուրի կարգավիճակը սառեցվել է 1997թ. հունվարի 13-ին:

*Ինտերնետային կայք*` http://assembly.coe.int

# Գլխավոր քարտուղարը

2004թ. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը հինգ տարի ժամկետով Գլխավոր քարտուղար ընտրեց Թերրի Դեյվիսին (Միացյալ Թագավորություն): Նա պատասխանատվություն է կրում Եվրոպայի խորհրդի աշխատանքային ծրագրի և բյուջեի ռազմավարական պլանավորման և ուղղորդման համար ու վերահսկում է կազմակերպության ամենօրյա կառավարումը:

Յուրաքանչյուր տարի Գլխավոր քարտուղարը նախանշում է գերակայությունները և կազմում Միջկառավարական գործունեության ծրագիրն ու այն ներկայացնում Նախարարների կոմիտեի հավանությանը: Այնուհետև նա պատասխանատու է Քարտուղարության օժանդակությամբ դա իրականացնելու համար: Միջկառավարական համագործակցության ծրագրերը հիմնականում համակարգում են Եվրոպայի խորհրդի գործունեության հիմնական ոլորտներով զբաղվող տնօրինությունները:

*Գործողությունների ռազմավարական պլան*

Գլխավոր քարտուղարը նախանշել է Եվրոպայի խորհրդի գերակայություններն ու ռազմավարությունները ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության վրա հիմնված նոր և միացյալ Եվրոպա կառուցելու և խաղաղ ու կայուն Եվրոպայի կառուցման ճանապարհին ծառացող խնդիրները լուծելու համար:

Հիմնական գերակայություններն են՝

- աշխատել անդամ պետությունների հետ համատեղ Եվրոպայի խորհրդի դերն ու պատասխանատվութունը սահմանելու համար և հստակեցնել Կազմակերպության նպատակը,
- ամրապնդել ժողովրդավարական չափանիշները և ապահովել անդամ պետությունների հարգանքը դրանց նկատմամբ,
- անվտանգությունն ու հանցագործությունները անդամ պետություններում, հատկապես՝ կոռուպցիան, փողերի լվացումը, կիբեռհանցագործությունները, մարդկանց թրաֆիկինգը և թմրանյութերի առքուվաճառքը,

- մարդու իրավունքների, ժողովրդավարության, փախստականների, սոցիալական համախմբվածության, մշակույթին ու շրջակա միջավայրին վերաբերող հատուկ ծրագրեր,
- նոր նախաձեռնություններ միջազգային ահաբեկչության դեմ պայքարում,
- պայքար խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ,
- պայքար ռասիզմի, հակասեմջտիզմի և իսլամաֆոբիայի դեմ,
- անկախ սեռական, ազգային, կրոնական կամ քաղաքական համոզմունքներից իրավահավասարության և հավասար վերաբերմունքի խթանում,
- անկախ չափերից, հարստությունից կամ աշխարհագրական դիրքից՝ բոլոր երկրների նկատմամբ արդար և հավասար վերաբերմունքի ապահովում,
- Եվրոպական միության, Միավորված ազգերի կազմակերպության, ԵԱՀԿ-ի և տարածաշրջանային ու ոչ կառավարական կազմակերպությունների հետ առավել արդյունավետ հարաբերությունների կառուցում,
- Եվրոպայի խորհրդի արդյունավետության և տեսանելիության բարձրացմանն ուղղված աշխատանքների արդյունքների գնահատում:

*Պետությունների ու կառավարությունների ղեկավարների 3-րդ գագաթաժողովի կազմակերպումն ու հետագա աշխատանքները*

Գլխավոր քարտուղարը ղեկավարեց 2005թ. մայիսին Պետությունների ու կառավարությունների ղեկավարների 3-րդ գագաթաժողովին անդամ պետությունների ուշադրությանը ներկայացված զեկույցների պատրաստումը: Գագաթաժողովը քննարկեց Եվրոպայի խորհրդի հիմնական գործունեությունը և վերահաստատեց 21-րդ դարի եվրոպական ճարտարապետության մեջ առանցքային գործընկերոջ իր դերը: Գլխավոր քարտուղարը պատասխանատու է գագաթաժողովի որոշումներն ու գործողությունների ծրագիրը կյանքի կոչելու համար:

*ինտերնետային կայք*՝ http://www.coe.int/SG

# Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես

Եվրոպայի խորհուրդը տեղական իշխանությունների ներկայացուցչության ապահովմանն ուղղված առաջին քայլը կատարեց 1957թ.: Այդ պահից սկսած տվյալ ուղղությամբ կազմակերպության գործունեությունը տարածվում է Իսլանդիայից Ռուսաստանի Դաշնություն և Նորվեգիայից մինչև Բալկաններ:

1994թ. Եվրոպայի խորհուրդը հիմնադրեց Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը՝ որպես խորհրդակցական մարմին, որը փոխարինեց նախկինում գործող Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների մշտական համաժողովին: Այն գործում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Թիվ (2000) 1 կանոնադրական որոշման դրույթների համաձայն:

*Կոնգրեսի դերը*

Կոնգրեսը

- Եվրոպայի խորհրդում արտահայտում է եվրոպական տարածքային և տեղական իշխանությունների շահերը,
- հարթակ է, որտեղ տեղական և տարածքային իշխանությունների կողմից ընտրված ներկայացուցիչները կարող են քննարկել ընդհանուր խնդիրներ, փորձ փոխանակել և կառավարություններին հայտնել իրենց տեսակետները,
- Նախարարների կոմիտեին և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովին խորհրդատվություն է տալիս տեղական և տարածքային քաղաքականության բոլոր հարցերի վերաբերյալ,
- սերտորեն համագործակցում է տեղական և տարածքային կառավարման մարմինները ներկայացնող ազգային և միջազգային կազմակերպությունների հետ,
- տեղական և տարածքային մակարդակում կազմակերպում է լսումներ և համաժողովներ հասարակության լայն շերտերի ներգրավմամբ, ինչը խիստ անհրաժեշտ է իրական ժողովրդավարության ստեղծման համար,
- կանոնավոր զեկույցներ է պատրաստում Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններում տեղական և

տարածքային մակարդակում ժողովրդավարության վերաբերյալ,

- մասնավորապես վերահսկում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կիրարկումը,
- օժանդակում է նոր անդամ պետություններին արդյունավետ տեղական և տարածքային ինքնակառավարման ստեղծման գործնական հարցերում:

*Նոր իրողություն, նոր նպատակներ*

Եվրոպայի խորհրդում նոր, միմյանցից տարբերվող քաղաքական և տնտեսական անցյալ ունեցող պետությունների մուտքը պայմանավորեց Կոնգրեսի նպատակների վերանայումն ու վերաշարադրումը, այնպես որ դրանք ներառեն՝

- աջակցություն տեղական և տարածքային արդյունավետ իշխանությունների ստեղծմանը Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետություններում, հատկապես նոր ժողովրդավարական երկրներում,
- տեղական և տարածքային ժողովրդավարության վիճակի ուսումնասիրությունը Եվրոպայի խորհրդի անդամ և անդամակցության թեկնածու պետություններում,
- քաղաքացիների՝ տեղական և տարածքային ժողովրդավարության գործընթացին արդյունավետ մասնակցություն ունենալու ձգտումներին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ նախաձեռնությունների զարգացում,
- տեղական և տարածքային իշխանության մարմինների շահերի պաշտպանություն համաեվրոպական քաղաքականության մշակման գործընթացում,
- աջակցություն տարածքային և անդրասահմանային համագործակցությանը՝ հանուն խաղաղության, հանդուրժողականության և կայուն զարգացման՝ մեր տարածաշրջաններն ապագա սերունդների համար պահպանելու նպատակով,
- Եվրատարածքների ստեղծման խրախուսում,
- տեղական և տարածքային ընտրությունների անցկացման դիտարկում:

*Երկպալատ կոնգրես*

Կոնգրեսը կազմված է երկու պալատից՝ Տեղական իշխանությունների պալատ և Տարածքային իշխանությունների պալատ: Կոնգրեսի երկու պալատների կազմի մեջ միասին մտնում են 315 անդամները և նրանց 315 տեղակալները, ընդ որում նրանցից յուրաքանչյուրը նշանակվում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում գործող ավելի քան 200 հազար տեղական կամ տարածքային կառավարման մարմինների ընտրված ներկայացուցիչներից: Կոնգրեսի Նախագահը ընտրվում է հերթականությամբ երկու պալատներից՝ նրանց անդամների կազմից՝ երկու տարի ժամկետով:

Կոնգրեսի նիստերն անց են կացվում տարին մեկ անգամ Ստրասբուրգում: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում են պատվիրակություններ եվրոպական կազմակերպություններից, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետություններ՝ որպես հատուկ հյուրեր կամ դիտորդներ:

Բոլոր ազգային պատվիրակությունների ներկայացուցիչներից կազմված մշտական կոմիտեն, որի կազմի մեջ են մտնում ներկայացուցիչներ բոլոր ազգային պատվիրակություններից, հանդիպումներ է ունենում տարբեր հանձնաժողովների հետ աշնանային և գարնանային նստաշրջանների ընթացքում՝ Կոնգրեսի լիակազմ նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում:

Կոնգրեսն իր աշխատանքը կազմակերպում է չորս կանոնադրական հանձնախմբերի շրջանակներում.

- Ինստիտուցիոնալ հանձնախումբ, որը զբաղվում է Եվրոպայում տեղական և տարածքային մակարդակներում ժողովրդավարության զարգացման վերաբերյալ զեկույցներ պատրաստելով՝ ստանալով Անկախ փորձագետների կոմիտեի աջակցությունը,
- Մշակույթի և կրթության հանձնախումբ, որը զբաղվում է զանգվածային լրատվության միջոցների, երիտասարդության, սպորտի և հասարակայնության հետ կապերի հարցերով,
- Կայուն զարգացման հանձնախումբ, որը զբաղվում է շրջակա միջավայրի պահպանության, քաղաքային և տարածական պլանավորման հարցերով,
- Սոցիալական համախմբվածության հանձնախումբ, որի իրավասության շրջանակներում են զբաղվածության, քաղաքացիության, միգրացիայի, միջհամայնքային հարաբերությունների, կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարություն և համերաշխության հարցերը:

Տարածքների պալատում գործում է նաև Օրենսդիր իշխանությամբ օժտված տարածքների հատուկ աշխատանքային խումբ:

Կոնգրեսի գործադիր տնօրենը պատասխանատու է բյուջեի կառավարման և Կոնգրեսի քարտուղարության մոտ 40 աշխատակիցների ղեկավարման համար:

## Գործնական օգնություն

*Տեղական և տարածքային իշխանությունների ուսուցողական կազմակերպությունների եվրոպական ցանց*

Այս ցանցը փորձագիտական աջակցության և ուսուցման միջոցով օգնություն է տրամադրում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին, որոնք կառավարման փորձի և տեխնիկական հմտությունների կարիք ունեն: Տեղական և տարածքային իշխանությունների ուսուցողական կազմակերպությունների եվրոպական ցանցը (ENTO) խթանում է տեղական և տարածքային իշխանությունների ուսուցողական կենտրոնների միջև համագործակցությունը և ապահովում ազգային կազմակերպությունների սերտ հարաբերություններն այլ երկրների իրենց գործընկերների հետ:

Գոյություն ունի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում տեղական և տարածքային ժողովրդավարության օժանդակության հատուկ ծրագիր: Այս ծրագիրն առաջնություն է տալիս տեղական ինքնակառավարման օրենսդրության ստեղծման գործում: Այն առաջարկում է ուսուցանում և փորձագիտական աջակցություն տեղական ինստիտուցիոնալ բարեփոխումներում և ներառում է սեմինարներ, ուսուցողական այցեր, քաղաքներում առողջապահության, ֆինանսական անկախության և տեղական ինքնակառավարման ֆինանսավորման վերաբերյալ դասընթացներ:

*Տեղական ժողովրդավարության գործակալություններ*

Այս գործակալությունները ստեղծվել են 1993թ. որպես նախկին Հարավսլավիայում խաղաղության գործընթացի մաս և ընկերակցության հիմք են ծառայում տվյալ տարածքի իշխանության և Եվրոպայի այլ տեղական իշխանությունների միջև: Դրանք խթանում են մարդու իրավունքների և ժողովրդավարության նկատմամբ հարգանքը, անդրսահմանային համագործակցությունը, միջմշակութային երկխոսությունը և տեղական զարգացումը:

*Մասնակցություն «Կայունություն հարավարևելյան Եվրոպայի համար» պակտին*

Կոնգրեսն ակտիվ դերակատարություն ունի հարավարևելյան Եվրոպայում տեղական ժողովրդավարության ամրապնդման և անդրսահմանային համագործակցության վերաբերյալ ծրագրերում: Այս նպատակով այն ստեղծել է Հարավարևելյան Եվրոպայի տեղական և տարածքային ներկայացուցիչների ժամանակավոր աշխատանքային խումբ, որի խնդիրն է Կայունության պակտի շրջանակներում գործունեության ծավալումը:

Խումբն աջակցում է՝

- հարավարևելյան Եվրոպայի քաղաքների և շրջանների ամենամյա համաժողովների կազմակերպմանը,
- հարավարևելյան Եվրոպայի տեղական իշխանությունների ազգային ընկերակցությունների ցանցի զարգացմանը,

- հարավարևելյան Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների հետ գործընկերության վերաբերյալ ինտերակտիվ տվյալների բազայի ստեղծումը,
- հարավարևելյան Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցության վերաբերյալ քաղաքականության մշակմանը:

*Քաղաքականության մշակմանն աջակցելու հսկակ օրենսդրական ուղենիշեր*

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (1985թ.) շեշտում է այն սկզբունքը, համաձայն որի արդյունավետ տեղական ինքնակառավարումը կենսական է ժողովրդավարության համար: Խարտիան ծառայում է որպես ուղեցույց նոր ժողովրդավարական երկրներում օրենսդրական բարեփոխումների համար: Որոշ պետություններ իրենց սահմանադրություններում արդեն ընդգրկել են դրա սկզբունքները:

Տարածքային համայքների կամ իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիան (1980թ.) և նրա երկու լրացուցիչ արձանագրությունները հաստատում են տեղական և տարածքային իշխանությունների անդրսահմանային համագործակցության իրավունքը հանրային ծառայությունների և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

*Տեղական մակարդակում հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին եվրոպական կոնվենցիան* (1992թ.) առաջ է քաշում երկրում բնակվող օտարերկրացիներին քաղաքացիական և քաղաքական իրավունքներ տրամադրելու սկզբունքը՝ ներառյալ քվեարկելու իրավունքը:

*Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական խարտիան* (1992թ.) նպատակ է հետապնդում պահպանել տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուները՝ որպես Եվրոպայի մշակութային ժառանգության եզակի բաղադրիչ՝ տարածելով դրանց կիրառումը օրենքներում, դպրոցներում, պետական, մշակութային, տնտեսական և հասարակական կյանքում և մամուլում:

*Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիան* (2000թ.) պարտավորեցնում է իշխանության պետական մարմիններին տեղական, տարածքային, ազգային և միջազգային մակարդակներում ընդունել ամբողջ Եվրոպայի լանդշաֆտների պահպանմանը, կառավարմանն ու պլանավորմանն ուղղված ծրագրեր և միջոցներ:

*Եվրոպական քաղաքային խարտիան* (1992թ.) սահմանում է

Եվրոպայի քաղաքներում քաղաքացիների իրավունքները: Այն տրամադրում է քաղաքների ճիշտ կառավարման գործնական ուղենիշեր՝ ներառելով բնակելի շենքերը, քաղաքային ճարտարապետությունը, տրանսպորտը, էներգիան, սպորտն ու ազատ ժամանցը, աղտոտումն ու փողոցների անվտանգությունը:

*Տեղական և տարածքային մակարդակում երիտասարդների մասնակցության խարտիան* (1992թ.), որը վերանայվել է 2003թ., ուղենիշներ է առաջարկում երիտասարդներին՝ խրախուսելով նրանց դերակատարությունը և ակտիվ ներգրավվածությունը որոշումների կայացմանը, ինչպես նաև նրանց մասնակցությունն իրենց բնակության վայրերում, թաղային համայնքներում կամ տարածքներում իրենց վերաբերող սոցիալական փոփոխություններին:

*Ընթացիկ ծրագրերը*

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ներկայումս ուսումնասիրում է մի շարք փաստաթղթեր.

- Լեռնային շրջանների խարտիայի նախագիծը, որն ուղենիշներ է առաջարկում լեռնային շրջաններում զարգացման միտումների ու բնության պահպանության ներդաշնակեցման վերաբերյալ,
- Տարածքային ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի նախագիծը, որը լրացնում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան,
- Քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին խարտիայի նախագիծը:

*Անդամ պետությունների ու նրանց ներկայացչությունը*

Ադրբեջան (6), Ալբանիա(4), Անդորրա (2), Ավստրա (6), Բելգիա (7), Բոսնիա և Հերցեգովինա (5), Բուլղարիա (6), Գերմանիա (18), Դանիա (5), Էստոնիա (3), Թուրքիա (12), Իսպանիա (12), Իռլանդիա(4), Իտալիա (18), Իսլանդիա(3), Լյուքսեմբուրգ (3), Լատվիա (3), Լեհաստան (12), Լիխտենշտեյն (2), Լիտվա (4), Խորվաթիա (5), Կիպրոս (3), Հայաստան (4), Հունգարիա (7), Հունաստան (7), Մալթա (3), Մոլդովա (5), Միացյալ Թագավորություն (18), Մոնակո (2), Նորվեգիա (5), Նիդեռլանդներ (7), «Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետություն» (3), Շվեյցարիա (6), Շվեդիա (6), Չեխիայի Հանրապետություն (7), Պորտուգալիա (7), Ռուսաստանի Դաշնություն (18), Ռումինիա (10), Սլովակիա (5), Սլովենիա (3), Սան-Մարինո (2), Սերբիա (7), Վրաստան (5), Ուկրաինա (12), Ֆինլանդիա (5), Ֆրանսիա (18):

*Ինտերնետային կայք*՝ http://coe.int/cplre

# Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների համաժողով

Եվրոպայի խորհրդի գործունեությունը էապես շահում է ստանում ՈԿԿ-նե-րով ներկայացված հասարակության դինամիկ տարրերի հետ շփումների և համագործակցության արդյունքում: Այսօր կազմակերպության առջև դրված խնդիրներից մեկն է անդամ պետություններում գործող ՈԿԿ-ների և քաղաքացիական հասարակության ամրապնդումն ու համաեվրոպական շրջանակներում մասնակցային ժողովրդավարության զարգացումը: Եվրոպայի խորհրդի համագործակցության ծրագրերը ապավինում են գործընկեր ՈԿԿ-ներին և կենտրոնանում ժողովրդավարական բարեփոխումներին:

*Եվրոպայի խորհրդի ՄՈԿԿ համաժողովը*

Եվրոպաի խորհրդի միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովը (ՄՈԿԿ) կազմված է Եվրոպայի խորհրդում մասնակցային կարգավիճակ ունեցող ՄՈԿԿ-ներից: Այս կարգավիճակի միջոցով Եվրոպայի խորհուրդը ՄՈԿԿ-ներին ընդգրկում է միջպետական ծրագրերում և խրախուսում կարևոր հասարակական խնդիրների վերաբերյալ խորհրդարանականների, տեղական և տարածքային իշխանությունների և հասարակական կազմակերպությունների միջև երկխոսությունը:

*Խորհրդակցական և մասնակցային կարգավիճակ*

1952թ. ի վեր ՄՈԿԿ-ներին հնարավորություն էր ընձեռնված Եվրոպայի խորհրդում ստանալ խորհրդակցական կարգավիճակ: 2003թ. նոյեմբերին Եվրոպայի խորհրդի՝ քաղաքականության մշակման գործընթացում միջազգային ՈԿԿ-ների նշանակությունը ընդունելով դրանց շնորհվեց մասնակցային կարգավիճակ: Այս կարգավիճակը սահմանվում է Նախարարների կոմիտեի (2003)8 բանաձևով: Նման կարգավիճակ ձեռք բերել ցանկացող ՄՈԿԿ-ները հատկապես պետք է ներկայացված լինեն իրենց համապատասխան ոլորտներում և պետք է կիսեն Եվրոպայի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նպատակներն ու ակտիվորեն աջակցեն Կազմակերպության աշխատանքներին: Նրանք կազմում են Եվրոպայի խորհրդի ՄՈԿԿ-ների համաժողովը, որը գումարվում է տարին մեկ անգամ՝ գործողությունների ընդհանուր ուղղությունը որոշելու նպատակով:

*Կապի կոմիտե*

Համաժողովի կողմից ընտրված Կապի կոմիտեն պարբերաբար հանդիպումներ է գումարում՝ Եվրոպայի խորհրդի քարտուղարության և ՄՈԿԿ-ների միջև մշտական երկխոսություն և համագործակ-

ցություն ապահովելու համար: Այն սերտ կապեր է պաշտպանում Եվրոպայի խորհրդի քաղաքական մարմինների՝ Նախարարների կոմիտեի, Խորհրդարանական վեհաժողովի, Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի և Մարդու իրավունքների հանձնակատարի հետ:

*Խմբավորումները*

Մասնակցի կարգավիճակ ունեցող ՄՈԿԿ-ները հիմնել են տաս թեմատիկ Խմբավորումներ, որոնք հանդիպում են տարին երեք անգամ Խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանների ժամանակ: Այդ թեմատիկ ուղղություններն են՝ մարդու իրավունքներ, գենդերային հավասարություն, Եվրոպական սոցիալական խարտիա և սոցիալական քաղաքականություն, ծայրահեղ աղքատություն և սոցիալական համախմբվածություն, կրթություն և մշակույթ, քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարությունը Եվրոպայում, առողջապահություն, գյուղաբնակ վայրեր և շրջակա միջավայր, քաղաքներ, Հյուսիս-հարավ երկխոսություն և համերաշխություն: Խմբավորումները մշտապես երկխոսություն են պահպանում Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչների հետ՝ ստանալով թարմ տեղեկատվություն Եվրոպայի խորհրդի ծրագրերի վերաբերյալ և ներդնելով իրենց հավաքական հմտությունները դրանց իրականացմանը:

*Համագործակցության տարբեր ձևեր*

ՄՈԿԿ-ների հետ համագործակցությունը բազմաթիվ ձևեր ունի. պարզ խորհրդատվությունից մինչև կոնկրետ ծրագրերում աքողջական համագործակցություն: ՄՈԿԿ փորձագետները կարող են մասնակցել տարբեր ծրագրերին որպես խորհրդատուներ, նրանք կարող են մասնակցել միջկառավարական կոմիտեների աշխատանքներին ինստիտուցիոնալացված կամ ժամանակավոր հիմունքներով, Գլխավոր քարտուղարին ուղղված հուշագրեր պատրաստել, բանավոր կամ գրավոր ուղերձներ հղել Խորհրդարանական վեհաժողովի ու Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնաժողովներին, ինչպես նաև մասնակցել Եվրոպայի խորհրդի կազմակերպած սեմինարներին և այլ հանդիպումներին: Մասնակցի կարգավիճակ ունեցող ՄՈԿԿ-ները նաև զբաղվում են Եվրոպայի խորհրդի նպատակների և ծրագրերի մասին տեղեկատվության տարածմամբ:

2003թ. նոյեմբերին, միջազգային ՈԿԿ-ների համար նախատեսվող մասնակցային կարգավիճակին ավելացավ Եվրոպայի խորհրդի և տեղային ՈԿԿ-ների միջև գործընկերության վերաբերյալ (2003)9 բանաձևը, որն արտացոլում է տեղային ՈԿԿ-ների կարևոր դերը բոլոր անդամ պետություններում ժողովրդավարական և բաց հասարակության ամրապնդման գործում և նրանց կառուցողական ներդրումը Եվրոպայի խորհրդի աշխատանքային ծրագրին:

*Ինտերնետային կայք*՝ http://www.coe.int/ngo

# Մարդու իրավունքներ. դրանց պաշտպանությունը, խթանումը և խախտումների կանխարգելումը

Եվրոպայի խորհրդի հիմնական նպատակներից մեկը հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ միջոցների ամենօրյա որոնումը, ինչն իր արտացոլումն է գտնում կազմակերպության գործունեության չորս հիմնական ուղղություններում.

- հիմնարար իրավուքների և ազատությունների արդյունավետ վերահսկում և պաշտպանություն,
- մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության դեմ ուղղված նոր սպառնալիքների հայտնաբերում,
- մարդու իրավունքների կարևորության մասին հասարակական իրազեկության բարձրացում,
- մարդու իրավունքների կրթության և մասնագիտական պատրաստվածության խթանում:

Այս ոլորտում առավել կարևոր պայմանագրերի թվին են պատկանում Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիան, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան, Խոշտանգումների և անմարդկայի կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան:

## Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան

*Վճռական քայլ դեպի առաջ*

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան հանդիսանում է Եվրոպայի խորհրդի ամենանշանակալից ձեռքբերումներից մեկը: Այն իր կարևորությամբ աննախադեպ միջազգային պայմանագիր է, որն ընդունվել է 1950թ. և ուժի մեջ մտել 1953թ.: Կոնվենցիան պարունակում է իրավունքների և ազատություններ, որոնք պետությունները պարտավորվում են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող յուրաքանչյուրի համար: Համաձայն կոնվենցիային ստեղծվել է այդ իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմ, որի միջոցով պետությունները, ինչպես

նաև անհատները, անկախ քաղաքացիությունից, կոնվենցիան ստորագրած պետությունների կողմից կոնվեցիայի դրույթների ենթադրյալ խախտումների դեպքում կարող են դիմել Ստրասբուրգում տեղակայված համապատասխան դատական հաստատություններ, որոնք ստեղծվել են կոնվենցիայի համաձայն:

Կոնվենցիան երաշխավորում է հետևյալ իրավունքները՝ կյանքի, խոշտանգումներից և անմարդկային վերաբերմունքից պաշտպանության, ազատության և անվտանգության, արդար դատավարության, անձնական և ընտանեկան կյանքի հանդեպ հարգանքի, ինչպես նաև ազատ նամակագրության, կարծիքի, մտքի, խղճի, կրոնի (ներառյալ՝ մամուլի) ազատությունը, խաղաղ հավաքներին և միավորումներին մասնակցելու իրավունքները: Հետագայում լրացուցիչ արձանագրություններն ընդլայնեցին թվարկված իրավունքների շարքը, օրինակ՝ թիվ 6 արձանագրությամբ վերացվեց մահապատիժը:

*Կոնվենցիայի կիրառումը*

Ի սկզբանե կիրառման մեխանիզմը իրականացվում էր երկու հաստատությունների միջոցով՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (1954թ.), որը հիմնականում կատարում էր զտող մարմնի դեր և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (1959թ.), որը որոշումներ էր կայացնում հանձնաժողովի կամ անդամ պետությունների կառավարությունների ներկայացրած գործերի վերաբերյալ: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն (որը ներկայացնում է կազմակերպության անդամ պետությունների կառավարությունները) վերահսկում էր դատարանի կայացրած որոշումների կատարումը և որոշումներ կայացնում, որպեսզի դատարանի քննարկմանը հանձնվեն այն գործերը, որոնցում հանձնաժողովի կարծիքով տեղ են գտել մարդու իրավունքների խախտման փաստեր:

80-ական թվականների սկզբից դիմումներ քանակը մշտապես աճում էր՝ ողողելով դատարանը և երկարաձգելով գործերի քննության տևողությունը, որ երբեմն դիմումի հանձման պահից մինչև վերջնական վճիռ կայացնելը տևում էր 5 տարի:

*Մշտապես զարգացող համակարգ*

Դիմումների քանակի և նրանց բարդության, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի կազմի ընդլայնման (1989թ. մինչև 1996թ. պետությունների թիվը 23-ից հասավ 40-ի) արդյունքում առաջացավ դատարանի ընթացակարգային բարեփոխումների անհրաժեշտություն: Այդ նպատակով ընդունվեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից թիվ 11 արձանագրությունը, որն ուժի մեջ մտավ 1998թ. նոյեմբերի 1-ին: Համաձայն դրա ստեղծվեց մեկ մշտապես գործող դատարան՝ նախկինում կոնվենցիայի համաձայն գործող երկու հաստատությունների փոխարեն:

*Մարդու իրավունքների բացառիկ դատարան*

Անհատներն այսօր անմիջականորեն կարող են դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, որի որոշումները պարտադիր են կոնվեցիան ստորագրած բոլոր պետությունների համար: Այն մշտապես գործող մարմին է, և նրա իրավասության շրջանակներում են ինչպես գործերի նախնական քննարկումը, այնպես էլ ըստ էության որոշումների կայացումը:

Դատարանը կազմված է դատավորներից, որոնց թիվը համապատասխանում է կոնվենցիան ստորագրած պետությունների թվին: Դատավորներին ընտրում է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը՝ յուրաքանչյուր պետության կողմից առաջարկված երեքական թեկնածուների ցուցակից: Դատավորներն իրենց պարտականությունները կատարելիս վայելում են լիակատար անկախություն և չեն ներկայացնում իրենց առաջադրող պետությունների շահերը: Ներկայումս դատարանի նախագահն է Լուցիուս Վիլդհաբերը (Շվեյցարիա):

Բոլոր այն գործերը, որոնք անվիճելիորեն չեն բավարարում վարույթ ընդունվելու պայմաններից մեկը (օրինակ՝ նախնառաջ ազգային մակարդակում առկա համապատասխան իրավական միջոցները սպառելու պարտավորությունը) կամ պարզապես հիմնավորված չեն, դուրս են գալիս դատարանի վարույթից վաղ փուլերում երեք դատավորներից բաղկացած հանձնաժողովի կայացրած միաձայն որոշման համաձայն: Այլ դեպքերում դատարանը որոշումներ է կայացնում պալատի նիստի ժամանակ՝ յոթ դատավորների մասնակցությամբ: Դիմումի ընդունելության մասին որոշում կայացնելուց հետո Պալատը նախ փորձում է հասնել կողմերի միջև վեճի բարեկամական կարգավորմանը: Եթե այդ փորձը չի հաջողվում, Պալատը կայացնում է իր որոշումը:

Առանձին բարդ դեպքերում, երբ խոսքը վերաբերում է Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի մեկնաբանությանը կամ կիրառմանը, գործը քննարկման համար կարող է փոխանցվել Մեծ պալատ, որի նիստին մասնակցում են տասնյոթ դատավոր, կամ Պալատի կողմից հարցի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելուց առաջ, կամ կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ Պալատի կողմից որոշումը ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում: Պալատի որոշումները վերջնական են դառնում նրանց կայացումից հետո երեք ամիս հետո, իսկ Մեծ պալատի կայացրած որոշումներն ի սկզբանե կրում են վերջնական բնույթ: Դատարանի որոշումներն ենթակա են համապատասխան պետությունների կողմից պարտադիր կատարման:

Դատարանի կայացրած որոշումների կատարման վերահսկումը Նախարարների կոմիտեի խնդիրն է: Այն նաև պետք է ապահովի պետությունների կողմից ընդհանուր միջոցառումների ձեռ-

նարկումը, որոնք կկանխեն հետագայում նման խախտումները (օրենսդրության փոփոխություն, նախադեպային իրավունք, կանոններ կամ պրակտիկա): Նախարարների կոմիտեն նաև պետք է ապահովի տուժածի կրած վնասի լիակատար փոխհատուցումը, իսկ որոշակի դեպքերում այդ նպատակով այլ կոնկրետ միջոցների ձեռնարկումը (գործի վերանայում, արգելանքի կամ բռնագրավման մասին որոշման չեղյալ հայտարարում, ոստիկանական գրանցումից հանում, կամ երկրում բնակվելու համար թույլտվության տրամադրում):

*Հարցերի լայն շրջանակ*

Անհատական բողոքները շոշափում են խնդիրների անընդհատ աճող շրջանակ.

- մարդկանց անհայտ կորելը և նրանց սպանությունները,
- ազատազրկվածների հետ դաժան վերաբերմունքն ու խոշտանգումները,
- ազատությունից կամայական զրկումը,
- դատարան դիմելու հնարավորության բացակայությունը,
- օրենքով սահմանված ժամկետներում արդար դատաքննության բացակայությունը,
- հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը,
- տեղահանությունն ու արտաքսումը,
- համասեռականների նկատմամբ խտրականությունը,
- մամուլի ազատությունը,
- խնամքի տակ վերցված երեխաների ծնողների իրավունքները,
- սեփականության իրավունքի սահմանափակումը,
- քաղաքական կուսակցությունների լուծարումը:

*Հետագա բարեփոխումները*

Դատարան ուղղված բողոքների աճող քանակի հետևանքով բարեփոխման գործընթացը շարունակվեց՝ հանգելով թիվ 14 արձանագրության ընդունմանը: Այս արձանագրությունը, որն ուժի մեջ կմտնի, երբ այն կվավերացնեն կոնվենցիան ստորագրած բոլոր պետությունները, նվազեցնում է դատարանի ներգրավվածության մակարդակը ամենահստակ գործերի քննարկման դեպքում: Արդեն մեկ դատավոր իրավունք կունենա որոշում կայացնել բողոքի վարույթ ընդունելու անհամապատասխանելիության մասին այն դեպքերում, երբ դա հստակ է (ներկայումս գործող երեք դատավորներից բաղկացած հանձնաժողովի փոխարեն) և երեք դատավորներից բաղկացած հանձնաժողովն իրավունք կունենա վարույթ ընդունել և որոշումներ կայացնել միանման և կրկնվող գործերի դեպքում, գործառույթ, որը ներկայումս իրականացվում է յոթ դատավորներից կազմված Պալատի կողմից: Ի լրումն, արձանագրությունը, առաջ է քաշում էական անբարենպաստ վի-

ճակի հասկացությունը, որը թույլ կտա դատարանին չընդունել գործը վարույթ, եթե դիմումատուն չունի նման անբարենպաստ վիճակ: Այնուամենայնիվ, այն կարող է դա անել, եթե մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը չի պահանջում գործի լիակատար քննություն և եթե բողոքը պատշաճ կերպով քննության էր ենթարկվել ներպետական մակարդակում գործող դատական ատյանի կողմից:

## Եվրոպական սոցիալական խարտիան

Վերանայված եվրոպական խարտիան սահմանում է իրավունքներն ու ազատությունները և այն վերահսկման կարգը, որն ապահովում է անդամ պետությունների դրա դրույթների կատարումը: 1996թ. վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան ուժի մեջ մտավ 1999թ. և աստիճանաբար զբաղեցնում է 1961թ. պայմանագրի տեղը:

Խարտիան իրավունքներ է սահմանում բոլոր եվրոպացիների համար, որոնք ներգործում են առօրյա կյանքի բոլոր ոլորտներին, ներառյալ` բնակարանային խնդիրներին, առողջապահությանը, կրթությանը, զբաղվածությանը, սոցիալական պաշտպանվածությանը, անձնական ճանապարհորդություններին և խտրականության բացառմանը:

*Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե*

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն (ՍԻԵԿ) վերահսկում է Խարտիայում ամրագրված դրույթների իրականացումը անդամ պետությունների կողմից: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընտրում է կոմիտեի տասնիինգ անկախ և անկանխակալ անդամներին վեց տարի ժամկետով, ինչը կարող է մեկ անգամ երկարաձգվել նույն ժամկետով: ՍԻԵԿ-ը որոշում է, թե արդյոք Խարտիային միացած երկրներում օրենքն ու դրա կիրառումը համապատասխանում են Խարտիայի պահանջներին:

*Ազգային զեկույցների վրա հիմնված դիտարկման ընթացակարգը*

Խարտիային միացած պետությունները ամեն տարի զեկույց են ներկայացնում Խարտիային համապատասխան օրենքների կատարման և քաղաքականության իրականացման վերաբերյալ: Ամեն տարի ՍԻԵԿ-ը քննում է զեկույցները, որոշում, թե արդյոք այդ ընթացակարգերը համապատասխանում են Խարտիային և հրապարակում իր եզրահանգումները: Եթե պետությունը չի արձագանքում ՍԻԵԿ-ի որոշմանը, Նախարարների կոմիտեն այդ պետությանը հանձնարարական է ուղղում նրա օրենքների կամ իրականացրած քաղաքականության փոփոխման վերաբերյալ:

*Կոլեկտիվ բողոքների համակարգ*

1995թ. ստորագրությունների համար բաց հայտարարված և 1998թ. ուժի մեջ մտած արձանագրությամբ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեին կարելի է ուղղել Խարտիայի

դրույթների ոտնահարման վերաբերյալ բողոքներ:

*Կազմակերպություններ, որոնք իրավունք ունեն բողոքներ հղել ՍԻԵԿ-ին*

- Եթե բոլոր պետությունները համաձայնել են այդ ընթացակարգին,

Արհմիությունների եվրոպական համադաշնությունը (ԱԵՀ), Եվրոպայի արդյունաբերողների և գործատուների միությունը (ԵԱԳՄ) և Գործատուների միջազգային կազմակերպությունը (ԳՄԿ),

Ոչ կառավարական կազմակերպությունները (ՈԿԿ), որոնք Եվրոպայի խորհրդում ունեն խորհրդակցական կարգավիճակ այդ նպատակով նշված են Կառավարական հանձնաժողովի ցուցակում,

Համապատասխան երկրի գործատուների կազմակերպություններն ու արհմիությունները,

- եթե կա պետության համաձայնությունը,

Ազգային մակարդակում գործող ՈԿԿ-ները:

ՍԻԵԿ-ը քննում է բողոքները և պահանջներին համապատասխանելու դեպքում դրանք ընդունում վարույթ: Վարույթ ընդունելուն հաջորդում է գրավոր ընթացակարգ. այս փուլում փոխանակվում են հուշագրեր, և ՍԻԵԿ-ը կարող է հասարակական լսումներ հրավիրել: Այնուհետև ՍԻԵԿ-ը որոշում է կայացնում ըստ գործի էության և Նախարարների կոմիտեին ու շահագրգիռ կողմերին զեկուցում է քննության արդյունքների մասին: Որոշում կայացնելուց չորս ամիս անց զեկույցը հրապարակվում է: Այնուհետև Նախարարների կոմիտեն բանաձև է ընդունում: Անհրաժեշտության դեպքում բանաձևը կարող է տվյալ պետության օրենքներն ու իրականացվող քաղաքականությունը Խարտիայի սկզբունքներին համապատասխանեցնելուն ուղղված հատուկ միջոցառումներ առաջարկել:

*Խարտիայի ազդեցությունը պարբեր պետություններում*

Դիտարկման համակարգի արդյունքում անդամ պետությունները բազմաթիվ փոփոխություններ են ներմուծում օրենսդրության կամ իրականացվող քաղաքականության մեջ: Երկրների վերաբերյալ մանրամասներն ու ներկա զարգացումները հրապարակվում են հետևյալ ինտերնետային կայքում՝

http://www.coe.int/T/E/Human Rights/ESC

## Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոնվենցիա

*Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելում*

Մենք քիչ տեղեկություններ ունենք այն մասին, թե ինչ է կատարվում բանտերի, ոստիկանական տեղամասերի, հոգեբուժական հաստատությունների և այլ նման հիմնարկությունների փակ դռների հետևում: Այդ պատճառով է, որ 1987թ. ընդունվեց և 1989թ. ուժի մեջ մտավ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան: Այս կոնվենցիան լրացնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային շրջանակում առկա պաշտպանական մեխանիզմները՝ հիմնադրելով Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ):

Կոմիտեն կազմված է անկախ և անկողմնակալ փորձագետներից, որոնք ներկայացնում են տարբեր մասնագիտություններ և գործունեության ոլորտներ, այդ թվում՝ իրավաբաններ, բժիշկներ և բանտերի կամ ոստիկանության հարցերով մասնագետներ:

*Այցեր*

ԽԿԿ-ն այցելում է ազատազրկման վայրեր (բանտեր, անչափահասների պահման կենտրոններ, ոստիկանական տեղամասեր, ներգաղթողների ճամբարներ և հոգեբուժական հաստատություններ), որպեսզի ծանոթանա այն պայմաններին, որոնցում ապրում են ազատությունից զրկված մարդիկ: Կոմիտեն օգտվում է ազատազրկման վայրեր անսահմանափակ այցելության և ազատազրկված անձանց հետ առանց վկաների ազատ շփման իրավունքից: Այն նաև անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար իրավունք ունի դիմելու ցանկացած անձի, ներառյալ՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունները (ՈԿԿ):

Կոմիտեի նպատակն է ամրապնդել հնարավոր խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատազրկված անձանց պաշտպանությունը և ոչ թե խախտումների հայտնաբերման դեպքում պետությունների հանդեպ մեղադրանքների առաջադրումը: Ամեն այցից հետո ԽԿԿ-ն կազմում է զեկույց որտեղ ներառում է իր հետազոտություններն ու հանձնարարականները, որոնք անհրաժեշտ են ազատազրկված անձանց պայմանները բարելավելու համար: Այս գաղտնի բնույթի զեկույցն ուղարկվում է համապատասխան պետությանը: Զեկույցը պետությունից գրավոր արձագանքի խնդրանք է ներառում, որում ներկայացված կլինեն հանձնարարականների իրականացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, արված դիտարկումների վերաբերյալ պետության վերաբերմունքը և տեղեկատվության տրամադրման վերաբերյալ

հարցապնդումների պատասխանները:

ԽԿԿ զեկույցներն ու պետությունների պատասխանները գաղտնի բնույթ ունեն, սակայն պետությունները որպես կանոն համաձայնում են դրանց հրապարակմանը:

Բացառիկ դեպքերում ԽԿԿ-ն կարող է հայտարարությամբ հանդես գալ, եթե տվյալ պետությունը չի ցանկանում համագործակցել:

## Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա

*Ազգային փոքրամասնությունների պարկանող անձանց պաշտպանություն*

1993թ. Վիեննայի գագաթաժողովից հետո Եվրոպայի խորհուրդը 1994թ. ընդունեց Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան՝ առաջին իրավական ուժ ունեցող բազմակողմ պայմանագիրը, որն ուղղված է ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը: Կոնվենցիայի կողմերը պարտավորվում են իրականացնել կոնվենցիայի նպատակները ներպետական օրենսդրության և քաղաքականության միջոցով: Դա ներառում է օրենքի առջև հավասարության ապահովումը, մշակույթների պահպանությունն ու զարգացումը, ինքնության, կրոնների, փոքրամասնությունների լեզուների և սովորույթների պաշտպանությունը, մամուլի հասանելիության ապահովումը և անդրսահմանային ազատ խաղաղ հարաբերությունների հաստատումը:

Կոնվենցիան ուժի մեջ մտավ 1998թ. փետրվարի 1-ին: Կոնվենցիայի կողմ պետությունները պետք է զեկույց ներկայացնեն կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում ձեռնարկված քայլերի մասին, իսկ այնուհետև պետք է զեկույց են յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Շրջանակային կոնվենցիայի մոնիտորինգին մասնակցում են Նախարարների կոմիտեն և 18 փորձագետներից բաղկացած Խորհրդատվական կոմիտեն: Խորհրդատվական կոմիտեն գնահատում է վերոհիշյալ զեկույցները, որոշում արդյոք ստանձնած պարտավորությունները կատարվել են և կարծիք ընդունում: Սա փոխանցվում է Նախարարների կոմիտեին, որն ընդունում է եզրափակիչ դրույթներ և հանձնարարականներ պարունակող բանաձև: Մոնիտորինգային ընթացակարգը կարգավորող կանոնները թույլ են տալիս, որ ոչ կառավարական կազմակերպություններն ու փոքրամասնությունների ընկերակցությունները ներկայացնեն այլընտրանքային տեղեկատվություն և/կամ ստվերային զեկույցներ:

## Ազգային  փոքրամասնությունները Եվրոպայում

Եվրոպայի խորհուրդը, որպես իր համագործակցության և աջակցության ծրագրի մի մաս , մշակել է ազգային փոքրամասնությունների պաշտպանությանն ուղղված գործողությունների շարք: Այն կազմակերպում է հանդիպումներ, որպեսզի մանրամասն տեղեկություններ հայտնի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի մասին (ինչպես նաև եվրոպական այլ կոնվենցիաների մասին) և խրախուսում կոնվենցիայի կողմ չհանդիսացող երկրներին ստորագրել և վավերացնել այն:
Կոնվենցիայի կողմ պետությունները մասնակցում են այս հանդիպումներին` ներքին զարգացումներն ու Կոնվենցիայի դրույթների կատարումը մանրամասնորեն քննարկելու համար: Պատվիրակների կազմում են լինում խորհրդարանականներ, կառավարության պաշտոնյաներ և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Եվրոպայի խորհրդի փորձագետները կարծիքներ են հայտնում ազգային փոքրամասնությունների պաշտպանությանն ուղղված օրենսդրության վերաբերյալ և կազմակերպում դասընթացներ պետական զեկույցները կազմելու վերաբերյալ` նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնել վերահսկման ընթացակարգը:

2004թ. նոյեմբերի 3-ին Նախարարների տեղակալները որոշում կայացրեցին Ազգային փոքրամասնությունների պաշտպանության խնդիրներով զբաղվող փորձագետների կոմիտեի (DH-MIN) վերաակտիվացման վերաբերյալ: DH-MIN-ի լիազորությունները ներառում են համագործակցություն այլ միջազգային կազմակերպությունների հետ և նրանց մասնակցությունը կոմիտեի աշխատանքներին:

## Ռասիզմի և անհադուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով (ՌԱԵՀ/ECRI)

*Պայքար ռասիզմի և անհանդուրժողականության դեմ*

ՌԱԵՀ հիմնադրվել է 1993թ. Վիեննայի գագաթաժողովում: Այն անկախ դիտարկման մեխանիզմ է, որի նպատակն է մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից պայքարել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ: ECRI-ի գործողությունները ներառում են այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, ազգության և ազգային կամ էթնիկ ծագման հիմքերով անձանց կամ անձանց խմբի դեմ ուղղված բռնության, խտրականության, կանխակալության դեմ պայքարելու համար:

ՌԱԵՀ-ի գործողությունների ծրագիրը բաղկացած է երեք

սկզբունքներից՝ անհատական մոտեցում յուրաքանչյուր երկրին, ընդհանուր խնդիրներին ուղղված աշխատանք, կապ քաղաքացիական հասարակության հետ:

Անհատական մոտեցման շրջանակներում ՌԱԵՀ-ին կազմում է զեկույցներ, որոնք պարունակում են Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությունում ռասիզմի և ռասայական խտրականության վերաբերյալ դրության խորքային վերլուծություններ և պրակտիկ առաջարկներ՝ կառավարություններին նշված խնդիրների հաղթահարման գործում աջակցելու համար:

Որպես իր ընդհանուր թեմաների վերաբերյալ աշխատանքի մաս ՌԱԵՀ ընդունել է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կառավարություններին ուղղված ինը ընդհանուր բնույթի հանձնարարականներ: Դրանք վերաբերում են ռասիզմի և անհանդուրժողականության դեմ ներկայումս ընթացող պայքարի հիմնական ուղղություններին և տալիս համապարփակ ազգային քաղաքականություն մշակելու հիմնական ուղենիշեր:

ՌԱԵՀ-ի քաղաքացիական հասարակության հետ աշխատանքի գործողությունների ծրագիրը նպատակ ունի լիովին ընդգրկել քաղաքացիական հասարակությունը ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարում և խթանել հասարակության տարբեր մասերի փոխադարձ հարգանքի վրա հիմնվախ միջմշակութային երկխոսությունը:

*Կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարության խթանումը*

Մարդկանց իրավունքներ պաշտպանության և խթանման ընդհանուր տեսանկյունից Եվրոպայի խորհուրդը պայքարում է կանանց ազատության և արժանապատվության դեմ ցանկացած ոտնձգություններից: Դա ներառում է կանանց դեմ ուղղված բռնությունը, սեռական կամ շահագործման այլ նպատակով մարդկանց թրաֆիկինգը, սեռական խտրականության վերացումը, հասարակական և քաղաքական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարակշիռ մասնակցությունը և գենդերային գործոնի բոլոր ծրագրերում և գործողություններում ներառելու քաջալերումը:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեն (CDEG) կազմակերպում է նախարարական համաժողովներ, սեմինարներ և այս խնդիրների վերաբերյալ հրապարակումներ իրականացնում:

Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին կոնվենցիա

*Մարդկային էակը վաճառքի ենթակա չէ*

Ամեն տարի հազարավոր կանայք, երեխաներ և տղամարդիկ թրաֆիկինգի զոհ են դառնում՝ սեռական կամ այլ տիպի շահա-

գործման ենթրկվելով, ինչը տեղի է ունենում և՛ երկրի ներսում, և՛ երկրի սահմաններից դուրս: Այս երևույթը հասել է այնպիսի աննախադեպ չափերի, որ այն իրապես կարելի է կոչել ստրկության նոր ձև:

Եվրոպայի խորհուրդը կազմակերպություն է, որի առաջնային նպատակն է մարդու իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: Իր 46 անդամ պետությունների մեջ կան թրաֆիկինգի զոհերի ելքի, տարանցման և մուտքի երկրներ: Ահա թե ինչու Կազմակերպությունը միտված է պատշաճ կերպով ապահովել իր անդամ պետությունների կողմից մարդկանց թրաֆիկինգի դեմ ուղղված միջոցառումների ձեռնարկումը:

Եվրոպայի խորհուրդ Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին եվրոպական կոնվենցիան ընդունել է 2005թ. մայիսին, և այն բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրության համար:

Սույն կոնվենցիայի նպատակն է կանխարգելել և պայքարել մարդկանց թրաֆիկինգի դեմ իր բոլոր դրսևորումներով՝ ազգային կամ միջազգային, անկախ նրանից թե այն կապված է կազմակերպված հանցագործության դեմ:

Նոր կոնվենցիայում մանրամասն կերպով ձևակերպված առաջին հիմնարար սկզբունքը այն է, որ զոհերի իրավունքների պաշտպանությունն ու խթանումը պետք է ապահովվի առանց սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելիության, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի հիմքի վրա խտրականության:

Կոնվենցիայի հիմնական հավելյալ արժեքը մարդու իրավունքների հարթությունն է, դրա կենտրոնցումը զոհերի պաշտպանությանը և դրա անկախ մոնիտորինգային մեխանիզմը, որն ապահովում է պետությունների կողմից կոնվենցիայի դրույթների կատարումը:

## Մարդու իավունքների մասին իրազեկությունը

*Համագործակցության ծրագրեր*

Եվրոպայի խորհուրդը անդամ պետություններին և ոչ կառավարական կազմակերպություններին աջակցություն է տրամադրում և օժանդակում մարդկանց իրավունքների նկատմամբ հարգանքի խթանմանն ուղղված նրանց ջանքերին: Իր համագործակցության ծրագրերի միջոցով Եվրոպայի խորհուրդը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վերաբերյալ կազմակերպում է դասընթացներ դատավորների, դատախազների, օրենքի կիրառ-

ման ոլորտում աշխատող պաշտոնյաների, իրավաբանների և այլ մասնագիտական խմբերի համար: Այն նաև տրամադրում է մասնագիտական կարծիք մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշներին նոր օրենսդրության համապատասխանության վերաբերյալ, ազգային լեզուներով մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերի թարգմանություն ու հրատարակում ապահովում, կազմակերպում սեմինարներ և կլոր սեղաններ մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների հետ և նրանց մասին, ինչպես նաև կազմակերպում դասընթացներ կառավարությունների՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ աշխատող ներկայացուցիչների համար: Մարդու իրավունքների ծրագրերը լրացվում են այլ նմանատիպ իրազեկության, ուսուցման և տեղեկատվության տրամադրման ծրագրերով, որոն ուղղված լայն հասարակայնությանը և նպատակ ունեն մարդկանց իրազեկել մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերաբերյալ՝ տեղեկատվական արշավների, հրատարակությունների, տեսալսողական և ինտերնետային նյութերի միջոցով:

*Ոստիկանություն ու մարդու իրավունքները*

Եվրոպայի խորհրդի տեսանկյունից օրենքի և կարգի պահպանման համար պատասխանատուները միշտ հանդիսացել են կարևոր նպատակային խումբ: «Ոստիկանությունը և մարդու իրավունքները, 1997-2000» լայնածավալ ծրագիրը ճանապարհ հարթեց «Ոստիկանությունը և մարդու իրավունքները, 2000-ից այն կողմ» ընթացիկ ծրագրի համար: Ծրագիրը կատարում է կատալիզատորի գործառույթ և նպատակ ունի խթանել ոստիկանների շրջանում մարդու իրավունքների պաշտպանությունն ու հարգանքը: Ծրագիրը ներառում է երկարատև համագործակցություն անդամ պետությունների հետ, կարիքների գնահատում, գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում և ծրագրերի գնահատում:

## Մարդու իրավունքների հանձնակատարը

*Մարդու իրավունքների հանձնակատարը*

Մարդու իրավունքների հանձնակատարի պաշտոնը ստեղծվել է 1999թ.: Հանձնակատարը ներկայացնում է անկախ կառույց, որը պատասխանատու է անդամ պետություններում մարդու իրավունքների կրթության, իրազեկության և դրանց նկատմամբ հարգանքի խթանման և Եվրոպայի խորհրդի նորմատիվ փաստաթղթերի սկզբունքների ամբողջական և արդյունավետ կատարման համար:

Հանձնակատարը հիմնականում խաղում է կանխարգելիչ դեր՝ համատեղելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և պայմանագրերի ներքո գործող այլ մարմինների տարբեր գործառույթներ: Հանձնակատարը չունի որոշումների իրականաց-

ման իշխանություն, այն անդամ պետություններին տրամադրում է խորհրդատվություն, վերլուծություն և հանձնարարականներ՝ ուղղված օրենսդրական թերությունների հաղթահարմանը և գործնականում մարդու իրավունքների խախտումների կանխարգելմանը:

Հանձնակատարի լիազորությունների մեջ է նաև մարդու իրավունքների պաշտպանության ներպետական կառույցների խթանումը և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը: Հանձնակատարը կարող է գործել՝ հիմնվելով կառավարությունների, ազգային խորհրդարանների, ազգային օմբուդսմենների կամ այլ նմանատիպ կառույցների, անհատների և կազմակերպությունների տրամադրած համապատասխան տեղեկատվության հիման վրա:

Հանձնակատարը կարող է կոնկրետ հարցի վերաբերյալ զեկույցներ, հանձնարարականներ կամ կարծիքներ ներկայացնել Նախարարների կոմիտե և Խորհրդարանական վեհաժողով: Որպես Հանձնակատար առաջինը պաշտոնավարել է Ալվարո Խիլ-Ռոբլեսը (Իսպանիա), որն ընտրվել էր Խորհրդարանական վեհաժողովի կողմից 1999թ. սեպտեմբերին: Թոմաս Համմաբերգը (Շվեդիա) այդ պաշտոնում ընտրվել է 2005թ. հոկտեմբերի 5-ին և ստանձնել իր պաշտոնը 2006թ. ապրիլին:

**Ինտերնետային կայքեր**

Մարդու իրավունքների եվրոպական դատարան
http://www.echr.coe.int/echr

Մարդու իրավունքների գլխավոր տնօրինություն
http://www.coe.int/T/E/Human_rights

Մարդու իրավունքների հանձնակատար
http://www.coe.int/T/E/Commissioner_H.R

# Մամուլն ու ժողովրդավարությունը

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդված 10-ի, ազատ, անկախ և բազմակարծ մամուլը, կարևոր է ժողովրդավարության համար: Եվրոպայի խորհրդի գործունեությունը լրատվամիջոցների ոլորտում ուղղված է՝

- խոսքի և տեղեկատվության ազատության ամրապնդմանը և երկրների միջև տեղեկատվության և գաղափարների ազատ տարածմանը,
- համաեվրոպական քաղաքականությանը և դրան ուղղված համապատասխան իրավական և այլ փաստաթղթերի մշակմանը,
- լրատվության ոլորտի տեխնոլոգիական, տնտեսական և կարգավորող փոփոխություններին լրատվամիջոցներին առնչվող օրենսդրության և քաղաքականության համընթաց զարգացում ապահովելու նպատակով համապատասխան միջոցների ձեռնարկմանը:

*Խոսքի և տեղեկատվության ազատություն*

1982թ. Նախարարների կոմիտեի ընդունած՝ Խոսքի և տեղեկատվության ազատության մասին եվրոպական հռչակագիրն արտահայտում է անդամ պետությունների կառավարությունների՝ խոսքի և տեղեկատվության ազատությունը հարգելու պարտավորությունը:

*Աջակցություն անդրսահմանային հեռարձակմանը*

Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 1993թ., նպատակ ունի օժանդակել տարբեր երկրների միջև հեռուստատեսային ծրագրերի շրջանառությանը՝ ապահովելով ծրագրերի ընդունման և վերահեռարձակման ազատությունը կոնվենցիային միացած պետությունների սահմաններում: Կոնվենցիան երաշխավորում է անդամ պետությունների կողմից ծրագրերի բովանդակությանը, պատասխանի իրավունքին, գովազդի և հովանավորների հարցերին առնչվող նվազագույն սկզբունքների պահպանումը:

Կոնվենցիայի բնօրինակում առաջարկված դրույթները, որոնք վերաբերում էին կարևոր նշանակության միջոցառումների հանրամատչելիությանը, գովազդին և հեռուստատեսության միջոցով գնումների կատարմանը, ամբողջովին և լրջորեն վերանայվեցին փոփոխությունների արձանագրությամբ, որն ուժի մեջ մտավ

2002թ. մարտի 1-ին: Ներկայում կոնվենցիային անդամակցում են 31 պետություններ (ներառյալ ԵԽ անդամ չհանդիսացող մեկ պետություն):

*Պարտադիր այլ փաստաթղթեր*

Եվրոպական համաձայնագրեր՝

- հեռուստատեսային ֆիլմերի միջոցով ծրագրերի փոխանակման մասին (ուժի մեջ է 1961թ.),
- հեռուստատեսային հեռարձակումների պաշտպանության մասին (ուժի մեջ է 1961թ.),
- ազգային տարածքներից դուրս ծրագրերի հեռարձակման կանխարգելման մասին (ուժի մեջ է 1967թ.) և դրա արձանագրությունները:

Եվրոպական կոնվենցիաները, որոնք առնչվում են՝

- անդրսահմանային արբանյակային հեռարձակման շրջանակներում հեղինակային և հարակից իրավունքներին,
- պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից բաղկացած ծառայությունների իրավական պաշտպանությանը:

*Հանձնարարականներ*

Նախարարների կոմիտեն իրավական և ծրագրային փաստաթղթեր է ընդունել լրատվամիջոցների գործունեության տարբեր հարցերի վերաբերյալ.

- լրագրողների տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը,
- լրատվամիջոցները և ընտրությունները,
- հանրային հեռուստատեսության անկախությունը,
- իրավունքներ կրողների պաշտպանությունը,
- լրատվամիջոցների թափանցիկությունն ու բազմակարծությունը,
- մեծ միջոցառումների հեռարձակման բացառիկ իրավունքը,
- էլեկտրոնային լրատվամիջոցներում բռնության ներկայացումը,
- ատելության քարոզչությունը,
- հեռարձակման ոլորտը կարգավորող իշխանությունների անկախությունն ու գործառույթները,
- ինտերնետում հաղորդակցության ազատությունը,
- քրեական դատավարության վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով տեղեկատվության տրամադրումը,
- լրատվամիջոցներում քաղաքական բանավեճի ազատությունը:

*Լրատվամիջոցների հարցերով եվրոպական նախարարական համաժողովներ*

Պարբերաբար կազմակերպվող Նախարարական համաժողովները վերահաստատում են մամուլի ազատության վերաբերյալ պարտավորությունները, ընդունում կարևոր ռազմավարական առաջարկներ և նախանշում են լրատվամիջոցների ոլորտում Եվրոպայի խորհրդի հետագա աշխատանքի ուղղությունները: 2005թ. Նախարարական համաժողովը (Կիև, մարտի 10-11-ը) ընդունեց երեք բանաձևեր և Գործողությունների ծրագիր՝ ուղղված հաղորդակցության ծառայություններում և դրանց բովանդակության մեջ խոսքի ազատության, բազմակարծության և բազմազանության խթանմանը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությանը և Տեղեկատվական հասարակությունում բոլոր անհատների հնարավորինս ընդգրկուն մասնակցությանը:

*Գերակա խնդիրները*

Ջանգվածային լրատվամիջոցների ղեկավար կոմիտեն պատասխանատու է ներկայում հինգ հիմնական ուղղություններով ընթացող աշխատանքների համար.

- ճգնաժամերի ժամանակ խոսքի և տեղեկատվության ազատությունը (ճգնաժամային իրադրություններում մամուլի աշխատակիցների աշխատանքային պայմանները, ինչպես նաև նրանց պարտականությունները, ներառյալ գաղտնիության և մարդկային արժանապատվության իրավունքը),
- լրատվական միջոցների կենտրոնացման և նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման լույսի ներքո մշակութային բազմազանությունն ու լրատվամիջոցների բազմակարծությունը,
- հանրային հեռարձակումը Տեղեկատվական հասարակությունում,
- Տեղեկատվական հասարակությունում մարդու իրավունքները (անչափահասների պաշտպանությունը վնասակար բնույթի հաղորդումներից, Տեղեկատվական հասարակությունում տարբեր դերակատարների դերերն ու պարտականությունները, լրատվական կրթության միջոցով թվային ներառման խթանումը),
- Մարդու իրավունքի եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին անդամ պետությունների՝ զրպարտությանը վերաբերող օրենքների համապատասխանության քննարկումը:

Ժողովրդավարական կայունությանն ու ամրապնդմանը ուղղված գործողություններ

Եվրոպայի խորհրդի նախաձեռնությունների ցանկի գերակայություններից է ժողովրդավարական անվտանգության ապահովմանն ուղղված այնպիսի լրատվական համակարգի հիմնադրումը, որը կբավարարի ժողովրդավարական հասարակության բոլոր պահանջները, հատկապես նոր անդամ պետություններում: Մամուլի ոլորտում համագործակցության ծրագրերն օժանդակում են այս երկրներին՝ տրամադրելով իրավական խորհրդատվություն,

ինչպես նաև կազմակերպելով իրազեկության բարձրացման սեմինարներ և դասընթացներ լրագրողական ազատության իրականացման, ռասիզմի և լրատվամիջոցների գործողությունների, ընտրությունների լուսաբանման, տեղեկատվության մատչելիության և այլնի վերաբերյալ:

*Եվրոպական տեսալսողական դիտարան*

Եվրոպական տեսալսողական դիտարանը կուտակում և տարածում է Եվրոպայում տեսալսողական արդյունաբերության վերաբերյալ տեղեկատվություն: Այն Եվրոպայի խորհրդի և նրա 36 անդամ պետությունների միջև մասնակի և ընդլայնված համաձայնություն է: Եվրոպական համայնքը ներկայացնող Եվրոպական հանձնաժողովը նույնպես դրա անդամն է:

Եվրոպական տեսալսողական դիտարանի խնդիրն է առավել մեծ թափանցիկություն ստեղծել Եվրոպայի տեսալսողական ոլորտում և՛ մասնագետների և՛ այդ ոլորտում քաղաքական որոշումներ կայացնողների համար:

Եվրոպական տեսալսողական դիտարանը ղեկավարում է բացառիկ տեղեկատվական ցանց, որը ներկայացնում է 400-ից ավել տարբեր տեղեկատվական աղբյուրներ (գործընկերներ, մասնագիտական կազմակերպություններ, թղթակիցներ և այլն): Շնորհիվ իր ցանցի, Դիտարանը կարող է տրամադրել համապատասխան և թարմ տեղեկատվություն տեսալսողական շուկաների և ֆինանսավորման, ինչպես նաև ոլորտի իրավական խնդիրների վերաբերյալ:

Դիտարանն այս տեղեկատվությունը մատչելի է դարձնում հրատարակությունների, ինտերնետային ապրանքների և ծառայությունների, համաժողովներին ներկայացված նյութերի և տվյալների բազաներին ազատ մուտքի միջոցով:

**Ինտերնետային կայքեր**

http://www.coe.int/media
http://www.obs.coe.int
(Եվրոպական տեսալսողական դիտարան)

# Իրավական համագործակցություն

Եվրոպայի խորհրդի իրավական աշխատանքը կարևոր է եվրոպական օրենսդրության մշակման, բոլոր անդամ պետությունների իրավական համակարգերը Եվրոպայի խորհրդի ընդհանուր չափանիշներին համապատասխանեցնելու, ներդաշնակեցնելու և արդիականացնելու համար: Նրա նպատակն է խրախուսել ներպետական, շրջանային և տեղական մակարդակներում ժողովրդավարական հաստատությունների և ընթացակարգերի ստեղծումը և զարգացումը և խթանել իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքը:

**Նպատակները՝**

- խթանել օրենքը՝ որպես ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության միջոց,
- արդարադատության արդյունավետություն և մատչելիություն ապահովել յուրաքանչյուր քաղաքացու համար,
- ընդհանուր լուծումներ գտնել գիտական և տեխնոլոգիական առաջընթացի արդյունքում առաջ եկող նոր իրավական և բարոյագիտական խնդիրների համար:

*Արդարադատության համակարգի բարելավումը*

Խորհրդի հիմնական մտահոգություններից մեկն արդյունավետ և անկախ դատաիրավական համակարգի խթանումն է: Սա արտացոլված է կառույցի բազմաթիվ իրավական փաստաթղթերում: Նրա խնդիրն է ապահովել դատավորների անկողմնակալությունն ու անկախությունը (Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհուրդը կարևոր դեր է խաղում այս առումով), խթանել դատաիրավական համակարգի որակը և արդյունավետությունը բարելավող գործնական միջոցառումներ, մասնավորապես Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (ԱԱԵՀ) միջոցով: Այս մարմինը պատասխանատու է անդամ պետություններում դատաիրավական համակարգերի գնահատման համար: Քաղաքացիական արդարադատության եվրոպական օրը, որը Եվրոպայի խորհուրդը և Եվրոպական հանձնաժողովը համատեղ նշում են ամեն տարի հոկտեմբերի 25-ին, նպատակ ունի բարելավել դատաիրավական համակարգի հանրային ընկալումը:

*Վերապատրաստում իրավաբանների համար*

Իրավունքի գերակայության նկատմամբ արդյունավետ դատաիրավական համակարգի հարգանքը երաշխավորելու նպատակով Եվրոպայի խորհուրդը մասնակցում է իրավաբանների՝ դա-

տավորների, դատախազների, փաստաբանների, դատական կատարածուների, դատարանի քարտուղարների և նոտարների, ինչպես նաև ոստիկանների և բանտերի աշխատակազմի վերապատրաստմանը: Կազմակերպությունն աշխատում է ստեղծել վերապատրաստող համակարգեր, ինչպես օրինակ՝ Դպրոցներ դատավորների համար (մասնավորապես Լիսաբոնի ցանցի միջոցով) և Ոստիկանական ակադեմիաներ:

Եվրոպայի խորհուրդը խթանում է ուղղակի շփումներ իրավաբանության ոլորտի տարբեր մասնագետների միջև և ուղենիշներ է սահմանում իրավաբանության տարբեր ճյուղերի կազմակերպման համար: Կանոնավոր հանդիպումներն ու համաժողովները համախմբում են մարդկանց այս ոլորտի տարբեր ճյուղերից, օրինակ՝ Եվրոպական գերագույն դատարանների նախագահների, դատավորների, գլխավոր դատախազների ամբողջ Եվրոպայից, ինչպես նաև փաստաբանական ընկերակցության անդամների:

*Պայքար ահաբեկչության դեմ*

Միջազգային համագործակցության միջոցով ահաբեկչության դեմ պայքարելը դարձել է Եվրոպայի խորհրդի գերակայություններից մեկը: Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիան և դրա Արձանագրությունը, ինչպես նաև Հանձնման մասին կոնվենցիան լայն օժանդակության են արժանացել ինչպես ԵԽ անդամ հանդիսացող, այնպես էլ ԵԽ անդամ չհանդիսացող պետությունների կողմից: Օրենսդրական աշխատանքը շարունակական բնույթ ունի. գործողությունների ծրագիրը գոյություն ունեցող իրավական փաստաթղթերը կհամապատասխանեցնի նոր միջազգային համատեքստին և կուժեղացնի համագործակցությունը տարբեր ոլորտներում: Դրանք ներառում են ահաբեկչության ֆինանսական աղբյուրների դեմ պայքարը, հետաքննության հատուկ մեթոդները, վկաների և ոստիկանությանը տեղեկատվություն տրամադրողների պաշտպանության համակարգերի բարելավումը, զոհերին արտոնություններ տվող ծրագրերը և ինքնությունը հաստատող փաստաթղթերի ստանդարտները: Արդեն իսկ հրապարակվել է *«ահաբեկչության արդարացում» և «ահաբեկչության հրահրում»* հասկացությունների վերաբերյալ մի զեկույց:

*Պայքար կոռուպցիայի, կազմակերպված հանցագործությունների և փողերի լվացման դեմ*

Եվրոպայի խորհուրդը բազմակողմանի մոտեցում է ցուցաբերում կոռուպցիայի, կազմակերպված հանցագործությունների և փողերի լվացման դեմ պայքարում: Այն հիմնվում է երեք փոխադարձաբար միմյանց կապված հենասյուների վրա՝ Եվրոպական չափանիշներ (Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան և դրա Արձանագրությունը, Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան, Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման մասին կոնվենցիան և մի շարք հանձնարարականներ և բանաձևեր),

վերոնշյալ չափանիշներին համապատասխանելիության վերահսկում (GRECO-ն՝ կոռուպցիայի և MONEYVAL-ը՝ փողերի լվացման համար), և այս հանցագործությունների դեմ պայքարի հնարավորությունները մեծացնելուն ուղղված տեխնիկական համագործակցության ծրագրեր:

*Կիբեռպարածության պաշտպանություն*

Կիբեռհանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ուժի մեջ մտավ 2004թ. հուլիսի 1-ին: Սա առաջին միջազգային պայմանագիրն է, որը քրեականացնում է համակարգչային ցանցերի միջոցով կատարվող հանցագործությունները, որոնք մասնավորապես կապված են հեղինակային իրավունքի խախտման, համակարգչային կեղծիքների, մանկական պոռնոգրաֆիայի և ցանցերի անվտանգության նկատմամբ ոտնձգությունների հետ: Կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրությունը քրեականացնում է համակարգչային ցանցերի միջոցով իրականացվող ռասիստական և քսենոֆոբիկ գործողությունները:

*Երեխաների պաշտպանություն*

Եվրոպայի խորհուրդը մասնավորապես մտահոգված է երեխաների պաշտպանության խնդիրներով: Եվրոպական մակարդակում երեխաների սեռական շահագործման խնդրին ուղղված Հանձնարարական և Գործողությունների ծրագիր է ընդունվել 2001թ. նոյեմբերին:

Քաղաքացիական իրավունքի ոլորտում երեխաներին առաջարկվող պաշտպանությունն ամրապնդվել է երեխաների և նրանց ծնողների միջև կանոնավոր շփում երաշխավորող և խնամակալության ու անդրսահմանային մատչելիության ոլորտները կարգավորող կանոններով: Քաղաքացիական իրավունքը նաև անդրադառնում է երեխայի սերման փաստի ապացուցման խնդիրներին:

*Կենսաէթիկա, քսենոպատվաստում, կենսատեխնոլոգիա և սննդի անվտանգություն*

Մարդկանց պաշտպանությունը հիմնարար է կենսաբժշկական հետազոտությունների ոլորտում: Եվրոպայի խորհուրդն առաջին կազմակերպությունն էր, որ մշակեց Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիա և գիտական առաջընթացին վերաբերող դրա լրացուցիչ արձանագրությունները: Դրանք արգելում են մարդու կլոնավորումը և կարգավորում օրգանների պատվաստումը և կենսաբժշկական հետազոտությունները: Քննարկման են դրված մարդու գենետիկայի և մարդկային սաղմի ու պտուղի կարգավիճակի վերաբերյալ արձանագրությունները:

Բացի այդ, կենդանիների նկատմամբ վատ վերաբերմունքը Եվրոպայի խորհրդին հուշել է ընդունել կենդանիների պաշտպանության մասին կոնվենցիաներ, մասնավորապես միջազգային փոխադրումների կամ բուծման ծրագրերում:

*Հոգեբուժությունը և մարդու իրավունքները*

Եվրոպայի խորհուրդը նաև ապահովում է հոգեբուժական հաստատություններում ոչ իրենց կամքով գտնվող հիվանդների իրավական պաշտպանությունը (գոյություն ունի հատուկ հանձնարարական այս նպատակով):

*Օրենսդրական բարեփոխումներ*

Եվրոպայի խորհուրդը համագործակցում է անդամ պետությունների հետ եվրոպական նորմերին ներպետական օրենսդրությունների համապատասխանությունը երաշխավորելու նպատակով: Այս օժանդակությունն ընդգրկում է իրավունքի բոլոր ոլորտները՝ քաղաքացիական, քրեական և վարչական օրենսգրքերից մինչև առանձին օրենքներ, ինչպես կենսաէթիկայի և տվյալների պաշտպանության օրենքները: Կազմակերպությունը փորձագիտական կարծիք է տրամադրում իրավական փաստաթղթերի վերաբերյալ:

Եվրոպայի խորհուրդը նաև օգնում է անդամ պետություններին մշակել արդյունավետ օրենսդրական ընթացակարգեր և նոր օրենքների նախագծման ժամանակակից մեթոդներ: Սրա նպատակն իրավական համակարգերն առավել կապակցված և հասարակության համար առավել մատչելի դարձնելն է:

*Սահմանադրություններ և սահմանադրական հարցեր*

Պետության սահմանադրությունը նրա գերագույն իրավական փաստաթուղթն է, որը հիմնում և կազմակերպում է նրա ինստիտուցիոնալ համակարգը. սահմանադրությունը իրավունքի գերակայության վրա հիմնված պետության հիմնաքարն է: Եվրոպայի խորհուրդն ակտիվ է Եվրոպայում սահմանադրական քննարկումների ոլորտում և ինստիտուցիոնալ լուծումներ է փնտրում հակասությունների լուծման համար: Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) մի համաժողով է, որտեղ երկրները կարող են սահմանադրական խնդիրներին առնչվող տեղեկատվություն ստանալ, փորձ փոխանակել և գաղափարներ ու ծրագրեր քննարկել:

*Օտարերկրացիներ և քաղաքացիներ*

Որպես տեղեկատվության հավաքման և փոխանակման մի ֆորում՝ Եվրոպայի խորհուրդը համաձայնեցված հարմար լուծումներ է փնտրում հպատակագրման, ապաստանի դիմումների, մարդկանց ազատ տեղաշարժի, քաղաքացիություն չունենալու հարցերին և դրանց առնչվող իրավական դժվարություններին: Ազգության մասին եվրոպական կոնվենցիան՝ նշված ոլորտի միակ միջազգային փաստաթուղթը, այժմ արդեն ուժի մեջ է մտել:

*Հանցագործությունների կանխարգելում*

Եվրոպայի խորհուրդը ուղենիշներ է մշակում հանցագործությունների կանխարգելման և անչափահասների հանցավորության վերաբերյալ: Դրանք ուսումնասիրում են կանխարգելման ներպետական քաղաքականության արդյունավետությունը և ներկայացնում սկզբունքներ, որոնց հետևելը կնպաստի պետությունների՝ սեփական արդյունավետության բարձրացմանը:

*Քրեական ոլորտում կոնվենցիաների արդյունավետություն*

Ընդունվել են մի քանի առանցքային իրավական փաստաթղթեր, որոնց թվին են պատկանում Հանձնման մասին եվրոպական կոնվենցիան, Քրեական գործերով փոխադարձ օգնության եվրոպական կոնվենցիան և Դատապարտված անձանց փոխանցման մասին կոնվենցիան: Գործնականում կիրառվելու նպատակով այս միջազգային պայմանագրերը վերահսկվում և փոփոխվում են: Եվրոպայի խորհուրդը ակտիվորեն խրախուսում է Միջազգային քրեական դատարանի կանոնադրության կիրառումը:

*Ոստիկանություն և ներքին անվտանգության ծառայություններ*

Ոստիկանության էթիկայի եվրոպական կանոնագիրքն ընդունվել է 2001թ.՝ անդամ պետություններում համապատասխան բարեփոխումներին նպաստելու նպատակով: Այս կանոնագրքի կիրառմանը հետևում էր Խորհրդակցական հատուկ կոմիտեն. Էթիկայի կանոնագիրքը Եվրոպայի խորհրդի՝ իր անդամ պետությունների հետ համագործակցության հիմքն է:

*Բանտային համակարգեր*

Եվրոպայի խորհուրդն իր անդամ պետություններին ուղենիշներ է տրամադրում բանտային պայմաններ բարելավելու նպատակով: Վաղաժամկետ պայմանական ազատումը, երկարաժամկետ ազատազրկված բանտարկյալների կառավարումը և նրանց՝ կալանքի տակ վերադառնալը ներկայիս հիմնական մտահոգություններից են: Ուսումնասիրության են ենթարկվում նաև բանտարկության այլընտրանքները: Ղեկավար խմբերում ընդգրկված փորձագետները պատասխանատու են անդամ պետություններին, մասնավորապես հարավ-արևելյան Եվրոպայի և նորանկախ պետություններին, օժանդակել բանտային բարեփոխումների ոլորտում:

*Միջազգային հանրային իրավունք*

Եվրոպայի խորհուրդը նպատակ ունի ստեղծել միջազգային համագործակցության համակարգ՝ միջազգային հանրային իրավունքն ամրապնդելու և այս ոլորտում զարգացումներին ներգործելու նպատակով՝ խրախուսելով պետությունների փոխկախվածությունը. սա խթանելով իրավաբան խորհրդատուների միջև շփումները՝ խրախուսում է քննարկումները և տեղեկատվության ու փորձառության միավորումը:

*Վարչական դատարաններ և հանրային կառավարում*

Եվրոպայի խորհուրդը հատկապես աշխատում է ամրապնդել իրավական վարչարարների և քաղաքացիների փոխհարաբերությունները: Կազմակերպության վերահսկող մեխանիզմներն ապահովում են պետական իշխանությունների կողմից կանոնների հարգումը, ինչպես նաև դատավորների կողմից վարչական ակտերի արդյունավետ վերահսկումը:

*Ընտանեկան իրավունք*

Եվրոպայի խորհուրդը մեծ ջանքեր է գործադրել ընտանեկան իրավունքի նորմերը ներդաշնակեցնելու ուղղությամբ: Կազմա-

կերպությունն ուղղակիորեն զբաղվում է անհատների՝ անձնական կյանքում ունեցած դժվարություններով. այն հատկապես ակտիվ է երեխաների պաշտպանության ոլորտում և ընդունել է Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան:

*Քաղաքացիական հասարակություն*

Եվրոպայի խորհուրդը քաղաքացիական հասարակության կանոնադրության միակ միջազգային փաստաթղթի՝ Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների իրավաբանական անձ ճանաչելու մասին եվրոպական կոնվենցիայի հեղինակն է: 2003թ. Եվրոպայի խորհուրդը հրապարակեց ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի հիմնարար սկզբունքները: Այն պետությունները, որոնք ցանկություն ունեն ամուր իրավական հիմք ապահովել իրենց ներսում աշխատող ոչ կառավարական կազմակերպությունների համար, պետք է հիմնարար սկզբունքները ներառեն իրենց օրենսդրությունում:

*Տվյալների պաշտպանություն*

Բոլոր անձնական և բժշկական տվյալները պետք է պաշտպանվեն ի շահ անհատի անձնական կյանքի իրավունքի: Սա ներառում է վիճակագրական կամ ապահովագրական նպատակներով հավաքվող և օգտագործվող տեղեկատվությունը, ոստիկանության և դատարանների տվյալները, ինչպես նաև տեսագրումներից կամ հատուկ քարտերից վերծանված տեղեկությունները: Գաղտնիությունը երաշխավորվում է Անհատական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիան, որը լրացնում է Անհատական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր անձանց պաշտպանության մասին լրացուցիչ արձանագրությունը վերահսկողության մարմինների և տվյալների անդրսահմանային հոսքի վերաբերյալ:

## Տեղական և տարածքային ժողովրդավարություն

*Նպատակները.*

- խթանել տեղական և տարածքային ինքնակառավարումը, համախմբել փորձը և մշակել տեղական և տարածքային իշխանությունների վարչական և իրավական համակարգերին և ֆինանսներին ուղղված քաղաքականություններ,
- խթանել անդրսահմանային համագործակցությունը տեղական և տարածքային իշխանությունների միջև և ընդգծել Եվրոպայի շրջանների մշակութային և լեզվական բազմազանությունը:

Եվրոպայի խորհուրդը նպատակ ունի պաշտպանել և ուժեղացնել տեղական և տարածքային ժողովրդավարությունը և խրախուսել տեղական և տարածքային կառավարման ոլորտում լիազորութ-

յունների փոխանցումը և քաղաքացիների մասնակցությունը: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան ստեղծվել է այս նկատառումով: Ուստի Եվրոպայի խորհրդի աշխատանքը ներառում է տեղական և տարածքային իշխանությունների իրավական համակարգին, կառուցվածքներին, պարտականություններին, միջոցներին և գործառույթներին առնչվող բոլոր խնդիրները:

Համագործակցության ծրագիրը մասնավորապես ուղղված է օրենսդրական օժանդակությանը, կառավարության տարբեր մակարդակներում պարտականությունների բաժանմանը և այդ մակարդակների միջև փոխհարաբերություններին: Այն նաև օրենսդրական և տեխնիկական օժանդակություն է տրամադրում տեղական և տարածքային ֆինանսական համակարգերի պլանավորման, մունիցիպալ հանրային ծառայությունների կառավարման, տեղական և տարածքային իշխանությունների աշխատակազմի և ընտրված ներկայացուցիչների վերապատրաստման և տեղական ու տարածքային իշխանությունների ընկերակցությունների ստեղծման և ղեկավարման ոլորտներում:

*Անդրսահմանային համագործակցության ուժեղացում*

Սահմանային տարածքներն իրենց հայացքն աստիճանաբար դեպի դուրս են ուղղում, և սա բացում է անդրսահմանային համագործակցության նոր հեռանկարներ (օրինակ՝ եվրոշրջաններ ստեղծելը): Տարածքային համայնքների կամ իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիան իրավական հիմք է ապահովում անդրսահմանային համագործակցության համար:
Եվրոպայի խորհրդի քաղաքականությունը հետապնդում է երկու նպատակ՝ վստահության և բարիդրացիական հարաբերությունների ստեղծում և տեղական կամ տարածքային իշխանությունների համագործակցության խոչընդոտների (հատկապես իրավական բնույթի) վերացում:

*Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ*

Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուները Եվրոպայի մշակութային ժառանգության ամբողջական մասն են և պետք է պաշտպանվեն և խթանվեն: 1992թ. ի վեր եվրոպական պետությունները կարողացել են հաստատել այս ժառանգությունը պաշպանելու իրենց պարտավորությունը՝ ստորագրելով Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական խարտիան:

## Եվրոպայի խորհրդի իրավական փաստաթղթերը

Եվրոպայի խորհրդի աշխատանքի արդյունքում մշակվում են երկու տեսակի իրավական փաստաթղթեր՝ կոնվենցիաներ և հանձնարարականներ:

*Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները սահմանում են իրավական չափանիշները անդամ պետություններում*

• Կոնվենցիան միջազգային իրավական ուժ ունեցող փաստաթուղթ է, որը ստեղծվում է քննարկումների և համաձայնությունների գործընթացի արդյունքում՝ Եվրոպայի խորհրդի հիմնական մարմինների, մասնավորապես Նախարարների կոմիտեի և Խորհրդարանական վեհաժողովի մասնակցությամբ:
• Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները նպատակ ունեն հիմնականում Կազմակերպության գործունեության ոլորտներում խթանել միջազգային համագործակցությունը և իրավական ընդհանուր չափանիշները :
• Յուրաքանչյուր պետություն, որը ստորագրում և վավերացնում է որևէ կոնվենցիա, պարտավոր է համապատասխանություն ապահովել նրա դրույթներին և այն ներառել ներպետական օրենսդրությունում:
• Կան Եվրոպայի խորհրդի կոնվենցիաներին հետևելու և դրանցով ամրագրված պարտավորությունների կատարումը վերահսկելու մի քանի եղանակներ:

Այսօր Եվրոպայի խորհուրդը մշակել է գրեթե 200 կոնվենցիա, որոնցից շատերը ստորագրման համար բաց են նաև ԵԽ անդամ չհանդիսացող պետությունների համար:

*Հանձնարարականներ*

Կոնվենցիայով կարգավորվելու համար ոչ նպատակահարմար հարցերի առնչությամբ Նախարարների կոմիտեն կարող է հանձնարարականներ ուղղել անդամ պետություններին, որոնց համար դրանք «փոխհամաձայնեցված ընդհանուր քաղաքականություն» են: Հանձնարարականները անդամ պետությունների համար հարկադիր ուժ չունեն, չնայած որ Կանոնադրությունը Նախարարների կոմիտեին լիազորում է անդամ պետություններից տվյալ հանձնարարականի հետ կապված իրենց ձեռնարկած գործողությունների մասին տեղեկատվություն խնդրել:

*Քաղաքական հարցերի գլխավոր տնօրինության ինտերնետային կայքեր*

Իրավական հարցերի գլխավոր տնօրինություն
www.coe.int/legal

Իրավական համագործակցություն
www.coe.int/legalcooperation

Պայմանագրերի գրասենյակ
www.conventions.coe.int

Վենետիկի հանձնաժողով
www.venice.coe.int

Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խումբ (GRECO)
www.greco.coe.int

Տեղական և տարածքային ժողովրդավարություն
www.coe.int/local

# Սոցիալական համախմբվածություն

Եվրոպայի խորհուրդն ակտիվորեն խթանում է սոցիալական համախմբվածությունը: Այս ոլորտում Կազմակերպության հիմնական նպատակներն են`

- խթանել սոցիալական համախմբվածության հայեցակարգը, որը սահմանված է Սոցիալական համախմբվածության վերանայված ռազմավարության մեջ,
- վերլուծել սոցիալական փոփոխությունները սոցիալական համախմբվածության սահմանումների լույսի ներքո,
- մշակել ընդհանուր պատասխանատվության հայեցակարգը` առավել շատ ընդգրկելով քաղաքացիական հասարակությանը սոցիալական համախմբվածություն խթանելու գործին,
- երաշխավորել սոցիալական պաշտպանության համապատասխան մակարդակ,
- վերլուծել ընթացիկ զարգացումները զբաղվածության դաշտում և սոցիալական ինտեգրման ոլորտում դրա դերը, ինչպես նաև աշխատողների վերապատրաստման և նրանց իրավունքների փոփոխություններին առնչվող խնդիրները,
- պաշտպանել հասարակության առավել խոցելի խմբերին և վերանայել նրանց բարեկեցության ապահովմանն առնչվող քաղաքականությունները և միջոցները,
- խթանել իրավունքների հավասար մատչելիությունը` միաժամանակ հարգելով տարբերությունները,
- պայքարել բացառման և խտրականության բոլոր դրսևորումների դեմ:

*Սոցիալական համախմբվածության ռազմավարություն*

Սոցիալական հիմնարար իրավունքների մատչելիության ապահովումը հասարակության բոլոր անդամներին, ինչպես սահմանված է Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայով, սո-

ցիալական համախմբվածության ռազմավարության առանցքն է: Այս նպատակին անհրաժեշտ է հասնել` ծավալելով միջկառավարական գործունեություն հետևյալ ոլորտներում`

- **Սոցիալական պաշտպանություն.** ջանքեր են գործադրվում ընդլայնելու Սոցիալական ապահովության եվրոպական կանոնագրքում և Սոցիալական ապահովության եվրոպական վերանայված կանոնագրքում ամրագրված չափանիշների կիրառումը այն բոլոր անդամ պետություններում, որոնք դրանք ընդունելու դիրքորոշում ունեն:
- **Սոցիալական ծառայություններ.** մշակվել են հանձնարարականներ`երաշխավորելու սոցիալական ծառայություններ մատուցող անձնակազմի արդյունավետության բարձրացումը սոցիալական բացառման վտանգկված անձանց համալիր կարիքները հոգալու նպատակով:
- **Զբաղվածություն.** հիմնական անելիքը կենտրոնացած է աշխատանքի հավասար մատչելիության ապահովմանը` հաշվի առնելով աշխատանքի շուկայում և զբաղվածության ծառայություններում տեղի ունեցող փոփոխությունները:
- **Բնակարանային խնդիրներ.** աշխատանք է տարվում բնակարանների մատչելիության ապահովման ոլորտում, մասնավորապես այն երկրներում, որտեղ կան բնակարանային մեծ խնդիրներ:
- **Երեխաներ և ընտանիք.** այս ոլորտում գործադրվող ջանքերն ուղղված են երեխաների իրավունքներին ինտեգրված մոտեցման մշակմանը` ԵԽ կոնվենցիաներին և ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիային համապատասխան: Շեշտը դրվում է ժամանակակից հասարակությունում երեխաների լրիվ և կանոնավոր զարգացման հարցում ծնողների դերի վրա:

*Սոցիալական համախմբվածության զարգացում*

Սոցիալական համախմբվածության վերանայված ռազմավարությունը սահմանում է Սոցիալական համախմբվածության զարգացման բաժնի աշխատանքի հիմնական ուղղությունները: Ընթացիկ աշխատանքները ներառում են սոցիալական համախմբվածության խթանման համար անհրաժեշտ օգտակար ցուցիչների և հայեցակարգային ու մեթոդաբանական այլ միջոցների մշակումը, և Բաժինը կազմակերպում է տարեկան բաց համաժողովներ, որպեսզի քննարկի սոցիալական համախմբվածությանը ներգործող սոցիալական փոփոխությունների տարբեր ասպեկտները: Քննարկումների վերլուծությունը հրատարակվում է «Սոցիալական համախմբվածության միտումներ» շարքում, իսկ «Սոցիալական համախմբվածության զարգացումներ» պարբերականը մանրամասնում է տարբեր նախաձեռնություններ:

*Սոցիալական իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիաներ*

Եվրոպական վերանայված սոցիալական խարտիան և նրա արձանագրությունները երաշխավորում են մի շարք հիմնարար սոցիալական փոփոխություններ (տե՛ս «Մարդու իրավունքներ. պաշտպանություն, խթանում և կանխարգելում» գլուխը): Սոցիալական ապահովության եվրոպական կանոնագիրքը և նրա Արձանագրությունը երաշխավորում են պաշտպանության նվազագույն մակարդակները, այդ թվում՝ բժշկական խնամք, հիվանդության նպաստ, աշխատանքի ժամանակ ձեռք բերված վնասվածքների փոխհատուցում, մայրության, գործազրկության, հաշմանդամության և կերակրողի մահվան դեպքում ընտանիքի անդամներին տրվող նպաստ, ընտանեկան նպաստներ և թոշակ:

*Պաշտպանությունն արտասահմանում*

Ստորև ներկայացված համաձայնագրերը դյուրին են դարձնում աշխատողների և նրանց ընտանիքների միջազգային մոբիլությունը, առանց մշակութային ինքնության կորստի նրանց ինտեգրումը հյուրընկալող երկրներում, ինչպես նաև նրանց իրավական պաշտպանությունը և բարեկեցությունը:

- **Սոցիալական ապահովության մասին եվրոպական կոնվենցիա.** Այս կոնվենցիան հիմնված է չորս հիմնարար սկզբունքների վրա՝ հավասար վերաբերմունք, կիրառելի օրենսդրության միանմանություն, իրավունքների պաշտպանություն և արտասահմանում նպաստների վճարում: Կոնվենցիան ընդգրկում է ողջ օրենսդրությունը հիվանդության, մայրության և հաշմանդամության նպաստները, թոշակը, կերակրողի մահվան դեպքում ընտանիքի անդամներին տրվող թոշակները, աշխատանքի ընթացքում ձեռք բերված վնասվածքների և հիվանդությունների նպաստները, կյանքի ապահովագրության վճարումները և գործազրկության ու ընտանեկան նպաստները:
- **Սոցիալական և բժշկական օգնության եվրոպական կոնվենցիան** հիմնված է հավասար վերաբերմունքի սկզբունքի վրա: Կոնվենցիայի կողմերը հանձն են առնում երաշխավորել, որ օրինական կարգով իրենց տարածքում գտնվող Կոնվենցիայի կողմ հանդիսացող մյուս երկրների քաղաքացիները ստանան իրենց իսկ քաղաքացիներին տրամադրվող համարժեք սոցիալական և բժշկական օգնություն:
- **Ներգաղթած աշխատողների իրավական կարգավիճակի մասին եվրոպական կոնվենցիան** ամրագրում է ներգաղթած աշխատողների և հյուրընկալող երկրի քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը և երաշխավորում է ընտանիքի վերամիավորման իրավունքը: Այս կոնվենցիայի կիրառումը վերահսկում է խորհրդակցական կոմիտեն:

*Երկկողմանի և տարածքային սոցիալական ապահովության համագործակցություն*

Եվրոպայի խորհուրդն ընդգրկուն երկկողմանի և տարածքային օժանդակության ծրագիր ունի կենտրոնական և արևելյան Եվրոպայի իր անդամ պետությունների համար: Նպատակն է օգնել նրանց կիրառել պետական սոցիալական ապահովության օրենսդրություն, որը համապատասխանում է Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի և նրա արձանագրության նվազագույն չափանիշներին: Եվրոպայի խորհուրդը նաև խթանում է սոցիալական ապահովության համակարգումը՝ խրախուսելով կապերն անդամ պետությունների միջև՝ ԵԽ համապատասխան իրավական փաստաթղթերի կիրառմամբ: Սա երաշխավորում է հավասարապես մատչելի սոցիալական ապահովություն ներգաղթած աշխատողների և նրանց ընտանիքների համար, հատկապես երբ նրանք արդեն աշխատել են երկու կամ ավելի երկրներում:

*Հաշմանդամներ*

Եվրոպայի խորհուրդը հստակ քաղաքականություն է խթանում հաշմանդամ մարդկանց համար՝ առանձնահատուկ շեշտ դնելով նրանց վերականգնման, սոցիալական ինտեգրման և համայնքի կյանքում լիիրավ մասնակցության խնդիրներին: Կազմակերպության քաղաքականության մոդելը վերացնում է ցանկացած բնույթի բացառում՝ լինի այն հոգեբանական, կրթական, ընտանիքին առնչվող, մշակութային, սոցիալական, մասնագիտական, ֆինանսական կամ ճարտարապետական: Այն խթանում է անկախ կյանքն ու լիիրավ քաղաքացիությունը և օգնում է այս ամենը կյանքի կոչել եվրոպական մի շարք նախաձեռնությունների, ինչպես նաև ներպետական օրենսդրական բարեփոխումների խթանման միջոցով:

*Միգրացիոն խնդիրներ*

Եվրոպայի խորհրդի աշխատանքն այս ոլորտում բևեռվում է միգրացիայի պատճառներին, միգրանտների իրավական կարգավիճակին և միգրանտ և փախստական բնակչության ինտեգրմանը: Եվրոպայի խորհրդի քաղաքականությունները շեշտադրում են ինտեգրումը և ուղենիշներ տրամադրում համայնքում փոխհարաբերությունները բարելավելու, համախմբվածությունը և հանդուրժողականությունը խթանելու և միգրանտների սոցիալական իրավունքները երաշխավորելու նպատակով: Մեկ հանձնարարական, օրինակ, խթանում է քաղաքացիություն չունեցողների համար պետական սեկտորում աշխատանքի մատչելիությունը:

Անկանոն միգրացիան համարելով հիմնական մտահոգության առարկա՝ Եվրոպայի խորհուրդն ընդունել է միգրացիայի կառավարման ռազմավարություն, որը հիմնված է միգրանտների մարդու իրավունքների պաշտպանությանը մուտքի, տարանցման և ելքի երկրների միջև երկխոսության և համագործակցության խթանմանը: ԵԽ խնդիրներից մեկն այն կարգավորումների և գործելակերպի ուսումնասիրությունն է, որոնք ներգործում են օտա-

րերկրյա բնակիչների և տվյալ տարածք մուտք գործելու թույլտվություն ստացած այլ անձանց իրավական կարգավիճակին:

*Գնչուական և շրջիկ համայնքներ*

Եվրոպայի խորհուրդն անդամ պետություններին օգնում է բարելավել Եվրոպայի գնչուական և շրջիկ համայնքների իրավիճակը օժանդակության ծրագրերի իրականացման միջոցով, ինչպիսին է օրինակ հարավարևելյան Եվրոպայում գնչուներին ուղղված` Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի համատեղ ծրագիրը: Եվրոպայի խորհուրդը շեշտը դնում է երկու կարևոր կողմերի վրա` համապարփակ ներպետական քաղաքականությունների անհրաժեշտություն և այս քաղաքականությունների մշակման և իրագործման ոլորտում նշված համայնքների ընդգրկում, մասնավորապես տեղական մակարդակում: Գնչուների և շրջիկների մասնագետների խումբն ուղենիշներ և առաջարկներ է մշակում այս համայնքների համար հիմնարար իրավունքների մատչելիության ապահովման նպատակով: Գնչուներին ուղղված աշխատանքների Համակարգողը սերտ կապեր ունի եվրոպական գնչուների և շրջիկների համաժողովի հետ, որը 2004թ. Ստրասբուրգում ստեղծված միջազգային ընկերակցություն է և նպատակ ունի ողջ Եվրոպայում վերոնշյալ բնակչությանը ձայնի հնարավորություն տալ:

*Բնակչություն և ժողովրդագրական զարգացումներ*

«Եվրոպայում ժողովրդագրական վերջին զարգացումները» վերնագրված ամենամյա զեկույցը տրամադրում է թարմ տեղեկատվություն 46 անդամ պետություններում բնակչության զարգացումների վերաբերյալ` բնակչության թիվ, բնակչության աճ, միգրացիա, ամուսնությունների և ամուսնալուծությունների, մահացության, օտարերկրյա բնակչության ցուցանիշներ: Այս զեկույցը մատչելի է ինչպես տպագրված, այնպես էլ էլեկտրոնային տարբերակով:

**Ինտերնետային կայք`**
http://www.coe.int/T/E/Social_Cohesion/

# Եվրոպայի խորհրդի զարգացման բանկը

*Սոցիալական զարգացման բանկ Եվրոպայում*

Եվրոպայի խորհրդի զարգացման բանկը (ԵԽԲ) ստեղծվել է 1956թ. Եվրոպայի խորհրդի մասնակի համաձայնությամբ և ներկայում ունի 38 անդամ: Նրա գերակայությունն է ֆինանսական օժանդակություն տրամադրել անդամ պետություններին, որոնք սոցիալական խնդիրներ ունեն փախստականների, տեղահանված անձանց, միգրանտների և բնական կամ էկոլոգիական աղետներից տուժածների հետ կապված: Այսօր ԵԽԲ-ի գործունեությունըգերազանցում է նրա գերակայությունները և ներառում է նոր սոցիալական և տնտեսական նպատակներ, մասնավորապես՝ սոցիալական խոցելի խմբերի՝ լքված երեխաների, հաշմանդամների, էթնիկ փոքրամասնությունների և աղքատության շեմին գտնվողների պայմանների բարելավումը:

Այս գերակայությունները հաշվի առնելով՝ ԵԽԲ-ը ֆինանսական օժանդակություն է ցուցաբերում սոցիալական ծարգրերին երեք հիմնական ոլորտներում.

- **Սոցիալական ինտեգրման ամրապնդում,** մասնավորապես՝ օժանդակություն ցուցաբերելով փախստականներին և միգրանտներին, մեծացնելով սոցիալական բնակարանային ֆոնդը, բարելավելով կենսապայմանները քաղաքային և գյուղական տարածքներում և խթանելով աշխատատեղերի ստեղծումը և պահպանումը:
- **Շրջակա միջավայրի պատասխանատու կառավարում** բնական և էկոլոգիական աղետներից տուժած տարածքներում իրականացնելով կանխարգելիչ գործունեության և օգնության ցուցաբերելով ջրի մատակարարման ենթակառուցվածքների կառուցման կամ վերականգնման, հեղուկ և պինդ թափոնների վերացման, մաքուր և վերարտադրվող էներգիայի արտադրության և ժառանգության պահպանման ու վերականգնման միջոցով:
- **Մարդկային կապիտալի զարգացում** կրթության, մասնագիտական վերապատրաստման և առողջապահության ոլորտներում ծրագրերի իրականացմամբ:

ԵԽԲ-ը «վստահության ընտրովի հաշիվ» է բացել, որի միջոցով

այն իր տարեկան շահույթը ուղղում է բացառապես ընդգծված սոցիալական բովանդակությամբ և առավել կարիքավոր երկրներում իրականացվող ծրագրերի սուբսիդավորմանը և բացառիկ նվիրատվություններին:

ԵԽԲ-ը ավելի քան 20 միլիարդ եվրո վարկեր է տրամադրել իր հիմնադրման օրվանից ի վեր, և նրա տրամադրած տարեկան գումարները կազմում են գրեթե 1.6 միլիարդ եվրո: 2004թ. դեկտեմբերի 31-ին նրա տրամադրած ընդհանուր կապիտալը 3294 միլիոն եվրո էր, որը բաշխվել էր նրա 38 անդամ պետությունների միջև:

2005-2009թթ. ԵԽԲ-ը նպատակ ունի մեծացնել իր գործունեությունը անդամ պետություններում, մասնավորապես կենտրոնական և հարավարևելյան Եվրոպայում:

**Ինտերնետային կայք**
http://www.coebank.org

# Հյուսիս-հարավ կենտրոն

Համաշխարհային փոխկախվածության և համերաշխության եվրոպական կենտրոնը (Հյուսիս-հարավ կենտրոն) տեղծվել է Լիսաբոնում 1990թ. որպես Եվրոպայի խորհրդի մասնակի համաձայնագիր, 1988թ. Եվրոպայի խորհրդի կազմակերպած Հյուսիս-հարավ փոխկախվածության եվրոպական արշավից հետո:

Կենտրոնն ունի երկու նպատակ՝ բարձրացնել հանրության իրազեկությունը Հյուսիս-հարավ փոխկախվածության և համերաշխության շուրջ և կապեր ստեղծել կառավարությունների, տեղական իշխանությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, խորհրդարանականների և լրատվամիջոցների հետ՝ մարդու իրավունքները, բազմակարծ ժողովրդավարությունը և գլոբալ կրթությունն ամբողջ աշխարհում խթանելու նպատակով:

Ահա թե ինչու է Հյուսիս-հարավ կենտրոնը հաճախ նկարագրվում որպես դեպի աշխարհ բացվող պատուհան. նրա նպատակն է Եվրոպայի խորհրդի արժեքները հռչակել Եվրոպական մայրցամաքի սահմաններից դուրս:

*Համախմբում, երկխոսության խթանում, պեղեկացում*

Իր սեմինարների, համաժողովների, դասընթացների, կրթական նյութերի, հրապարակումների և այլ գործունեության միջոցով Կենտրոնը փորձում է համախմբել *քառակողմ քննարկման մասնակիցներին* (կառավարություններ, խորհրդարանականներ, տեղական և տարածքային իշխանություններ, քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպություններ)՝ գաղափարներ արտահայտելու և քննարկելու, մարդկանց գլոբալացման խնդիրներին ծանոթացնելու և համաշխարհային համագործակցությունն ու համերաշխությունը խթանելու նպատակով:

Հյուսիս-հարավ կենտրոնի գործունեությունն իրականացվում է երկու բաժիններով:

*Գլոբալ կրթություն և երիտասարդություն*

Այս բաժինը խթանում է կայուն զարգացման, մարդու իրավունքների, խաղաղության, հակամարտությունների կանխարգելման և միջմշակութային կրթության նպատակով գլոբալ կրթությունը: Այն կազմակերպում է երիտասարդական ուսումնական ծրագիր և ստեղծում գլոբալ և տարածքային ցանցային համագործակցություն:

Կենտրոնն աշխատում է համակարգել գլոբալ կրթությունը համաեվրոպական մակարդակում` բարելավելով դրա որակը և ներգործությունը եվրոպական մասնագետների վերահսկման գործընթացների միջոցով, և համագործակցում է Եվրոպական միության նոր անդամ պետությունների հետ` այս երկրներում իր դիրքերն ամրապնդելու նպատակով:

Երիտասարդական ծրագրերի ոլորտում նպատակը երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների` որպես զարգացման և գլոբալ փոխկախվածության շարժիչ ուժի նշանակության ընդլայնումը, բարելավումը և տեսանելիության մեծացումն է:

*Երկխոսություն և կարողունակության զարգացում հանուն փոխկախված աշխարհում համերաշխության*

Եվրոպայի խորհուրդը հարթակ է տրամադրում Եվրոպայի պետությունների և Միջերկրական ծովի հարավային և Աֆրիկայի երկրների միջև այն քաղաքականությունների շուրջ երկխոսության համար, որոնք պետք է կիրառվեն հանուն ժողովրդավարության, մարդու իրավունքների, սոցիալական համախմբվածության և կարողականության զարգացման: Այս բաժնի հիմնական նպատակն է խթանել Եվրոպայի խորհրդի արժեքները և ընդլայնել գոյություն ունեցող Հյուսիս-հարավ համագործակցային ցանցը:

Transmed ծրագիրը Միջերկրական ծովի հարավային երկրներում խթանում է երկխոսություն միջմշակութային և միջկրոնական թեմաների, կանանց իրավունքների և ժողովրդավարության առաջխաղացման, ինչպես նաև իրավունքի գերակայության հարցերի շուրջ:

Եվրոպա-Աֆրիկա երկխոսության նպատակն է դյուրին դարձնել շփումն ու փորձի փոխանակումը եվրոպական և աֆրիկյան գործընկերների (մասնավորապես խորհրդարանականների) միջև այնպիսի խնդիրների շուրջ, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանությունը, լավ կառավարումը, հակամարտությունների կանխարգելումը և տարաբնակեցումը:

Այս ծրագրերին օժանդակում է Մուլտիմեդիայի բաժինը, Կենտրոնի հաղորդակցական սեկտորը, որը վերահսկում է Հյուսիս-հարավ կենտրոնի հրապարակումները, մասնավորապես "*Ինդեփենդենք*" պարբերականը, կենտրոնի ինտերնետային էջը և հանրային հարաբերությունները:

Ինտերնետային կայք
http://www.nscentre.org

# Առողջության պահպանում և խթանում

Եվրոպայի խորհուրդը նպատակ ունի ստեղծել եվրոպական առողջապահական բարոյագիտական քաղաքականություն՝

- զուգորդելով մարդու իրավունքները, սոցիալական համախմբվածությունը և առողջապահությունը,
- ներդաշնակեցնելով անդամ պետությունների առողջապահական քաղաքականությունները անվտանգության և որակի առումով,
- մշակելով կանխարգելիչ բժշկություն և առողջապահական կրթություն,
- խթանելով հիվանդների իրավունքները, առողջապահության մատչելիությունը, քաղաքացիական մասնակցությունը և խոցելի խմբերի հովանավորությունը:

*Եվրոպայի առողջապահության նախարարների համաժողովներ*

Եվրոպայի առողջապահության նախարարները կանոնավոր հանդիպումներ են ունենում՝ առողջապահության ոլորտում նոր մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ քաղաքականությունների մշակման նպատակով: Նրանց 7-րդ համաժողովը, որը տեղի է ունեցել 2003թ. հունիսին Նորվեգիայի Օսլո քաղաքում, անդրադարձել է «Առողջություն, արժանապատվություն, մարդու իրավունքներ. առողջապահության նախարարների դերը և պարտականությունը» թեմային: 2007թ. Առողջապահության նախարարների համաժողովը հյուրընկալվելու է Սլովակիայի հանրապետությունում:

*Առողջապահական ծառայություններ. սոցիալական համախմբվածության հեռանկար*

Եվրոպայի խորհուրդը վերջերս ընդունել է երկու նոր Հանձնարարական: Առաջին Թիվ (2003) 24 հանձնարարականն անդրադառնում է մահացու հիվանդների բուժման նուրբ բարոյագիտական խնդրին և որպես առողջապահական համակարգի ինտեգրված մաս և քաղաքացիների իրավունքների անօտարելի տարր կոչ է անում կիրառել ցավամոքիչ (պալիատիվ) խնամքը: «Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունն առողջապահության ոլորտում. հիվանդը և ինտերնետը» Թիվ (2004) 17 հանձնարարականը շեշտադրում է ինտերնետի դերը՝ որպես հիվանդի համար տեղեկատվության նոր աղբյուր՝ այս համատեքստում մի շարք խիստ միջոցառումներ առաջարկելով պետություններին:
tԵվրոպայի խորհուրդը միացրել է իր ուժերը Եվրոպական հանձնաժողովին և Առողջապահության համաշխարհային կազմակեր-

*Առողջապահական կրթություն երիտասարդների համար*

պության եվրոպական տարածքային գրասենյակին՝ 1991/1992թթ. դպրոցներում առողջապահության խթանման եվրոպական ցանցեր ստեղծելու նպատակով: Սկզբում այս ծրագիրը մեկնարկեց որպես փորձնական ծրագիր Կենտրոնական և արևելյան Եվրոպայի չորս երկրներում, իսկ այժմ ցանցը ներառում է ավելի քան 40 պետություն՝ ավելի քան 500 մասնակից դպրոցներով և 400 000 ուսանողներով: Նրանք դպրոցներում խթանում են առողջ ապրելաոճը՝ ստեղծելով գործընկերություններ և խրախուսելով ուսուցիչների, աշակերտների, ծնողների և ավելի ընդգրկուն համայնքի համատեղ աշխատանքը հանուն բոլորի առողջության բարելավման:

*Արյան փոխներարկում. անվտանգություն և էթիկա*

Արյան կամավոր և անվճար նվիրաբերումները և հեմոթերապիայի անվտանգությունն ու բարելավումը Եվրոպայի խորհրդի ուղենիշային սկզբունքներն են արյան փոխներարկման քաղաքականությունների ներդաշնակեցման ոլորտում: Վերջերս տպագրվել է արյան բաղադրիչների նախապատրաստման, օգտագործման և որակի երաշխավորման ուղեցույցի 11-րդ հրատարակությունը: Այն այժմ տարեկան մեկ անգամ թարմացվում է և օգտագործվում է ամբողջ աշխարհում:

*Օրգանների պատվաստում. կյանքի փրկում*

Եվրոպայի խորհուրդը բարոյագիտական սկզբունքներ է մշակել օրգանների պատվաստման բնագավառում և տպագրել օրգանների, հյուսվածքների և բջիջների անվտանգության և որակի ուղեցույցի երկրորդ հրատարակությունը: Կազմակերպությունը նաև ուղենիշներ է հրապարակել քսենոտրանսպլանտացիայի (մարդկանց պատվաստելու նպատակով կենդանիների օրգանների և հյուսվածքների օգտագործում) բարոյագիտական և սոցիալական հետևանքների վերաբերյալ: Թիվ (2004) 7 հանձնարարականն ուղղություն է տալիս անդամ պետություններին օրգանների թրաֆիկինգի վտանգը նվազեցնելու համապատասխան կազմակերպչական և իրավական միջոցների վերաբերյալ: Հանձնարարականն ընդգծում է օրգանների թրաֆիկինգի հետ կապված հանրային առողջապահության ռիսկերը և առաջարկություններ անում պատվաստման համակարգի նկատմամբ հանրության վստահությունը պահպանելու շուրջ:

*Ֆարմակոպեա. համաշխարհային առաջատար*

Եվրոպական ֆարմակոպեան սահմանում է ընդհանուր պարտադիր չափանիշներ (մոնոգրաֆներ)՝ բոլոր անդամ պետություններում դեղամիջոցների որակը երաշխավորելու նպատակով: Եվրոպական Ֆարմակոպեան խթանում է միասնական վերլուծական մեթոդներ և մշակում մարդկանց և կենդանիների բուժման համար օգտագործվող նյութերի չափանիշներ: Այսօր բժշկության մեջ համընդհանուր օգտագործում ունեցող նյութերի 70%-ը նկարագրված են Եվրոպական ֆարմակոպեայում: Պետական չափանիշները համակարգվում են, և այժմ ավելի քան 1850 պարտադիր

եվրոպական չափանիշներ կան նոր դեղամիջոցների համար:

Այս աշխատանքը կատարվում է համաձայն Եվրոպական միության և 34 անդամ պետությունների վավերացրած կոնվենցիայի: Այնուամենայնիվ, Ֆարմակոպեայի ներգործությունը տարածվում է Եվրոպայի սահմաններից դուրս. շատ այլ երկրներ հաշվի են առնում այս չափանիշներն իրենց պետական օրենսդրություններում:

*Եվրոպական Ֆարմակոպեան (5-րդ հրապարակություն)*

2005թ. հունվարի 1-ից պարտադիր բնույթ է կրում: Այն մատչելի է տպագրված, էլեկտրոնային, ինչպես նաև օն-լայն տարբերակներով: Տարեկան երեք անգամ թարմացվում է լրացուցիչ հրապարակումներով:

*Պոմպիդուի խումբ. համագործակցություն թմրամիջոցներին առնչվող խնդիրների շուրջ*

Պոմպիդուի խումբը թմրամոլության և թրաֆիկինգի դեմ պայքարում նախարարական համագործակցության բազմապրոֆիլ համաժողով է: Խումբն այժմ ունի 34 անդամ պետություններ: Այն սերտորեն համագործակցում է նոր ժողովրդավարությունների հետ թմրանյութերի դեմ պայքարում՝ սեմինարների, փոխանակման և վերապատրաստման ծրագրերի միջոցով:

Խմբի առողջապահության նախարարները հանդիպում են երեք տարին մեկ անգամ՝ խմբի աշխատանքը վերանայելու և նոր պահանջներ սահմանելու նպատակով: Ընթացիկ գերակայությունները ներառում են թմրամոլության կանխարգելում, հասարակության մեջ թմրամոլների և թմրանյութ օգտագործողների վերաինտեգրում, քրեական արդարադատության համակարգի գործառնություն, վերապատրաստման և հետազոտությունների խթանում թմրամոլության և էթիկայի հանրային ծախսերի ոլորտում:

Եվրոպայի խորհուրդը նաև համագործակցում է Միջերկրական ծովի ավազանի երկրների հետ՝ համաճարակաբանության փորձագետների ցանց ստեղծելու նպատակով:

*Սպառողների առողջության պաշտպանություն*

Եվրոպայի խորհուրդը նպատակ ունի բարելավել սպառողների առողջության պաշտպանությունը՝ սննդի և անվտանգության հարցերին ցուցաբերվող իր նոր մոտեցումով: Կազմակերպությունն արդեն իր ներդրումն է ունեցել ներպետական օրինագծերի և ԵՄ հանձնարարականների մշակման գործում՝ նպատակ ունենալով ներդաշնակեցնել մարդկանց սննդին, ինչպես նաև դեղագործության և կոսմետիկայի ոլորտներին ներազդող ապրանքների որակը և անվտանգությունը կարգավորող օրենքներն ու դրանց կիրառումը:

**Ինտերնետային կայք**
http://www.coe.int/T/E/Social_Cohesion/Health

# Եվրոպական մշակութային կոնվենցիա. գործողության շրջանակ

Եվրոպայի խորհրդի մշակութային կոնվենցիան պաշտոնական շրջանակ է ապահովում կրթության, մշակույթի, ժառանգության, երիտասարդության և սպորտի ոլորտում Եվրոպայի խորհրդի աշխատանքի համար: Եվրոպական մշակութային կոնվենցիայի գաղափարը, որը լրացնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, առաջին անգամ առաջարկել է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը:

Եվրոպական մշակութային կոնվենցիան ստորագրման համար բացվել է 1954թ. դեկտեմբերի 19-ին, Փարիզում, և ուժի մեջ մտել 1955թ. մայիսի 5-ին: Յուրօրինակ է, որ Կոնվենցիան այժմ ներառում է եվրոպական բոլոր 49 պետությունները, այսինքն՝ Եվրոպայի խորհրդի 46 անդամ պետությունները, ինչպես նաև Բելառուսը, Վատիկանը և Մոնտենեգրոն:

Կոնվենցիայի հիմնական նպատակներն են պահպանել եվրոպական մշակույթը և տարբեր ժողովուրդների միջև զարգացնել փոխադարձ ըմբռնումը և մշակութային բազմազանության գնահատումը: Գաղափարը հին պառակտումները դարմանելու նպատակով կրթությունը և մշակույթը օգտագործելն էր, նոր հակամարտությունները կանխարգելելը և ժողովրդավարությունն ամրապնդելը: Հուսալով, որ եվրոպացիների մեջ առավել լավ փոխըմբռնման պայմաններում կարելի է հասնել առավել մեծ միասնության՝ Կոնվենցիան առաջնային նպատակներ էր սահմանում.

- խրախուսել եվրոպացիներին պահպանել իրենց սեփական մշակութային ժառանգությունը (այդ թվում՝ իրենց լեզուն, պատմությունը և քաղաքակրթությունը) և ճանաչել այն՝ որպես ավելի ընդգրկուն «եվրոպական» ժառանգության մի մասը,
- խթանել մարդկանց և մշակութային առարկաների մոբիլությունը՝ այլ երկրների մշակույթի և ժառանգության ընկալումը մեծացնելու նպատակով,
- խրախուսել ծավալուն մշակութային համագործակցությունը մայրցամաքում:

Տարիների ընթացքում ի հայտ եկան երեք այլ նպատակներ՝

- ստեղծել ժողովրդավարական կյանքում լիիրավ մասնակցության պայմաններ,
- եվրոպական ճնաչափ ներմուծել մշակութային չափանիշների, քաղաքականության և դրա կիրառության ոլորտում,
- խրախուսել մշակութային բազմազանության նկատմամբ հարգանքը՝ միաժամանակ ստեղծելով ընդհանուր արժեքներ:

Եվրոպական մշակութային կոնվենցիայի տեսլականը չմասնատված Եվրոպան էր: Այն ճեղքեց Երկաթե վարագույրը և դարձավ Եվրոպայի խորհրդին լիիրավ անդամակցության առաջին քայլը: Վերջին 50 տարիներին կոնվենցիան մշակույթի ողջ սպեկտրով ընդգրկուն միջազգային համագործակցություն է խթանել:

*Վրոցլավի հռչակագիրը. մշակութային համագործակցության 50 տարին*

Եվրոպական մշակութային կոնվենցիան ընդունվել է 1954թ. դեկտեմբերին, և Եվրոպայի խորհուրդը նրա 50-ամյակը նշեց 2004թ. դեկտեմբերին: 2004թ. դեկտեմբերին, Լեհաստանի իշխանությունների հրավերով և Նախարարների կոմիտեում Լեհաստանի նախագահության ժամանակ, Լեհաստանի Վրոցլավ քաղաքի Օսոլինիում ազգային ինստիտուտում մեկնարկեց մի մեծ համաժողով՝ նշանավորելու Կոնվենցիայի 50-ամյակի տոնակատարության սկիզբը: Վրոցլավը համաժողովի համար խորհրդանշական ընտրություն էր որպես մշակութային խաչմերուկ իր ունեցած երկարաշունչ պատմության առումով:

Համաժողովի հիմնական նշանակությունը «Վրոցլավի հռչակագրի» ընդունումն էր, որն ամփոփում է Կոնվենցիայի հիմնական ձեռքբերումները և սահմանում ապագայի հիմնական մարտահրավերներն ու գործունեությունների հիմնական ուղղությունները: Այն բևեռվում էր հետևյալին՝

- «եվրոպական ինքնության» ընկալման արմատավորմանը՝ առավել ընդգրկուն եվրոպայում նոր բաժանումների ի հայտ գալը կանխարգելելու նպատակով,
- մշակութային բազմազանության, քաղաքացիական հասարակության և քաղաքացիության խթանմանը,
- որպես հակամարտությունների կանխարգելման, հաշտեցման և սոցիալական համախմբվածության երաշխավորման միջոց՝ միջմշակութային և միջկրոնական երկխոսության խթանմանը:

**Ինտերնետային կայք**
Մշակութային քաղաքականություն և գործունեություն
http://www.coe.int/T/E/Cultural_Co-operation

# Կրթություն

*Գործառնական համակարգ*

Երկու մարմիններ միասին կիսում են Եվրոպայի խորհրդի կրթական ծրագրի պատասխանատվությունը՝ Կրթության հարցերով ղեկավար կոմիտեն (CDED) և Բարձրագույն կրթության և հետազոտության հարցերով ղեկավար կոմիտեն (CD-ESR)։

- CDED-ի կազմը ներկայացվում է Եվրոպական մշակութային կոնվենցիան ստորագրած անդամ պետությունների Կրթության նախարարություններից։

- CD-ESR-ը պատասխանատու է Եվրոպայի խորհրդի բարձրագույն կրթության և հետազոտությունների ծրագրի համար։ Եվրոպայի խորհրդի կոմիտեների հիմնական մասը միջկառավարական են. CD-ESR-ը միակ համաեվրոպական ներկայացուցչական ժողովն է կրթության նախարարությունների և ակադեմիական համայնքի ներկայացուցիչների համար։

*Նպատակներ և խթաններ*

Եվրոպայի խորհուրդն անդրադառնում է հետևյալ կրթական խնդիրներին՝

- Ինչպե՞ս կարող է կրթությունը խթանել հիմնարար ազատությունները և բազմակարծ ժողովրդավարությունը։
- Ինչպե՞ս կարող է կրթությունը համախմբել Եվրոպայի ժողովուրդներին, խթանել փոխըմբռնում, ներշնչել վստահություն, որը վեր է մշակութային տարբերություններից և պետական սահմաններից։
- Ինչպե՞ս կարող է այն օգնել եվրոպական կառավարություններին և քաղաքացիներին դիմակայել առօրյա սոցիալական դժվարություններին։

Սրանք նախանձախնդիր նպատակներ են, և Եվրոպայի խորհուրդը դրանք իրագործում է՝

- կազմակերպելով ինչպես ներդպրոցական, այնպես էլ արտադպրոցական մեծ ծրագրեր (քաղաքականություն, ուսումնական ծրագրեր և մեթոդներ),
- համախմբելով գաղափարներ, փորձ և հետազոտություններ,
- ամրապնդելով կապերը և փոխանակումները, ստեղծելով ցանցեր և խրախուսելով համագործակցությունը,

- աշխատելով որակավորումների միջազգային ճանաչման համար,
- հրատարակելով հետազոտություններ, ձեռնարկներ և գործնական այլ նյութեր քաղաքականություն մշակողների և ուսուցիչների համար,
- աշխատելով եվրոպական այլ հաստատությունների և ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

*Համագործակցություն հանուն կրթության վերափոխման*

Կրթության վերափոխմանն ուղղված համագործակցությունը հովանավորող համակարգ է Եվրոպայի խորհրդի Ներդպրոցական, արտադպրոցական և բարձրագույն կրթության տնօրինության իրականացրած համագործակցության և օժանդակության ծրագրերի համար: Այն Եվրոպայի խորհրդի կրթական դերի արտահայտությունն է, որի էությունը Եվրոպայում ժողովրդավարության խթանումն է, կրթական բարեփոխումներին օժանդակությունը, համաեվրոպական չափանիշների և լավ փորձի տարածումը և հատուկ կարիքներ ունեցող անդամ պետություններին օժանդակության և խորհրդատվության տրամադրումը:

Գործունեության այս տեսակների հիմնական մասը ներառում է օժանդակություն առանձին անդամ պետություններին կամ ապագա անդամ պետություններին, որոնք իրենց կրթական քաղաքականություններում, օրենսդրությունում չափանիշների և մեթոդների կառուցվածքային փոփոխություններ են կատարում տնօրինության գործունեության հիմնական ոլորտներում (ժողովրդավարական քաղաքացիություն, լեզուներ և պատմություն): Կրթության տնօրինությունը նաև խրախուսում է տարածքային համագործակցություն և գործունեություն իրականացնում, որն ուղղված է փոխադարձ վստահության պայմաններում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այնպիսի հարցերի շուրջ երկխոսության խթանմանը, ինչպիսիք են կրթական և փոքրամասնություններին առնչվող քաղաքականությունը և կրթության որակը:

*«Կրթություն ժողովրդավարական քաղաքացիության համար» ծրագիր*

Մշակութային համագործակցության խորհուրդը (CDCC) Կրթություն ժողովրդավարական քաղաքացիության համար (ԿԺՔ) ծրագիրը սկսեց 1997թ.՝ մասնակցային ժողովրդավարության և քաղաքացիների կարգավիճակի իմաստը վերանայելու և հասարակության ակտիվ և պատասխանատու քաղաքացիներ լինելու համար մարդկանց անհրաժեշտ արժեքները, գիտելիքները վերլուծելու նպատակով:

Ծրագրի առաջին փուլում՝ 1997-2000թթ., հետազոտությունը բևեռվեց անհրաժեշտ հմտությունների և վերապատրաստման ռազմավարություններին: Այն հիմք ծառայեց «քաղաքացիության դաշտեր» ծրագրերի գնահատման համար անհրաժեշտ վերապատրաստման և քաղաքականություն մշակողների, փորձագետների,

գործող մասնագետների, ոչ կառավարական և միջկառավարական կազմակերպությունների ցանցի ստեղծման համար:

Երկրորդ փուլը (2001-2004թթ.) կիրառեց և բարելավեց ԿԺՔ քաղաքականությունը, պրակտիկայի փոխանակման նպատակով ցանցերի ստեղծումը և անդամ պետություններում քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության մասին տեղեկատվության տարածումը՝ Եվրոպայում բազմակարծ ժողովրդավարություն կերտելու նպատակով:

2005թ.՝ Կրթության միջոցով քաղաքացիության եվրոպական տարին նշանավորվեց եվրոպական տարբեր երկրներում իրականացվող մի շարք միջոցառումներով: Ծրագրերը և տեղայնացված միջոցառումները մեկնարկեցին կառավարության բոլոր մակարդակներով (ներպետական, տարածքային և տեղական) ինչպես անդամ պետություններում, այնպես էլ հենց Եվրոպայի խորհրդում: Եվրոպայի խորհուրդը նաև ներմուծել է հատուկ ծրագրեր անցումնային ժողովրդավարություններում՝ վերոնշյալ կարևոր թեմաների շուրջ հետազոտական և կրթական ծրագրեր մշակելու նպատակով:

*Միջմշակութային կրթության նոր մարտահրավերը*

Կրոնական բազմազանության և երկխոսության այս ծրագիրը մեկնարկել է 2002թ. ի նպաստ միջմշակութային փոխվստահության երկխոսությանը: Սա Եվրոպայի խորհրդի հիմնական գործունեություններից մեկն է. ծրագիրը քաղաքականություն մշակողներին, կրթական համակարգի մասնագետներին և ուսուցիչներին նախազգուշացնում է ընդհանուր առմամբ միջմշակութային կրթության նոր մոտեցումների և մասնավորապես դրա կրոնական տասանկյունների վերաբերյալ թե՛ ներդպրոցական և թե՛ արտադպրոցական կրթության ոլորտում՝ ընդգծելով լավագույն գործնական օրինակները: Միջմշակութային կրթությունը ընդգրկուն է (առնչվում է ներառման, մասնակցության և համատեղ կեցության խնդիրներին) և բազմամշակութայնության և կրոնական բազմազանության մարտահրավերներին դիմակայելու ուղիներ է մատնանշում հակամարտությունների ժողովրդավարական հանգուցալուծմանը կողմնակից համատեքստում:

*Բարձրագույն կրթություն և հետազոտություններ*

Բարձրագույն կրթության և հետազոտության հարցերով ղեկավար կոմիտեն պատասխանատու է բարձրագույն կրթության և հետազոտությունների ասպարեզում Եվրոպայի խորհրդի կատարած աշխատանքի համար: Այն նպատակ ունի Եվրոպայում զարգացնել բարձրագույն կրթության և հետազոտությունների համակարգը՝ հիմնվելով ընդհանուր ժողովրդավարական սկզբունքների և եվրոպական համալսարանական ժառանգության արժեքների վրա: Սա ներառում է սովորելու, սովորեցնելու և հետազոտելու ազատությունը և ժողովրդավարական հասարակությունում ակա-

դեմիական ինստիտուտների ինքնակառավարման իրավունքը:

Ընթացիկ գերակայություններն ընդգրկում են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ստեղծումը, սոցիալական համախմբվածության համար կրթության խթանումը, սոցիալական փոփոխվող համատեքստում բարձրագույն կրթության և հետազոտությունների համար հանրային պատասխանատվության վերագնահատումը, Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության որակավորման աստիճանների ճանաչման մասին կոնվենցիայի (ԵՊՇ. 165) կիրառումը, հարավարևելյան Եվրոպայում բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումը և եվրոպական համալսարանների ժառանգության և ինքնավարության պահպանումը:

Բոլոնիայի գործընթացը. եվրոպական բարձրագույն կրթության տիրույթի ստեղծում

Բարձրագույն կրթությունը Եվրոպայում ներկայում ենթարկվում է վերջին տասնամյակների ամենաընդգրկուն և կարևոր բարեփոխմանը: Բարեփոխման շարժումը, որը հայտնի է որպես Բոլոնիայի գործընթաց, նպատակ ունի ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տիրույթ մինչև 2010թ.: Այս տարածքի ներսում գտնվող կրթական համակարգերը կլինեն բաց և դյուրըմբռնելի, կբարեփոխվի աստիճանակարգը, և պաշտոնապես կճանաչվեն որակավորումները: Բարձրագույն կրթությունն առավել լավ համարեցված կլինի աշխատանքային շուկային և կխրախուսվի ողջ կյանքի ընթացքում սովորելու գաղափարը:

Եվրոպայի խորհրդի հատուկ ներդրումը նախատեսվում է որակավորումների ճանաչման և աստիճանակարգերի բարեփոխման ոլորտներում:

Բարձրագույն կրթության և հետազոտական հարցերով ղեկավար կոմիտեն գործում է որպես կապող օղակ Բոլոնիայի գործընթացին միացած երկրների և Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ հանդիսացող այլ երկրների միջև, որոնք կարող են շահել Գործընթացից՝ առանց դրան պաշտոնապես միանալու:

*Եվրոպայում որակավորումների ճանաչում*

Այս ոլորտում Եվրոպայի խորհուրդը աշխատել է ՅՈՒՆԵՍԿՈ-ի հետ համատեղ՝ Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության որակավորման աստիճանների ճանաչման մասին կոնվենցիայի (ԵՊՇ. 165) շրջանակներում: Կոնվենցիան ստորագրման համար բացվել է 1999թ. փետրվարին: Կոնվենցիան վավերացրել են քառասուն երկրներ, իսկ այնուհետև ութ երկիր ստորագրել են այն:

Եվրոպայի խորհուրդը նաև համագործակցում է ՅՈՒՆԵՍԿՈ-ի հետ Ակադեմիական ճանաչման և շարժի ազգային տեղեկատվական կենտրոնների եվրոպական ցանցի (ENIC) շրջանակներում:

*Բարձրագույն կրթության հանրային պատասխանատվությունը և կառավարումը*

Պետական բյուջեների նկատմամբ պահանջների մեծացումը և Բոլոնիայի շարունակական գործընթացը և ԾԱԳՀ-ը (Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիր (GATS)) նշանակում են, որ բարձրագույն կրթության համար հանրային պատասխանատվությունը անհրաժեշտ է վերագնահատել: Այս փոփոխությունները նաև լույս են սփռում բարձրագույն կրթության համակարգերի և հաստատությունների կառավարման վրա` ուշադրություն բևեռելով կառավարման գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությանը: Եվրոպայի խորհրդի երկու ծրագրերը ներկայում անդրադառնում են այս ոլորտներին, տարբերակներ մշակում և հանձնարարականներ և ուղենիշներ առաջարկում:

*Լեզուների քաղաքականության ծրագիր*

«Լեզուներ, բազմազանություն, քաղաքացիություն» ծրագրի նպատակն է քաղաքականություններ մշակել դպրոցական և շարունակական կրթության համար, ինչպես նաև խթանել սոցիալական համախմբվածությունը և ժողովրդավարական քաղաքացիությունը: Գործունեության շրջանակը ներառում է անդամ պետություններին` լեզուների կրթության քաղաքականությունների պլանավորման և ուսումնական ծրագրում առաջարկվող լեզուների առավել մեծ բազմազանության համար անհրաժեշտ արդյունավետ ռազմավարությունների խթանման ոլորտում օժանդակության ցուցաբերումը:

Ծրագիրը մշակում է ընդհանուր եվրոպական չափանիշներ և օժանդակ նյութեր` լեզուների ուսումնական ծրագրում և որակավորման ոլորտում հետևողականության և թափանցիկության ապահովման նպատակով: Լեզվի իմացության ընդհանուր եվրոպական վեցաստիճան սանդղակ է մշակվել և լայնորեն կիրառվում է նաև Եվրոպական միության կողմից Europass-ում, որը որակավորումների թափանցիկությանը նպաստելու նոր համակարգ է: Ծրագիրն անդրադառնում է լեզվի բոլոր տեսանկյուններին` պետական լեզուներ, ուսուցանման լեզուներ, օտար լեզուներ և միգրանտների լեզուներ: Այն նաև նպաստում է փոքրամասնությունների կրթությանն առնչվող միջոցառումներին:

*Լեզուների եվրոպական օր*

Եվրոպայի խորհուրդը սեպտեմբերի 26-ը հռչակել է Եվրոպական լեզուների օր, որն ամեն տարի տոնվում է ողջ Եվրոպայում: Սա 2001թ. Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության համատեղ կազմակերպած` Լեզուների եվրոպական տարվա շարունակությունն է: Այն Եվրոպայի հազարավոր մարդկանց մասնակից է դարձնում իրադարձությունների, որ փառաբանում են լեզուների բազմազանության և փոխադարձ ընկալման և հանդուրժողա-

կանության, ժողովրդավարական կայունության, աշխատանքով ապահովված և շարժունակ լինելու նպատակով լեզուների ուսումնասիրման ընձեռած օգուտները:

## Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոն (ԺԼԵԿ) (ECML)

*Ժամանակակից լեզուների խթանում*

1994թ. Ավստրիայի Գրաց քաղաքում մասնակի համաձայնությամբ բացված՝ Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնն օժանդակում է 33 անդամ պետությունների իրենց՝ լեզուների կրթության քաղաքականությունների կիրառման գործում:

ԺԼԵԿ-ը միջնաժամկետ ծրագրեր է իրականացնում լեզուների կրթության բնագավառի եվրոպական փորձագետների հետ: Մասնակիցներն անդամ պետություններից հրավիրվում են դասընթացների, համաժողովների, հետազոտական ծրագրերի, և Կենտրոնը հարթակ է տրամադրում տեղեկատվություն հավաքելու և բաժանելու, քննարկումներին նպաստելու և վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքների տարածում ապահովելու համար: Այն նաև Եվրոպայում ունի ուսուցիչների վերապատրաստմամբ, հետազոտություններով և կրթական վարչարարությամբ զբաղվողների ցանցեր:

*Պատմության դասավանդում*

Պատմության դասավանդումը մեծապես պայմանավորված է ժողովրդավարական հասարակությունների ապագա քաղաքացիների գիտելիքներով, հմտություններով և վերաբերմունքով: Քսանմեկերորդ դարի Եվրոպայում պատմության դասավանդման մասին Թիվ (2001) 15 հանձնարարականը սահմանում է Եվրոպայի նորագույն պատմության առանցքային տարեթվերի և իրադարձությունների (1848թ., 1912/13թթ., 1919թ., 1945թ., 1989թ.) վերաբերյալ Պատմության դասավանդման ծրագրի եվրոպական ձևաչափի շրջանակները: Կազմակերպվում են գիտաժողովներ և աշխատող ուսուցիչների համար խորհրդաժողովներ, ինչպես նաև ստեղծվում է տվյալների ինտերակտիվ բազա: Արդյունքները կիրապարակվեն հատուկ էլեկտրոնային սկավառակով 2006թ.:

Եվրոպայի խորհուրդը երկար ժամանակ է, ինչ ընգրկված է պատմության դասավանդման ոլորտում և իր փորձից ելնելով՝ օգնում է նոր անդամ պետություններին բարեփոխել պատմության դասավանդման իրենց ուսումնական ծրագրերը, հրապարակել նոր դասագրքեր և վերապատրաստել պատմության ուսուցիչներին: Կազմակերպության երեք հիմնական ծրագրերն են՝ Ռուսաստանի Դաշնությունում ուսումնական ծրագրերի, նոր դասագրքերի և վերապատրաստման ծրագիրը, Սևծովյան նախաձեռնությունը, որը ներառում է Բուլղարիան, Վրաստանը, Մոլդովան, Ռումինիան, Ռուսաստանի Դաշնությունը, Թուրքիան և Ուկրաինան

(ծրագրի հիմնական արդյունքներից մեկը եղել է այս տարածաշրջանի պատմության դասավանդման հատուկ փաթեթի նախապատրաստումը, որը հրապարակվել է 2004թ.) և Թբիլիսյան նախաձեռնությունը, որի շրջանակներում Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից և Ռուսաստանի Դաշնությունից ներկայացված հեղինակների խումբը համատեղ մշակում է պատմության դասագիրք:

Եվրոպայի խորհուրդը նաև համակարգում է պատմության դասավանդման աշխատանքները հարավ-արևելյան Եվրոպայում՝ ուշադրությունը բևեռելով պատմության ուսուցիչների վերապատրաստմանը, դասավանդման միջոցներին, բարձրագույն կրթությանը և երիտասարդների ոչ ֆորմալ կրթությանը:

2004թ. Եվրոպայի խորհուրդը պատմության դասավանդման ոլորտում իր աշխատանքը սկսեց Կիպրոսում: Այս շրջանակներում իրականացվում են գիտաժողովներ և դասընթացներ հանուն հաշտեցման և հանդուրժողականության պատմության դասավանդման նոր մեթոդների վերաբերյալ, որոնք խարսխված են բազմահեռանկար և միջմշակութային երկխոսությանը:

*Կրթություն և հիշատակ*

Ի պատասխան պատմության դասավանդման մասին Հանձնարարականի և հիմք ընդունելով 2000թ. Կրակովում կրթության նախարարների միջև կայացված համաձայնությունը՝ Եվրոպայի խորհրդի Մշակութային կոնվենցիայի կողմ 49 պետություններ այժմ տարեկան մեկ անգամ կազմակերպում են Հրեաների ցեղասպանության հիշատակի և մարդկության դեմ կատարվող ոճրագործությունների կանխարգելման օր: Հիշատակի օրերը կազմակերպվում են դպրոցներում դասերի կամ ծրագրերի միջոցով, հաճախ լինում են միջառարկայական բնույթի, և յուրաքանչյուր երկիր ազատ է ընտրելու ամսաթիվը՝ ելնելով սեփական պատմությունից:

Եվրոպայի խորհուրդը հրապարակում է մի շարք դասավանդման նյութեր, որոնք հատուկ մշակված են «հիշատակի պարտքին» նվիրված դասերի պատրաստման ժամանակ ուսուցիչներին օգնելու նպատակով:

*Կրթություն գնչուների և շրջիկների համար*

2001թ. ի պատասխան Թիվ (2000) 4 հանձնարարականի մեկնարկած այս ծրագրի նպատակը գնչու երեխաների համար կրթության բարելավումն է: Այն օգտագործում է գնչուներին ուղղված առանձնահատուկ կրթական ռազմավարություններ և գործնական առաջարկներ ներկայացնում անդամ պետություններին այս մոտեցումը իրենց քաղաքականությունում ներառելու վերաբերյալ:

Շեշտը դրվում է ծրագրի ընթացքում ստեղծված ուսուցողական նյութերի միջոցով գնչուական համայնքի անդամներին սատարելուն՝ նրանց ընդգրկելով իրենց վրա ներգործող քաղաքականությունների շուրջ որոշումների կայացման գործընթացին, խրախուսելով ուղղակի մասնակցությունը և ամրապնդելով գնչուների մշակութային և պատմական ժառանգությունը:
Եվրոպայի խորհուրդն օժանդակում և նպաստում է գնչուների դպրոցի միջնորդի մասնագիտությանը և մշակել է միջնորդների համար նախատեսված հատուկ ձեռնարկ:

*«Եվրոպան դպրոցում» մրցույթը*

Ամենամյա այս մրցույթը ֆինանսավորում են Եվրոպայի խորհուրդը, Եվրոպական հանձնաժողովը, Եվրոպական խորհրդարանը և Եվրոպական մշակութային հիմնադրամը: Այն նախատեսված է դպրոցահասակ երեխաներին եվրոպական խնդիրներով հետաքրքրելու համար:

Հուլիս ամսին հաղթողներին հրավիրում են Ստրասբուրգ. նրանք ապրում են Եվրոպական երիտասարդական կենտրոնում, որտեղ ծանոթանում են Եվրոպայի խորհրդի հիմնական, մասնավորապես՝ կրթական ծրագրերին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Խորհրդարանական վեհաժողովի աշխատանքներին: Նրանք նաև մասնակցում են մրցանակների շնորհման արարողությանը:

*Կրթության ոլորտի մասնագետների որակավորման բարձրացման ծրագիր*

Այս ծրագիրը եվրոպական ձևաչափ է հաղորդում դպրոցներում դասավանդման և ուսուցիչների վերապատրաստման ոլորտում Եվրոպական մշակութային կոնվենցիան ստորագրած 49 երկրներում:
Այն ստեղծվել է կրթության ոլորտի մասնագետների համար (ուսուցիչներ, ուսմասվարներ, տեսուչներ, կրթական խորհրդատուներ, ուսուցիչների վերապատրաստողներ և դասագրքերի հեղինակներ), ովքեր տարածում են վերապատրաստման ժամանակ ձեռք բերած գիտելիքները: Կրթության ոլորտի մոտ 2500 մասնագետներ (ներառյալ հյուրընկալող երկրից) ամեն տարի մասնակցում են կիսամյակը մեկ կազմակերպվող շուրջ 15 եվրոպական դասընթացների, որոնք նվիրված են կրթության համատեքստում Եվրոպայի խորհրդի համար առանցքային թեմաների՝ կրթություն ժողովրդավարական քաղաքացիության համար և մարդու իրավունքների բնագավառում, պատմության դասավանդում, հակազդումներ ժողովրդավարական հասարակությունում ամենօրյա բռնություններին, գնչու և շրջիկ երեխաների կրթություն, միջմշակութային և միջկրոնական երկխոսություն և դպրոցներում եվրոպական ձևաչափի դասավանդում:
Տարեկան երկու անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին, Եվրոպայի խորհուրդը հրատարակում է եվրոպական դասընթացների շարքը, որոնք կազմակերպվում են Կոնվենցիան ստորագրած

տարբեր անդամ պետություններում: Ցուցակը, դիմումի ձևը, Կոնվենցիան ստորագրած 49 պետություններում պատասխանատուների ցուցակը և գործնական տեղեկատվությունը մատչելի են հետևյալ ինտերնետային հասցեում՝
http://www.coe.int/T/E/Cultural_Co-operation/education/Teacher_training

**Ինտերնետային կայք**
http://www.coe.int/T/E/Cultural_Co-operation/education/

# Մշակույթ և ժառանգություն

Եվրոպայի խորհուրդը խթանում է մշակութային ինքնության բազմազանությունը. կիրառելով և վերահսկելով կոնվենցիաները, ամրագրելով չափանիշները, կազմակերպելով իրազեկության բարձրացման քարոզարշավներ և ստեղծելով մասնագիտական ցանցեր` Կազմակերպությունն ընդգծում է ազգային, տարածքային և տեղական տարբերությունները և համընդհանուր արժեքները, որոնց վրա հիմնված է եվրոպական քաղաքացիությունը: Համագործակցության ծրագիրն ամրապնդում է մարդկային զարգացման և հասարակության համար ժառանգության ունեցած ներդրումը` մշակութային տարբեր սեկտորներում ստեղծագործ մոտեցում խթանելով:

## Մշակույթ

*Միջմշակութային երկխոսություն և հակամարտությունների կանխարգելում*

Ի պատասխան մշակութային տարբերությունների պատճառով սրվող սոցիալական և քաղաքական հակամարտությունների անընդհատ աճին` Եվրոպայի խորհուրդը սկսել է Միջմշակութային երկխոսություն և հակամարտությունների կանխարգելում ծրագիրը` խրախուսելու պետական, տարածքային և տեղական քաղաքական առաջնորդներին, կամավոր ընկերակցություններին, մշակութային միջնորդներին և հանրությանը միանալ այն միջոցառումներին, որոնք նպաստում են մշակութային, սոցիալական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը` հակամարտությունները հանգուցալուծելու և հաշտեցմանը նպաստելու նպատակով: Եվրոպայի խորհուրդը հիմնվում է ակադեմիական քննարկումների և գործնական փորձի վրա` «երկխոսության հարթակ» ստեղծելով, Եվրոպայի մշակութային և կրոնական համայնքների քաղաքներում և ավաններում կամ արվարձաններում մշակութային գործունեությունը հավասարաչափ մատչելի դարձնելով:

*Մշակութային քաղաքականություններ*

Եվրոպայի խորհուրդն իր երկարատև փորձի արդյունքում իրազեկ է, որ Եվրոպայի մշակութային հարստությունը հիմնված է թե՛ նրա բազմազանության և թե՛ նրա ընդհանուր մշակութային ժառանգության վրա, ուստի Կազմակերպությունն ամուր հիմքեր ունի իշխանություններին և մասնագետներին մշակութային քաղաքականության ոլորտում բարենպաստ գործելակերպի մշակման և կիրառման համար անհրաժեշտ միջոցներ տրամադրելու առումով:

- ***Պետական մշակութային քաղաքականության վերանայման եվրոպական ծրագիրը*** վերլուծում է մշակութային իրավիճակը առանձին երկրներում և նրանց օգնում մշակել կարճաժամկետ և միջնաժամկետ մշակութային ռազմավարություններ: Ծրագիրը նաև Եվրոպայի խորհրդին ընդգրկուն պատկերացում է տալիս անդամ պետություններում մշակութային խնդիրների մասին, և Կազմակերպությունն այնուհետև այս տեղեկատվությունն օգտագործում է եվրոպական ընդհանուր ռազմավարությունների մշակման ոլորտում, որոնք զուտ մշակութային ոլորտին չէ, որ վերաբերում են: Եվրոպական մշակութային կոնվենցիան ստորագրող պետությունների ավելի քան կեսը համաձայնել է, որ գնահատվեն իրենց նպատակներն ու մեթոդները, տեղեկատվություն հավաքվի նրանց վերաբերյալ, վերլուծվեն միտումները, և այս ամենը վերանայեն օտարերկրյա անկախ փորձագետները:

- ***Եվրոպայի մշակութային քաղաքականությունների և միտումների ամփոփումը*** մշակութային քաղաքականությանն ուղղված առաջին եվրոպական էլեկտրոնային տեղեկատվական համակարգն է: Այն հնարավորություն է ստեղծում ներպետական տվյալների գնահատման և միջազգային համեմատությունների համար: Նրա վերահսկող դերը կանոնավոր մոտեցում է ենթադրում ընթացիկ միտումներին և փոփոխություններին՝ սահմանելով ճշգրիտ ցուցիչներ և բարենպաստ գործելակերպ մշակութային բազմազանության, միջմշակութային երկխոսության, մշակութային ֆինանսավորման, օրենսդրության, մասնակցության և մշակութային միջոցների և ծառայությունների ոլորտներում:

- ***STAGE (Օժանդակություն Մեծ Եվրոպայում արվեստի և մշակույթի զարգացմանը) ծրագիրը*** հատկապես մշակվել է օժանդակելու Հայաստանին, Ադրբեջանին և Վրաստանին՝ մշակութային նոր և ճկուն քաղաքականությունների մշակման և կիրառման ոլորտում, ինչպես նաև խթանելու մշակութային փոխանակումներն ինչպես իրենց միջև, այնպես էլ եվրոպական այլ երկրների հետ՝ մշակութային հաստատությունների (թանգարաններ, գրադարաններ) և քաղաքների ու ավանների միջև համագործակցության միջոցով:

*Մշակութային ակտիվություն և տնտեսական ու սոցիալական զարգացում*

Եվրոպայի խորհուրդը հատկապես հետաքրքրված է մշակութային ստեղծարարությամբ՝ որպես ինքնությունների և տարբերությունների արտահայտման միջոց: Այն անդամ պետություններում մշակութային արդյունաբերությունների ստեղծման և զարգացման բնագավառում փորձնական ծրագրեր է խթանում, ինչպես նաև նպաստում է մշակութային գործունեության միջոցով սոցիալական ինտեգրմանը:

- Եվրոպայի խորհրդի ***Մշակութային կապիտալի ստեղծում*** ծրագիրը նախատեսված է խթանելու և խրախուսելու մշակութային բազմազանությունը և ստեղծագործական միտքը եվրոպական և համաշխարհային մակարդակներում՝ տեղական մշակութային արտադրողներին մշակույթի համաշխարհային շուկա առավել դյուրին մուտք ապահովելով: Համագործակցությունը, վերապատրաստումը և ցանցային գործունեությունը եվրոպական որոշակի տարածաշրջաններում, ինչպես օրինակ՝ Ուկրաինայում և Ռուսաստանի Դաշնությունում, ընդգծում են այս տարածաշրջանների կայուն զարգացման մեջ մշակութային արտադրությունների ունեցած ներդրումը:

- Եվրոպայի խորհուրդն ընտրել է Ռուսաստանի Դաշնությունը՝ որպես փորձնական ծրագրի իրականացման վայր՝ արվեստի կազմակերպությունների և գործարար համայնքի միջև գործընկերությունների խթանման նպատակով: ***Մշակույթի նոր գործընկերությունների կամուրջներ*** ծրագիրը բևեռվում է գիտելիքների ֆինանսավորմանը, հովանավորմանը և փոխանցմանը, ինչպես նաև վերապատրաստման դասընթացների և հետազոտական նյութերի միջոցով հմտությունների կուտակմանը:

- Փորձնական ծրագրերը մշակված են խթանելու մշակութային ինքնությունները և մշակութային արտահայտումը. դրանք նպատակ ունեն **երիտասարդներին ինտեգրելու ժամանակակից հասարակության մեջ** և արտահայտելու նրանց ինքնության ստեղծագործական բնույթը:

*Եվրոպական կինոյի խթանումը*

Մշակութային կոմիտեն մշակել է Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին կոնվենցիան, որը խթանում է եվրոպական կինոն բարձրորակ համատեղ նկարահանումներով, և ընդունել է Տեսալսողական ժառանգության պահպանման մասին կոնվենցիան, որը ստորագրման համար բացվել է 2001թ. նոյեմբերի 8-ին: Մինչև այժմ այն ստորագրել են 12, և վավերացրել 2 պետություններ:

## Եվրաիմիջներ (Eurimages)

*Եվրոպական կինոարտադրության խթանումը*

Եվրաիմիջները Եվրոպական կինեմատոգրաֆիական և տեսալսողական համատեղ արտադրանքի և բաշխման ԵԽ հիմնադրամ է: Այն հիմնադրվել է 1989թ. որպես մասնակի համաձայնագիր և ներկայում ունի 31 անդամներ: Հիմնադրամի տարեկան բյուջեն 20 միլիոն եվրո է:

Եվրաիմիջների հիմնական նպատակն է օժանդակել այն աշխատանքներին, որոնք հավակնում են արտացոլելու եվրոպական հասարակության տարբեր հարթությունները, որոնց ընդհանուր արմատներն արտացոլում են մշակութային ընդհանուր հիմք:

Յուրիմաժը նաև ֆինանսական օժանդակություն է տրամադրում առևտրային շահույթ հետապնդող արտադրություններին, որոնք միևնույն ժամանակ նաև արվեստ են և այդպիսին լինելու ցանկություն ունեն:

Այս երկու նպատակները հետապնդելով՝ Եվրաիմիջները ստեղծել է ֆինանսավորման երեք ծրագիր՝ օժանդակելու համատեղ արտադրանքը, բաշխումը և կինոթատրոններին:

Հիմնադրամի միջոցները հիմնականում գոյանում են անդամ պետությունների նվիրատվություններից և կանխավճարներից: Գումարի հիմնական մասը (ընդհանուր բյուջեի գրեթե 90%-ը) օժանդակում է համատեղ արտադրանքին: Իր հիմնադրումից ի վեր Եվրաիմիջները ֆինանսավորել է ավելի քան 1000 երկարամետրաժ և փաստագրական ֆիլմեր: Դրանցից մի քանիսը հեղինակավոր մրցանակներ են շահել միջազգային փառատոններում: Եվրաիմիջների ֆինանսավորմամբ նկարահանված վերջին 100 ֆիլմերի մասին կարելի է տեղեկանալ հիմնադրամի ինտերնետային կայքից:

Բաշխմանը և կինոթատրոններին ցուցաբերվող օժանդակությունը մատչելի է այն անդամներին, որոնք չեն կարող դիմել Եվրոպական միության MEDIA ծրագրին ֆինանսավորում ստանալու համար:

## Մշակութային ժառանգություն

*Ժառանգության և սոցիալական փոփոխության քաղաքականություններ*

- Եվրոպայի խորհրդի՝ ***Հասարակության համար մշակութային ժառանգության արժեքի շրջանակային կոնվենցիայի նախագիծը*** ժառանգության գործառույթները բերում է «գիտելիքի հասարակության» և գլոբալացված տնտեսության համատեքստ: Այն սահմանում է միջմշակութային երկխոսությանը, ընդհանուր արժեքներին և

բարելավված կենսակերպին նպաստող ժառանգության քաղաքականությունների հիմնական ուղղությունները: Եվրոպացիներն ունեն մայրցամաքի հարստության և մշակութային ավանդույթների պահպանության ընդհանուր պատասխանատվություն, և որքան հնարավոր է շատ մարդիկ պետք է ներգրավվեն այս ժառանգության պահպանման և սերունդներին փոխանցման գործընթացին:

- ***HEREIN Եվրոպական տեղեկատվական համակարգը*** աշխատանքային միջոց է, որը մատչելի է կառավարություններին, մասնագետներին և հասարակությանը և առաջարկում է համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմամբ մի շարք ծառայություններ, ինչպես՝ Եվրոպայում ժառանգության քաղաքականությունների տվյալների բազա, ժառանգության բառարան, ազգային ինտերնետային էջեր տանող պորտալ, ինչպես նաև վիրտուալ քննարկումներ և ցուցահանդեսներ: Այս ցանցում այժմ միացած երեսունհինգ երկրներ:

*Իր բազմազանությամբ հարուստ եվրոպական մշակութային ինքնության դիմագիծը*

Եվրոպայի խորհրդի ծրագրերը ընդգծում են Եվրոպայի մշակութային հիմքերը՝ բարձրացնելով իրազեկությունը ընդհանուր ֆիզիկական և մտավոր ժառանգության մասին և խթանելով ստեղծագործականությունը: Այն խթանում է բազմակի մշակութային ինքնությունը, որն ի հայտ է եկել այս մայրցամաքում կողք կողքի բնակվող տարբեր մշակույթների փոխազդեցություններից: Եվրոպայի խորհուրդը նպատակ ունի եվրոպացիներին ծանոթացնել իրենց ընդհանուր ժառանգությանն այնպիսի ծրագրերի միջոցով, ինչպիսիք են «սահմանների վրա» և «ժառանգություն այլ վայրերից» ծրագրերը:

- Ամեն տարի սեպտեմբերին Եվրոպական մշակութային կոնվենցիան ստորագրած 49 երկրները մասնակցում են ***Եվրոպական ժառանգության օրերին (ԵԺՕ)***, մի համատեղ միջոցառում, որն իրականացնում են Եվրոպայի խորհուրդը և Եվրոպական միությունը՝ հանրության համար սովորաբար փակ պատմական շինությունները բացելով: Մշակութային միջոցառումներն ընդգծում են տեղական հմտություններն ու ավանդույթները, ճարտարապետությունը և արվեստի գործերը, սակայն առավել ընդգրկուն նպատակն է քաղաքացիներին համախմբել փոխադարձ ըմբռնման մթնոլորտում անկախ մշակութային և լեզվական տարբերություններից:

- ***«Եվրոպան՝ փողոցից փողոց»*** ծրագիրը համախմբում է մի շարք երկրների դպրոցների և աշակերտներին

ընդգրկում պրոակտիվ կրթական ծրագրերում, որոնք նախատեսված են նրանց քաղաքային միջավայրը և դրան ներհատուկ սոցիալական, մշակութային և արվեստաբանական տարբերությունները ներկայացնելու համար:

- ***«Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիներ» ծրագիրը*** նպատակ ունի եվրոպացիներին ծանոթացնել իրենց մշակութային ինքնությանը բարձր մակարդակի մշակութային տուրիզմի, ժառանգության քիչ հայտնի ասպեկտների ուսումնասիրման միջոցով: Եվրոպայի խորհուրդը պաշտոնապես հաստատում է այն ուղիները, որոնք համապատասխանում են այս ծրագրի չափանիշներին: Այն ծրագիրը համակարգում է պետական և մասնավոր կառույցների հետ համատեղ: Նրան օգնում է Լյուքսեմբուրգում հիմնված Մշակութային ուղիների եվրոպական ինստիտուտը, որը գործում է որպես նշված ուղղների մշակման տեխնիկական ռեսուրս կենտրոն:

- ***Եվրոպայի խորհրդի արվեստի ցուցահանդեսները*** խթանում են եվրոպական արվեստի մասին գիտելիքները և այդ արվեստի գնահատանքը: Մինչ այժմ կազմակերպվել են 27 ցուցահանդեսներ, որոնք անդրադարձել են արվեստի պատմության հիմնական փուլերին` նախապատմությունից մինչև մեր օրերը: 28-րդ ցուցահանդեսը մեկնարկել է 2006թ. և նվիրված է Լեոնարդո Դա Վինչիին: Այն վերնագրված է «Ունիվերսալ Լեոնարդոն» և մասնագետներին ու հասարակությանն առավել ընդգրկուն պատկերացում է տալիս այս մեծ մարդու և արվեստի ու գիտության բնագավառում նրա բազմաթիվ նորարարական մոտեցումների մասին (ֆիզիկական և վիրտուալ ցուցահանդեսներ, հրապարակումներ, հետազոտական ծրագրեր և դասավանդման նյութեր):

*Տեխնիկական համագործակցություն և աշխատանք տեղերում*

***Մշակութային ժառանգության ինտեգրված պահպանության ոլորտում տեխնիկական համագործակցության և խորհրդատվության ծրագիրը*** այս ոլորտում քաղաքական համագործակցության և անդամ պետություններում Եվրոպայի խորհրդի գործունեության հիմնական միջոցն է: Այն օժանդակում և օգնում է անդամ պետություններին կայուն զարգացման մարդկային ձևաչափի իր փոխսեկտորային ինտեգրված մոտեցման միջոցով` հաշվի առնելով.

- տարածական և քաղաքային պլանավորումը,
- մշակութային ժառանգությունը (հուշարձաններ, ճարտարապետական համալիրներ և մշակութային լանդ-

շափտներ),

- շրջակա միջավայրի և բնության կոնսերվացիան (կենսաբանական և լանդշաֆտային բազմազանություն),
- տարածքային և տեղական զարգացումը (տնտեսական ակտիվություն և աշխատատեղերի ստեղծում),
- մշակույթը (ինքնությունների, մշակութային բազմազանության, հասարակության արժեքային համակարգի պահպանում և խթանում),
- սոցիալական քաղաքականությունները (բնակարանային պայմանների, ենթակառուցվածքների, հանրային օգտագործման տարածքների բարելավում, բնական աղետների կանխարգելում, հետճգնաժամային կառավարում)։

Գործունեության այս տեսակներն առանձնահատուկ ծրագրեր են, որոնց նպատակն է հիմնականում ներգործել պետական քաղաքականություններին՝ կառավարություններին խրախուսելով նախաձեռնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ և բարելավել գործառնական մոտեցումների ու ծրագրերի կառավարման մեթոդները։

Ինտերնետային կայք
http://www.coe.int/T/E/Cultural_Co-operation/Heritage/

# Բնական ժառանգություն, լանդշաֆտի պահպանություն և կայուն զարգացում

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները դիմակայում են տարբեր մարտահրավերներ՝ կապված շրջակա միջավայրի, լանդշաֆտի պահպանման և կայուն զարգացման, ռեգիոնալ կամ տարածական պլանավորման հետ: Այս մարտահրավերները հաճախ պահանջում են միջազգային մոտեցում.

Եվրոպայի խորհուրդը մշակել է մի շարք փաստաթղթեր և ուղեցույցներ՝

- Եվրոպայում բնական միջավայրը պահպանելու և կառավարելու,
- մարդկային միջավայրը և բնակավայրը պահպանելու և ամրապնդելու,
- տարածական պլանավորման և զարգացման հայեցակարգերը սահմանելու,
-հավասարակշռված կայուն զարգացման նկատմամբ համակողմանի մոտեցում խթանելու նպատակով:

*Համաեվրոպական կենսաբանական և լանդշաֆտի բազմազանության ռազմավարություն*

«Շրջակա միջավայր Եվրոպայի համար» ռազմավարությունը, որը հաստատվել է 1995թ. Նախարարական համաժողովին, ստեղծվել էր խրախուսելու նախաձեռնությունների, մեխանիզմների, ֆոնդերի, գիտական հետազոտական ծրագրերի և գոյություն ունեցող տեղեկատվության համախմբումը՝ Եվրոպայում կենսաբանական և լանդշաֆտի բազմազանությունը պահպանելու և բարելավելու նպատակով: Նրա նպատակն է երաշխավորել, որ.

- էապես նվազում են Եվրոպայի կենսաբանական և լանդշաֆտի բազմազանության նկատմամբ սպառնալիքները,
- մեծանում է Եվրոպայի կենսաբանական և լանդշաֆտի բազմազանության կայունությունը,
- ամրապնդվում է Եվրոպայի էկոլոգիական համախմբվածությունը,
- հանրությունը լիովին պարտավորվում է պահպանել կենսաբանական և լանդշաֆտի բազմազանությունը:

Ռազմավարությունը մի նորարարական և պրոակտիվ մոտեցում է Եվրոպայի կենսաբանական և լանդշաֆտի բազմազանության վիճակի վատթարացմանը հակադարձելու համար: Նրա նպա-

տակն է էկոլոգիական նկատառումները ներառել սոցիալական և տնտեսական սեկտորներում:

Ռազմավարությունն ամրապնդում է գոյություն ունեցող մեխանիզմներն ու լրացուցիչ քայլեր սահմանում ապագա երկու տասնամյակների համար: Այն նաև կառուցվածքային մոտեցում և ընդհանուր նպատակներ է սահմանում պետական և տարածքային գործողությունների համար՝ Կենսաբանական բազմազանության մասին Միավորված ազգերի կոնվենցիան կիրառելու նպատակով:

Ռազմավարությունն իրականացվում է հիմնական եվրոպական ինստիտուտների պատրաստակամության շնորհիվ: Նրա քարտուղարությունը համատեղում են ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրը (UNEP) և Եվրոպայի խորհուրդը:

*Եվրոպական ֆաունա և ֆլորա. կենդանական աշխարհի պահպանություն*

Եվրոպայում կենդանական աշխարհի և բնական միջավայրի պահպանման մասին կոնվենցիան (1982թ.), պահպանում է հազվագյուտ և վտանգված կենդանական և բուսական տեսակները և բնական միջավայրերը: Այն թվարկում է պահպանման ենթակա տեսակները, կարգավորում է կոնկրետ տեսակների շահագործման նպատակով օգտագործվող մեթոդները և պետություններին առաջարկում կարգավորել բնական միջավայրերի պահպանումը՝ մասնավորապես պահպանվող տարածքների եվրոպական ցանցի ստեղծման միջոցով:

Բեռնի կոնվենցիան նաև բաց է ԵԽ անդամ չհանդիսացող եվրոպական և Աֆրիկայի պետությունների համար: Այն վավերացրել են 40 անդամ պետություններ, Եվրոպական համայնքը և Աֆրիկայի չորս պետություններ (Բուրկինա Ֆասո, Մարոկկո, Սենեգալ և Թունիս):

*Լանդշաֆտ, Եվրոպայի մշակութային բազմազանության արտացոլում*

2000թ. Ֆլորենցիայում ընդունված Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիան ուժի մեջ է մտել 2004թ. մարտի 1-ին: Այն ընդգծում է բոլոր լանդշաֆտների արժեքը, այդ թվում նաև «ամենօրյա» միջավայրը, որում մարդիկ անց են կացնում իրենց առօրյան: Կոնվենցիան ամրագրում է չափանիշներ Եվրոպայում լանդշաֆտների պահպանման, կառավարման և պլանավորման համար՝ կայուն զարգացում երաշխավորելու նպատակով՝ ապահովելով հավասարակշռված և ներդաշնակ փոխհարաբերություններ սոցիալական կարիքների, տնտեսական ակտիվության և շրջակա միջավայրի միջև: Կոնվենցիան նաև շնորհում է «Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի մրցանակ» նրանց լանդշաֆտների պահպանման և կառավարման նպատակով տեղական և տարածքային իշխանությունների կամ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից գործադրվող քաղաքականությունների և միջոցառումների համար:

*Մրցանակ բնության պահպանության համար*

Պահպանված տարածքների եվրոպական դիպլոմը շնորհվում է այն տարածքներին, որոնց բնական ժառանգությունը հատկապես կարևոր է, և որոնք պատշաճ կերպով պահպանվում են: Այն տարածքները, որոնց շնորհվում է վերոնշյալ դիպլոմը, Եվրոպայի բնության հարստության և բազմազանության արտացոլումն են: Մինչև օրս շնորհվել է վաթսունհինգ դիպլոմ:

*Գործելու համար անհրաժեշտ տեղեկատվություն և կրթություն*

Եվրոպայի խորհուրդը փորձում է բարձրացնել իրազեկությունը բնական և մշակութային միջավայրի պահպանության կարևորության շուրջ իր թղթակիցների ցանցի և մոտ 40 պետական գործակալությունների միջոցով: «*Նատուրոպա*» պարբերականը, որը հրապարակվում է 1968թ.-ից և ի սկզբանե նպատակ ուներ խթանել բնության պահպանությունը և բնական միջոցների կայուն կառավարումը, 2001թ.-ից առավել ընդգրկուն է դարձել՝ ներառելով մշակութային ժառանգությանը, լանդշաֆտների պահպանությանը և տարածական կայուն պլանավորման զարգացմանը վերաբերող խնդիրներ:

*Կայուն զարգացման ծրագիր*

Տարածական պլանավորման համար պատասխանատու նախարարների եվրոպական համաժողովը (CEMAT) համախմբում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ներկայացուցիչներին՝ հետազոտելու տարածքային և տարածական պլանավորման ոլորտում առկա խնդիրները: CEMAT-ի աշխատանքը բևեռվում է կայուն տնտեսական, շրջակա միջավայրի և սոցիալական զարգացմանը՝ առավել ընդգրկուն Եվրոպայում տարածքային և տարածական պլանավորման միջոցով:

Տարիների ընթացքում ընդունվել են փաստաթղթեր, որոնք ուղղորդում են տարածական պլանավորման քաղաքականությունները. դրանք ներառում են Եվրոպական տարածքային պլանավորման ռազմավարությունը և Եվրոպական տարածքային ու տարածական պլանավորման խարտիան, որը բազմակողմանի, գործառնական և երկարաժամկետ պլանավորման քաղաքականության կոչ է անում: Բոլորովին վերջերս CEMAT-ն ընդունել է «Եվրոպական մայրցամաքում կայուն զարգացման ուղենիշային սկզբունքները», որոնք ճկուն և առաջադեմ համակարգ են ապահովում անդամ պետությունների միջև համագործակցության համար: Այն նաև շեշտադրում է վերապատրաստման կարևորությունը կայուն տարածական պլանավորման քաղաքականությունների կիրառման համար:

*Բնական և տեխնոլոգիական աղետների կանխարգելում՝ Եվրոպամիջերկրական համագործակցություն*

Բնական և տեխնոլոգիական մեծ վտանգների վերաբերյալ բաց մասնակի համաձայնագիրը, որը ներառում է կանխարգելում, պաշտպանություն և օգնության կազմակերպում (EUR-OPA Մեծ վտանգների մասնակի համաձայնագիրը) կնքվել է 1987թ. մարտին: Այն բաց է թե՛ Եվրոպայի խորհրդի անդամ պետութ-

յունների և թե՛ ոչ անդամ պետությունների համար, ինչպիսիք են՝ Մարոկկոն, Ալժիրը և Լիբանանը: Ներկայում մասնակցում են 25 պետություններ: Եվրոպական հանձնաժողովը, Յունեսկոն և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (WHO) և ՄԱԿ-ի Հումանիտար հարցերի բաժինը: Ճապոնիան ունի դիտորդի կարգավիճակ:

Համաձայնագրի նպատակն է ապահովել առավել սերտ, ճկուն համագործակցություն անդամ պետությունների միջև՝ փոխկապակցելով գիտության տարբեր ճյուղեր, օգտագործելով բոլոր մատչելի միջոցները և հիմնական ռիսկերի կառավարման գիտելիքները և օգնելով մյուսներին դրանք կառավարել:

Վտանգների կանխարգելումը հիմնական գերակայությունն է՝ երեխաների իրազեկության բարձրացման, քաղաքացիներին տեղեկությունների տրամադրման և վտանգների կառավարման օրենսդրության համեմատական վերլուծության միջոցով: Եվրոպամիջերկրական 26 կենտրոնների ցանցը խրախուսում է անդամ պետությունների մասնակցությունը: Այս կենտրոնները նպաստում են գործընկերների ընդհանուր նպատակների իրականացմանը՝ իրագործելով եվրոպական տեղեկատվական, վերապատրաստման և հետազոտական ծրագրեր:

Համաձայնագիրը նպաստում է Աղետների կրճատման ՄԱԿ-ի համաժողովին (Կնոբ, Ճապոնիա, 2005թ.) ընդունված գործողությունների համաշխարհային ծրագրի իրականացմանը եվրոպական-միջերկրական տեսանկյունից՝ առանձնահատուկ շեշտ դնելով օրենսդրության, կրթության և վերապատրաստման համեմատական վերլուծությանը և մասնագիտացված կենտրոնների ցանցի, մասնավորապես՝ Եվրոպական նախազգուշացման համակարգի շնորհիվ մատչելի դարձած փորձառությանը:

**Ինտերնետային կայք**
http://www.coe.int/t/e/Cultural_Co-operation/Environment/Landscape/

# Սպորտ

Սպորտին առնչվող ԵԽ գործունեությունը կառավարում է Եվրոպական մշակութային կոնվենցիան:

*Աշխարհանք հանուն հանդուրժողականության, իրավահավասարության, ժողովրդավարության և բոլորի համար սպորտի մատչելիության*

Եվրոպայի խորհուրդը սպորտում արդարությունն ու բարոյականությունը երաշխավորելու նպատակով հետևում է երկկողմանի ռազմավարության.

- որպես կյանքի որակի բարելավման միջոց՝ սպորտի խթանում բոլորի համար, ինչը դյուրին է դարձնում սոցիալական ինտեգրումը և նպաստում է սոցիալական համախմբվածությանը, մասնավորապես՝ երիտասարդների շրջանում: Սպորտի դերը՝ որպես ժողովրդավարության ներածություն և քաղաքացիական պատասխանատվություն, մասնավորապես՝ երիտասարդ առաջնորդների շրջանում, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի համատեղ ծրագրի հիմնական թեմաներից մեկն էր. ծրագիրն իրականացվում էր 2004թ. Սպորտի միջոցով եվրոպական կրթության տարվա շրջանակներում:
- սպորտի պաշտպանություն ներկայումս դրան սպառնացող վտանգներից՝ դոպինգից (խթանիչներից) և բռնությունից:

Եվրոպայի խորհուրդը միշտ էլ կարևոր է համարել սպորտը, քանի որ այն լավ օրինակ է ծառայում, դեր ունի սոցիալական ինտեգրման, հատկապես սոցիալապես անապահով խմբերի համար, նպաստում է բնակչության առողջությանը և բարեկեցությանը և խթանում բարոյագիտական արժեքները:

*Ժողովրդավարությունը սպորտում*

«Սպորտը բոլորի համար խարտիան», որն ընդունվել է 1975թ., փոխեց եվրոպական սպորտային թատերաբեմը և օգնեց, ինչպես երբևէ, ժողովրդավարականացնել սպորտը:

Խարտիան, որը լրամշակվեց 1992թ. և վերանայվեց 2001թ., և որը հիմնված է Սպորտային էթիկայի կանոնագրքին, սահմանում է սպորտի քաղաքականության շրջանակը, որին պետք է հետևի եվրոպական յուրաքանչյուր երկիր: Համաձայն Խարտիայի և Կանոնագրքի, սպորտը պետք է՝

- մատչելի լինի բոլորին,
- մատչելի լինի երեխաներին և երիտասարդներին հատկապես,
- լինի առողջ և ապահով, արդար, հանդուրժող և հիմնվի բարոյական բարձր չափանիշներին,
- խթանի ինքնահիրացումը (ինքնառեալիզացիան) բոլոր մակարդակներում,
- հարգի շրջակա միջավայրը,
- պաշտպանի մարդկային արժանապատվությունը,
- դիմադրի սպորտում ներգրավվածների ցանկացած կարգի շահագործմանը:

*Պայքար դոպինգի դեմ. մաքուր և առողջ սպորտի խթանում*

Հակադոպինգային կոնվենցիայի (1989թ.) նպատակն է պայքարել սպորտում դոպինգի դեմ ակտիվ և համակարգված եղանակով: Մոնիտորինգի խումբը պատասխանատու է այս կոնվենցիայի կիրառումը վերահսկելու համար: Կոնվենցիան ամրագրում է մի քանի ընդհանուր կանոններ, որոնք ստորագրող կողմերից պահանջում են իրականացնել մի շարք օրենսդրական, ֆինանսական, տեխնիկական և կրթական միջոցառումներ՝

- սահմանափակել դոպինգային նյութերի թրաֆիկինգը,
- հիմնել դոպինգի հայտնաբերման ընթացակարգ և բարելավել դոպինգի հայտնաբերման տեխնիկական միջոցները,
- օժանդակել կրթական և տեղեկատվական ծրագրերին,
- երաշխավորել հանցագործների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների արդյունավետությունը:

Հակադոպինգային կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունն ուժի մեջ մտավ 2004թ. ապրիլի 1-ին: Արձանագրության նպատակն է երաշխավորել դոպինգի վերահսկման փոխադարձ ճանաչումը և ամրապնդել Կոնվենցիայի կիրառումը պարտադիր վերահսկող համակարգի միջոցով: Այսօր Կոնվենցիան վավերացրել են Եվրոպայի խորհրդի քառասուներկու անդամ պետություններ, ինչպես նաև Ավստրալիան, Կանադան և Թունիսը:

Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական միության անդամ պետությունների հետ, Եվրպայի խորհուրդն օգնել է հիմնել Հակադոպինգային համաշխարհային գործակալությունը (WADA). Եվրոպայի խորհուրդը երկու տեղ ունի WADA-ի հիմնադիր խորհրդում և ակտիվ նպաստ է բերում գործակալության քաղաքականության մշակմանը: Հակադոպինգային համաշխարհային կանոնագրքի մշակումը՝ իր բազմաթիվ ստանդարտներով, Եվրոպայի խորհրդի և WADA-ի միջև համագործակցության օրինակներից մեկն է:

Եվրոպայի խորհրդի Հակադոպինգային կոնվենցիան նաև հիմք է ծառայել դոպինգի դեմ ՅՈՒՆԵՍԿՈՅԻ կոնվենցիայի մշակման համար, որը նպատակ ունի համախմբելու հնարավորինս մեծ թվով պետությունների՝ դոպինգի դեմ պայքարելու և WADA-ն պաշտոնապես ճանաչելու նպատակով:

*Պայքար բռնության դեմ. հանդուրժող և անվտանգ սպորտի խթանում*

Սպորտային միջոցառումների և հատկապես ֆուտբոլային խաղերի ժամանակ հանդիսատեսների անվայելուչ վարքի և բռնության դրսևորումների վերաբերյալ եվրոպական կոնվենցիան մշակվել է 1985թ. և վավերացվել եվրոպական երեսունինը երկրների կողմից: Կոնվենցիայի մշտական հանձնաժողովը վերահսկում է բռնության դեմ Կոնվենցիայում ամրագրված միջոցառումների համապատասխանությունը, ինչպես նաև գործնական հանձնարարականներ է մշակում (օրինակ 70 կետից բաղկացած ստուգացուցակի կազմում նախքան սպորտային մեծ միջոցառում սկսելը):

Կոնվենցիան մասնավորապես հանձնարարում է՝

- պարեկություն ապահովել հրապարակներում և մուտքերի մոտ,
- առանձնացել հակառակորդ երկրպագուներին,
- խստորեն վերահկսել տոմսերի վաճառքը,
- հեռացնել պրոբլեմներ ստեղծողներին,
- սահմանափակել ալկոհոլի վաճառքը,
- անվտանգության ստուգումներ անցկացնել,
- հստակ բաժանել պարտականությունները կազմակերպիչների և իշխանությունների միջև,
- նախագծել հատուկ հրապարակներ և ժամանակավոր տեղեր հանդիսատեսի ապահովությունը երաշխավորելու համար:

Կոնվենցիան ամրապնդվել է բազմաթիվ հանձնարարականներով այնպիսի թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են ռասիզմի և քսենոֆոբիայի կանխարգելումը, ոստիկանության հետ համագործակցությունը, բռնության կանխարգելման նպատակով հետախուզական, սոցիալական և կրթական միջոցների փոխանակումը:

Կան նաև Եվրոպայի խորհրդի վերջերս լույս տեսած հրապարակումներ՝ նվիրված բռնության կանխարգելման ոլորտում տեղական և տարածքային իշխանությունների դերին, ինչպես նաև ընթացքում է բռնության կանխարգելման ոլորտում երկրպագուների ակումբների դերին ուղղված մի ծրագիր:

*Սպորտ, հանդուրժողականություն և արդար խաղ*

1996թ. Սպորտի, հանդուրժողության և արդար խաղի վերաբերյալ կլոր սեղանի կազմակերպումից հետո Սպորտի, հանդուրժողության և արդար խաղի ազգային դեսպաններ (հիմնականում նախկին մարզիկներ) նշանակվեցին անդամ պետությունների գրեթե 50%-ում: Նրանց դերն էր խթանել արդար խաղը, սպորտում հանդուրժողականությունը և այլոց նկատմամբ հարգանքը, և ծրագրեր մշակել սպորտի միջոցով հանդուրժողականություն և բարոյական այլ արժեքներ ուսուցանելու նպատակով: Ռասիզմի և խտրականության այլ ձևերի կանխարգելումը նրանց աշխատանքի անբաժանելի մասն էր:

*Սոցիալական համախմբվածությունը և սպորտը*

Այն դերը, որ սպորտը կարող է խաղալ սոցիալական համախմբվածության հարցում մեկ այլ ոլորտ է, որտեղ Եվրոպայի խորհուրդը նպաստել է ժողովրդավարությանը, մասնավորապես՝ երիտասարդների շրջանում:

Զգալի ուշադրություն է հատկացվել փոքրամասնությունների՝ միգրանտների, փախստականների, գործազուրկների, բանտարկյալների, երիտասարդ հանցագործների և հաշմանդամների համար սպորտային ծրագրերի մշակմանը: Ծրագրերը խնդրո առարկա երկրներում իրականացվել են կենտրոնական, տարածքային կամ տեղական իշխանությունների հետ համատեղ կամ վստահվել են կամավորական սեկտորին: Սոցիալական համախմբվածությունը սպորտի միջոցով հատուկ և շատ կարևոր դեր ունի հարավարևելյան Եվրոպայում վերակառուցման և հաշտեցման համատեքստում:

*Բալոն ռուժ ծրագիրը (Ballons rouges project)*

Բալոն ռուժ ծրագրի նպատակն էր ցույց տալ, թե ինչպես ֆիզիկական վարժությունը կարող է նպաստել դժվար պայմաններում ապրողների ֆիզիկական և հոգեբանական առողջությանը (օրինակ՝ առանձին երկրներում բնակվող փախստականները կամ փախստականների ճամբարները, ընդհանուր կացարաններում ապրողները, և այլն): 2004թ. երիտասարդ փախստականների և Ադրբեջանի տեղահանված անձանց ամառային ճամբարը Բալոն ռուժ ծրագրի ցայտուն օրինակ է:

*Պարտավորությունների կատարում*

1998թ. ներմուծվեց վերահսկման համակարգ, որի նպատակն էր պարզել, թե ինչպես են անդամ պետությունները կիրառում Սպորտի եվրոպական խարտիան և երկու կոնվենցիաները: 2004թ. վերջին համապատասխան կոմիտեի նշանակմամբ գնահատող խումբն այցելեց տասնվեց երկրներ: Չորս երկիր իրենց գնահատումն ինքնուրույն իրականացրեցին: Խորհրդատվական բազմաթիվ այցելություններ կազմակերպվեցին, որպեսզի օգնեն այդ երկրներին վերոնշյալ փաստաթղթերում ամրագրված պահանջները բավարարելու համար անհրաժեշտ քաղաքականություն-

ներն ու ծրագրերը կիրառելու գործում: Բոլոր համապատասխան զեկույցները հրապարակվեցին:

Հակադոպինգային կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը ներառում է մի հոդված, որը սահմանում է, որ կողմերը պետք է թույլտվություն տան գնահատման այց կատարելու համար: Ուստի կոնվենցիան մեկն է այն սակավաթիվ միջազգային կոնվենցիաներից, որն ունի վերահսկման խիստ համակարգ:

## Սպորտ բոլորի համար

*Սպրինտ ծրագիրը*

Սպորտի բարեփոխման, նորարարության և վերապատրաստման ծրագիրը (ՍՊՐԻՆՏ) ստեղծվել էր անդամ պետություններին իրենց սպորտային համակարգերի բարեփոխման ոլորտում աջակցելու նպատակով: Ծրագիրն անդրադարձել էր այնպիսի խնդիրների ինչպիսիք են`

- սպորտային շարժումների ժողովրդավարացումը,
- կառավարությունների ընդհանուր քաղաքականության շրջանակում սպորտի խթանումը,
- սպորտային միջոցառումներում բնակչության բոլոր կատեգորիաների մասնակցությունը:

Սպորտի եվրոպական խարտիայում ամրագրված սկզբունքների իրագործումը ողջ Եվրոպայում երաշխավորելու նպատակով տարբեր ընթացիկ միջոցառումներ (վերապատրաստող և խթանող սեմինարներ) խրախուսել են Խարտիայի հետևյալ հոդվածների կիրառումը`

- սպորտի պաշտպանությունը վնասակար ներգործություններից (պայքար անհանդուրժողականության դեմ և արդար խաղի խրախուսում),
- սպորտում խտրականության կանխարգելում,
- սպորտի և առողջության միջև կապի հրապարակում,
- երիտասարդների կրթության մեջ սպորտի կարևորության պաշտպանություն,
- սպորտային հարմարությունների նոր տեսակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
- սպորտի տնտեսագիտական ներգործության հետազոտում,
- սպորտի բնագավառում բարենպաստ կառավարման երաշխավորում:

*Գալիք եվրոպական սպորտային համագործակցությունը*

Սպորտի եվրոպական նախարարների 17-րդ ոչ պաշտոնական հանդիպումը կայացել է 2006թ. հոկտեմբերի 20-21-ը Մոսկվայում: Համաժողովի թեման է «Ապագա համաեվրոպական սպորտային համագործակցությունը»: Քննարկված այլ առանցքային հարցերից են «եվրոպական համագործակցությունը դոպինգի դեմ պայքարում և եվրոպական ներկայացվածությունը Հակադոպինգային միջազգային գործակալության (WADA) մարմիններում:

**Ինտերնետային կայք**
http://www.coe.int/T/E/Cultural_Co-operation/Sport/

# Երիտասարդություն

*Երիտասարդների դեմ Եվրոպայի դռները բացելով*

Երիտասարդության ոլորտում Եվրոպայի խորհրդի հիմնական նպատակները հետևյալն են`

- խրախուսել նրանց ակտիվ մասնակցությունը Եվրոպայի քաղաքացիական հասարակության ամրապնդման գործում և օգնել նրանց դիմակայել իրենց մարտահրավերներին և հասնել իրենց նպատակներին ոչ ֆորմալ կրթության և մասնակցության միջոցով,
- խթանել և մշակել երիտասարդական քաղաքականություններ Եվրոպայում` առանձնահատուկ շեշտ դնելով ժողովրդավարական քաղաքացիության և կրթական ու աշխատանքային առավել լավ հնարավորությունների ապահովմանը:

Երիտասարդները, երիտասարդական ընկերակցություններն ու ցանցերը, քաղաքացիական շարժումները, կառավարության գործակալությունները և փորձագետները մասնակցում են քաղաքականության նպատակների և գործնական կիրառության վերաբերյալ մշտական խորհրդակցություններին: Եվրոպայի խորհուրդը նաև խրախուսում է երիտասարդական ընկերակցությունների, ցանցերի և նախաձեռնությունների ստեղծումը և խթանում միջազգային համագործակցությունը երիտասարդական կազմակերպությունների միջև:

Եվրոպայի խորհրդի երիտասարդական սեկտորը 2006-2008թթ. իր համար սահմանել է հետևյալ գերակայությունները`

- կրթություն մարդու իրավունքների և սոցիալական համախմբվածության ոլորտում,
- մասնակցություն և ժողովրդավարական քաղաքացիություն,
- միջմշակութային երկխոսության և խաղաղության խթանում,
- համապատասխան երիտասարդական քաղաքականությունների ստեղծում և մշակում:

## Վերապատրաստում եվրոպական երիտասարդական ցանցի համար

*Եվրոպական երիտասարդական կենտրոններ (ԵԵԿ)*

Եվրոպական երիտասարդական կենտրոնները Ստրասբուրգում և Բուդապեշտում միջազգային ռեզիդենտական վերապատրաստման և հանդիպումների կենտրոններ են: Դրանց խորհրդատվական խմբերը կրթական և տեխնիկական օժանդակություն են տրամադրում երիտասարդական միջոցառումների նախապատրաստման, իրականացման և վերահսկման ոլորտում:

Ամեն տարի նրանք կազմակերպում են մի քանի դասընթացներ երիտասարդական կազմակերպություններում և նախաձեռնություններում ակտիվ երիտասարդների համար: Այս դասընթացները ներառում են երիտասարդական գործունեություն, միջազգային համագործակցություն, միջմշակութային և ոչ ֆորմալ կրթություն և վերապատրաստում` հատուկ շեշտ դնելով մարդու իրավունքների, փոքրամասնությունների, միջմշակութային երկխոսության, ժողովրդավարական քաղաքացիության և խաղաղության խնդիրներին: Քաղաքացիական հասարակության զարգացումը հակամարտությունների տարածքներում հատուկ խնդիր է:

Մոտավորապես 35 մեկշաբաթյա միջազգային հետազոտական հանդիպումներ են տեղի ունենում ամեն տարի, որոնց ժամանակ երիտասարդական կազմակերպությունների անդամները հանդիպում են փորձագետների և քննարկում ամենաբազմապիսի թեմաներ:

Փորձագետների հանդիպումները, սեմինարները, խորհրդաժողովները հնարավորություն են ընձեռում երիտասարդներին տեսակետներ փոխանակել ընտրված թեմաների շուրջ և ընդլայնել երիտասարդական քաղաքականության իրենց մտահորիզոնը: Եվրոպայի խորհրդի քաղաքականություն մշակողները հանգամանորեն ուսումնասիրում են մասնակիցների գաղափարները և առաջարկությունները:

*Ֆինանսական օժանդակություն միջազգային երիտասարդական ծրագրերի համար*

Եվրոպայի խորհուրդը տարեկան ավելի քան 3 միլիոն եվրո է տրամադրում Եվրոպական երիտասարդական հիմնադրամին` մայրցամաքում երիտասարդական գործունեությանն աջակցելու նպատակով: 1972թ. ի վեր ավելի քան 300 000 երիտասարդներ օժանդակություն են ստացել Հիմնադրամից:

*Երկաթուղով ճամփորդություն երիտասարդ եվրոպացիների*

Եվրոպայի խորհուրդը և Երկաթուղիների միջազգային միությունը (ԵՄՄ) համատեղել են իրենց ուժերը և ստեղծել Երիտասարդների մոբիլության համերաշխության հիմնադրամը, որն օժանդակում է անբարենպաստ վիճակում գտնվող երիտասարդների մոբիլության ծրագրերին: 1995թ. իր հիմնադրումից ի վեր հիմնադ-

րամն օժանդակել է ավելի քան 270 ծրագրի և ավելի քան 5 000 երիտասարդների՝ միջազգային հանդիպումներին և ծրագրերին մասնակցելու նպատակով Եվրոպայում ճանապարհորդելու համար:

*Երիտասարդական քարտեր. քարտ բլանշ երիտասարդական մոբիլության համար*

Եվրոպայի խորհրդի և Եվրոպական երիտասարդական քարտի ընկերակցությունը (EYCA) երիտասարդական քարտերի համակարգ է ստեղծել 26-ից փոքր տարիքի երիտասարդների համար՝ նպաստելով անձնական և մշակութային զարգացման նպատակով ճամփորդելու համար նրանց անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների մատչելիությանը:

*Հետազոտություններ ողջ Եվրոպայում*

Եվրոպական հետազոտությունների ցանցը խթանում է կապերը գիտնականների, կառավարությունների և ոչ կառավարական երիտասարդական կազմակերպությունների միջև և նպաստում համեմատական միջազգային հետազոտական ծրագրերի իրականացմանը:

*Ժողովրդավարական կայունության զարգացումն ու ամրապնդումը*

Եվրոպայի խորհրդի աշխատանքային ծրագիրն անդամ պետություններում ներառում է վերապատրաստման դասընթացներ, հետազոտական այցեր, խորհրդակցություններ կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրներում: Նպատակներն են՝
- ստեղծել երիտասարդական ընկերակցություններ և կառույցներ կենտրոնական և արևելյան Եվրոպայում քաղաքացիական հասարակությունն ուժեղացնելու նպատակով,
- օգնել այս երկրներին զարգացնել երիտասարդական քաղաքականությունները տեղական, տարածքային և պետական մակարդակներում,
- խթանել միջմշակութային երկխոսությունը,
- խթանել փոխանակման ծրագրերը ամողջ Եվրոպայի երիտասարդների միջև

*Ժողովրդավարական առաջնորդության ծրագիր*

Ժողովրդավարական առաջնորդության ծրագրի (ԺԱԾ) նպատակն է զարգացնել ապագա քաղաքական գործիչների, լրագրողների և ՈԿԿ առաջնորդների քաղաքական հմտություններն ու կարողությունները կենտրոնական և արևելյան Եվրոպայում, որպես ժողովրդավարական անվտանգության ապահովման լավագույն միջոց:

Ծրագիրը նպատակ ունի վստահություն ստեղծել տարբեր հասարակությունների և էթնիկ համայնքների երիտասարդ առաջնորդների միջև և ԺԱԾ մասնակիցների ցանց ստեղծել՝ հիմնական ծրագրի շրջանակներում միջոցառումների նախաձեռնման նպատակով:

*Եվրոպայի երիտասարդական ոլորտում աշխատողների վերապատրաստում*

Եվրոպայի երիտասարդական ոլորտում աշխատողների վերապատրաստման համագործակցային ծրագիրը, որը Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի համատեղ ձեռնարկն է, գործում է 1998թ.-ից: Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպայի երի-

տասարդական ոլորտում աշխատողների վերապատրաստում-ները և համապատասխան նյութերը: Նրա գործունեությունների շրջանակը ներառում է տարեկան մեկ անգամ կազմակերպվող վերապատրաստում, ինտերնետային էջ, Կոյոտ ամսագիրը, ինչպես նաև ուսուցման և վերապատրաստման համար նախատեսված հրապարակումներ (փաթեթներ): Նրա ծրագրերը շեշտը դնում են ուսումնական ծրագրի մշակման և վերապատրաստման որակի բարձրացման խնդիրներին:

*Երիտասարդական քաղաքականություններ. մասնակցության և քաղաքացիության խրախուսում*

Երիտասարդության հարցերով եվրոպական ղեկավար կոմիտեն (CDEJ) համախմբում է Եվրոպական մշակութային կոնվենցիան ստորագրած 48 անդամ պետություններում երիտասարդության խնդիրների համար պատասխանատու նախարարությունների կամ այլ մարմինների աշխատակիցներին:

Երիտասարդության հարցերով եվրոպական ղեկավար կոմիտեն հատկապես աշխատում է այնպիսի խնդիրների ուղղությամբ, որոնք առնչվում են երիտասարդության մասնակցությանը և քաղաքացիությանը, ոչ ֆորմալ կրթությանը և երիտասարդական կամավորական ծառայությանը:

Կոմիտեն մշակել է Նախարարների կոմիտեի հանձնարարականներն ուղղված`
- Եվրոպայում երիտասարդներին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրմանը,
- Եվրոպայում երիտասարդական հետազոտությունների ոլորտում հաղորդակցությանը և համագործակցությանը,
- կամավորական ծառայության խթանմանը,
- երիտասարդների մոբիլությանը,
- երիտասարդների մասնակցությանը և քաղաքացիական հասարակության ապագային:

*«Բոլորը տարբեր, բոլորը հավասար» եվրոպական երիտասարդական արշավ*

2006թ. Եվրոպայի խորհուրդը կազմակերպում է «Բոլորը տարբեր, բոլորը հավասար» արշավը՝ բազմազանության, մարդու իրավունքների և մասնակցության ջատագով:

Այս արշավի նպատակն է խրախուսել և հնարավորություն տալ երիտասարդներին մասնակցելու բազմազանության և ներառվածության, հարգանքի, հանդուրժողականության և փոխըմբռնման վրա խարսխված խաղաղ հասարակությունների կառուցմանը: Այս նախաձեռնությունը կապ է ստեղծում 1995թ. Ռասայական խտրականության, հրեատյացության և քսենոֆոբիայի դեմ արշավին, ուստի և ունի միևնույն լոզունգը՝ «Բոլորը տարբեր, բոլորը հավասար»:

**Ինտերնետային կայք**
http://www.coe.int/T/E/Cultural_Co-operation/Youth/

# Եվրոպական դրոշը, հիմնը և մրցանակները

*Եվրոպական դրոշի 50 տարին*

Բոլորը ճանաչում են եվրոպական դրոշը՝ կապույտ խորապատկերին 12 ոսկե աստղերի շրջանը: Այն առաջարկել է Խորհրդարանական վեհաժողովը, և 1955թ. դեկտեմբերին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունել է այն: 2005թ. դեկտեմբերին նշվեց եվրոպական դրոշի 50-րդ տարեդարձը:

Աստղերի շրջանը խորհրդանշում է Եվրոպայի ժողովրդների միությունը: Աստղերի քանակն անփոփոխ է. տասներկուսը կատարելության և ամբողջականության խորհրդանիշն է: 1986թ. մայիսից ի վեր եվրոպական դրոշը նաև Եվրոպական միության պաշտոնական խորհրդանիշն է:

Այլ մարմինների կամ անձանց կողմից եվրոպական խորհրդանիշի օգտագործման վերաբերյալ տեղեկություններ կարելի է ստանալ Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի իրավական հարցերի տնօրինությունից, կամ Բրյուսելում՝ Եվրոպական հանձնաժողովից:

*Եվրոպական հիմնը*

1972թ. հունվարին Նախարարների կոմիտեն որպես Եվրոպայի հիմն ընդունեց Բեթհովենի Իններորդ սիմֆոնիայի ,Չոն ուրախությանե նախերգանքի մշակումն ըստ Հերբերտ ֆոն Կարայանի: Հիմնը հնչում է եվրոպական միջոցառումների ժամանակ:

*Եվրոպայի օրը*

1964թ. Նախարարների կոմիտեն որոշեց, որ մայիսի 5-ը՝ Եվրոպայի խորհրդի հիմնադրման օրը, պետք է տոնվի որպես Եվրոպայի օր: Դրա նպատակն է հասարակայնությանն առավել սերտ ներգրավել Եվրոպայի միավորման գործընթացին:

*Մարդու իրավունքների եվրոպական մրցանակ*

1980թ. Նախարարների կոմիտեն համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների մարդու իրավունքների պաշտպանության գործում նշանակալի ներդրումները ճանաչելու նպատակով հիմնեց Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների մրցանակը:

Յուրաքանչյուր տարին մեկ անգամ Ստրասբուրգում Նախարարների կոմիտեն մրցանակը շնորհում է որևէ անհատի, անհատների խմբի, հաստատության կամ ոչ կառավարական կազմա-

կերպության՝ Խորհրդարանական վեհաժողովի կողմից ներկայացված ցուցակից: Մրցանակը՝ ոսկե մեդալ և գովասանագիր, փաստում է մրցանակակրի ներդրումը մարդու իրավունքների պաշտպանության գործում:

*Եվրոպական մրցանակներ քաղաքների համար*

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի Շրջակա միջավայրի, տարածքային պլանավորման և տեղական իշխանությունների հանձնաժողովը տարբեր մրցանակներ է շնորհում քաղաքներին և տեղական իշխանություններին՝ ճանաչելով Եվրոպայում ծավալած նրանց գործողությունները: Նրանք կարող են արժանանալ հետևյալ մրցանակների՝ Եվրոպական դիպլոմ, Պատվո դրոշ, Պատվո տախտակ կամ Եվրոպայի մրցանակ:

*Եվրոպայի մրցանակ*

Եվրոպայի մրցանակը, որը 1955թ. ի վեր շնորհվում է ամեն տարի, ամենաբարձր մրցանակն է, որ կարող է շնորհվել տեղական իշխանության մարմնին՝ Եվրոպական համագործակցության ոլորտում ներդրում ունենալու համար: Հաղթող տեղական իշխանության մարմնի ընտրությունը կատարում է Խորհրդարանական վեհաժողովի Շրջակա միջավայրի, տարածքային պլանավորման և տեղական իշխանությունների հանձնաժողովը: Հաղթած տեղական իշխանությունը ստանում է մրցանակ՝ բրոնզե մեդալ և դիպլոմ, որն ուժի մեջ է մնում մեկ տարի: Այն նաև ստանում է շուրջ 7600 եվրո, որը սկզբունքորեն պետք է ծառայի երիտասարդ քաղաքացիների համար Եվրոպայի ուսուցողական այցերի կազմակերպման նպատակին:

*Պաշտպանված շրջանների եվրոպական դիպլոմ*

Նախարարների կոմիտեն շնորհում է 1965թ. հաստատված այս դիպլոմը՝ Կենսաբանական և լանդշաֆտի բազմազանության ոլորտում Եվրոպայի խորհրդի գործունեության կոմիտեի խորհրդով: Այն շնորհվում է բնական այգիներին, արգելանոցներին կամ միջազգային նշանակություն ունեցող վայրերին, որոնք համապատասխանում են բնական ժառանգության պահպանման պահանջներին՝ նկատի ունենալով դրանց արժեքը՝ որպես գիտական, մշակութային կամ հանգստի վայր:

Եվրոպայի խորհուրդը հովանավորում է այդ տարածքը հինգ տարվա ժամանակահատվածում. ժամանակահատվածը կարելի է երկարացնել՝ սահմանելով հավելյալ հնգամյա ժամկետներ՝ տեղում մասնագետների իրականացրած խիստ քննությունից հետո:

*Եվրոպայի խորհրդի թանգարանային մրցանակ*

1977թ. հաստատված ամենամյա մրցանակը շնորհվում է այն թանգարանին, որը բացառիկ ներդրում է կատարել եվրոպական ժառանգության պահպանման գործում: Այն իրենից ներկայացնում է բրոնզե արձանիկ, որը նվիրել է իսպանացի նկարիչ Խոան Միրոն, և շուրջ 5000 եվրո գումար: Հաղթած թանգարանն ընտրվում է Խորհրդարանական վեհաժողովի Մշակույթի և կրթության հանձնաժողովի կողմից Տարվա եվրոպական թանգարան մրցա-

նակային կոմիտեի ներկայացրած թանգարանների ցանկից:
Հեռուստատեսային հաղորդումների Եվրոպական մրցանակ (Պրի Եվրոպա)

Պրի Եվրոպան շնորհվում է յուրաքանչյուր տարի ,խաղարկային», ,ոչ խաղարկային», ,ժամանակակից հարցեր» և ,IRIS» (բազմամշակութային ծրագրեր) կարգում լավագույն հեռուստահաղորդումների համար: Մրցույթը կազմակերպում են Եվրոպայի խորհուրդը և այլ եվրոպական կառույցներ: Այն նպատակ ունի խթանել ազգային, տարածաշրջանային և տեղական մշակույթների ստեղծագործական պայմաններն ու բազմազանությունը:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ՝

Եվրոպական մշակութային հիմնադրամ
European Cultural Foundation
Jan Van Goyenkade 5
NL-1075 HN Amsterdam
Հեռ.՝ (31) 20 676 02 22
Ֆաքս՝ (31) 20 675 22 31
Էլ. փոստ՝ PRIX-EUROPA@t-online.de
http://www.prix-europa.de

*Եվրոպան դպրոցում*

Սա ամեն տարի իրականացվող միջոցառում է, որտեղ մրցանակներ են տրվում եվրոպական թեմաներով դպրոցականների ներկայացրած լավագույն շարադրությունների և նկարների համար: Մրցույթի նպատակը դպրոցահասակ երիտասարդների համար եվրոպական հարցերը հետաքրքիր դարձնելն է: 1986թ. ի վեր ,Եվրոպան դպրոցում» մրցույթն իրականացվում է Եվրոպայի խորհրդի, Եվրոպական համայնքների հանձնաժողովի և Եվրոպական մշակութային հիմնադրամի (Ամստերդամ) հետ համատեղ: Մրցանակներն են՝ գումար, հատուկ ուղևորություն, մեդալներ, գրքեր և այլն:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք՝

,Եվրոպան դպրոցում» համակարգող մարմին
Եվրոպա Կենտրոն
Europa-Zentrum
Bachstraße 32
D-53115 Bonn
Հեռ.՝ (49) 228 72 900 40
Ֆաքս՝ (49) 228 72 900 90
Էլ. փոստ՝ eas-cu@t-online.de
http://www.europe-at-school.org

# Եվրոպական կառույցները

*Ուշադրություն դարձրեք պարբերություններին*

**Եվրոպայի խորհուրդ**
Ստրասբուրգում գտնվող միջազգային կազմակերպություն, որին անդամակցում են Եվրոպայի 46 ժողովրդավարական երկրներ:
և
**Եվրոպական խորհուրդ**
Եվրոպական միության 25 անդամ պետությունների ղեկավարների պարբերաբար հանդիպումներ (ամենաքիչը տարին երկու անգամ) Միության քաղաքականությունը պլանավորելու համար:
և
**Եվրոպական հանձնաժողով**
Բրյուսելում տեղակայված Եվրոպական միության գործադիր մարմինն է, որը վերահսկում է Միության պայմանագրերի և կառույցների որոշումների պատշաճ կատարումը:

**Խորհրդարանական վեհաժողով**
Եվրոպայի խորհրդի խորհրդարանական մարմին՝ կազմված 315 ներկայացուցիչներից (և նույն թվով փոխարինողներից), որոնք նշանակվում են անդամ պետությունների ազգային խորհրդարանների կողմից:
և
**Եվրոպական խորհրդարան**
Եվրոպական միության խորհրդարանական մարմին՝ կազմված 732 անդամներից, որոնք ընտրվում են համընդհանուր ընտրությամբ՝ Եվրոպական միության 25 անդամ պետություններից:

**Մարդու իրավունքների եվրոպական դատարան**
Տեղակայված լինելով Ստրասբուրգում՝ այն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ներքո հիմնադրված միակ իրական դատական մարմինն է: Այն կազմված է 46 դատավորներից և որպես վերջնական ատյան հետևում է, որ պայմանագրի կողմ պետությունները կատարեն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները:
և
**Եվրոպական համայնքների արդարության դատարան**
Տեղակայված է Լյուքսեմբուրգում և վերահսկում է Եվրոպական միության պայմանագրերի մեկնաբանման և կիրառման օրենքի

կատարումը:
և
**Արդարության միջազգային դատարան**
Հաագայում տեղակայված Միավորված ազգերի կազմակերպության դատական մարմին:

**Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա**
Պայմանագիր, որով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պարտավորվում են հարգել մարդու հիմնարար իրավունքերն ու ազատությունները:
և
**Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր**
Ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության կողմից 1948թ.՝ միջազգային մակարդակում մարդկանց իրավունքների պաշտպանութունն ամրապնդելու նպատակով:

**Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա**
Եվրոպայի խորհրդի վերանայված սոցիալական խարտիան Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հավասարազոր պայմանագիր է և երաշխավորում է սոցիալական և տնտեսական իրավունքները:
և
**Հիմնարար իրավունքների խարտիա**
Խարտիան ընդունվել է Եվրոպական միության կողմից 2000թ. դեկտեմբերին Եվրոպական խորհրդի Նիցայի հանդիպմանը:

# Կարևոր իրադարձությունները

**1949թ.մայիսի 5**
Կնքվեց Եվրոպայի խորհուրդը հիմնող Լոնդոնի պայմանագիրը, որը ստորագրեցին տաս պետություններ՝ Բելգիան, Դանիան, Իռլանդիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Միացյալ Թագավորությունը, Նիդեռլանդները, Նորվեգիան, Շվեդիան, Ֆրանսիան:

**1950թ. նոյեմբերի 4**
Հռոմում կնքվեց Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիան՝ մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող միջազգային իրավական ուժ ունեցող առաջին փաստաթուղթը:

**1954թ. դեկտեմբերի 19**
Կնքվեց Եվրոպական մշակութային կոնվենցիան, որը հիմք դրեց Եվրոպայի խորհրդի գործունեությանը կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի ոլորտում:

**1956թ. ապրիլ 16**
Հիմնադրվեց Տարաբնակեցման հիմնադրամը (այժմ՝ Եվրոպայի խորհրդի զարգացման բանկ) սոցիալական ուղղվածություն ունեցող նախագծերում անդամ պետություններին օգնելու նպատակով:

**1957թ. հունվարի 12**
Եվրոպայի խորհրդի կողմից հիմնադրվեց Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների մշտական համաժողովը (այժմ՝ Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես) տեղական և տարածքային իշխանությունների ներկայացուցիչների համար հանդիպման ընդհանուր վայր ստեղծելու համար:

**1959թ. սեպտեմբեր 18**
Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ներքո Ստրասբուրգում հիմնադրվեց Մարդու իրավունքների եվրոպական դա-

տարանը՝ կոնվենցիային միացած պետությունների կողմից կոնվենցիայի դրույթների կատարումն ապահովելու համար:

**1961թ. հոկտեմբերի 18**
Թուրինում ստորագրվեց Եվրոպայի խորհրդի Եվրոպական սոցիալական խարտիան՝ որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային համարժեք տնտեսական և սոցիալական ուղղվածություն ունեցող պայմանագիր:

**1972թ. հունիսի 1**
Ստրասբուրգում (Ֆրանսիա) բացվեց Եվրոպայի խորհրդի առաջին Եվրոպական երիտասարդական կենտրոնը:

**1980թ. մարտի 27**
Հիմնադրվեց Պոմպիդու խումբը՝ որպես թմրադեղերի չարաշահման և ապօրինի փոխադրման դեմ պայքարում միջնախարարական համագործակցության բազմադիսցիպլինար ֆորում:

**1987թ. նոյեմբերի 26**
Ստորագրվեց Եվրոպայի խորհրդի՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան:

**1989թ. հունիսի 8**
Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը ներմուծեց հատուկ հրավիրյալի կարգավիճակը, որպեսզի առավել ամուր կապեր հաստատի այն նոր անդամ պետությունների խորհրդարանների հետ, որոնք շարժվում են դեպի ժողովրդավարություն:

**1990թ. ապրիլի 30**
Լիսաբոնում (Պորտուգալիա) բացվեց Եվրոպայի խորհրդի Հյուսիս-հարավ կենտրոնը:

**1990թ. մայիսի 10**
Ժողովրդավարության իրավական երաշխիքների ոլորտում գործելու նպատակով Եվրոպայի խորհրդի կողմից հիմնվեց Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով):

**1990թ. նոյեմբերի 6**
Եվրոպայի խորհրդին անդամակցեց նախկին Խորհրդային բլոկի առաջին պետությունը՝ Հունգարիան:

**1991թ. սեպտեմբեր**
Եվրոպական միության աջակցությամբ հաստատվեցին Եվրոպական ժառանգության օրերը:

**1993թ. հոկտեմբերի 8 և 9**
Վիեննայում (Ավստրիա) կայացած Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների առաջին գագաթաժողովը հռչակագիր ընդունեց՝ հաստատելով իր համաեվրոպական կոչումը և ուղենշելով նոր քաղաքական գերակայություններ ազգային փոքրամասնությունների պաշտպանության և ռասիզմի, քսենոֆոբիայի և անհանդուրժողականության բոլոր ձևերի դեմ պայքարում:

**1994թ. հունվարի 17**
Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից հիմնադրվեց Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը (ԵՏՏԻԿ), որը փոխարինեց Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների մշտական համաժողովին:

**1995թ. փետրվարի 1**
Կնքվեց Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան:

**1995թ. դեկտեմբերի 15**
Բուդապեշտում (Հունգարիա) բացվեց Եվրոպայի խորհրդի երկրորդ Եվրոպական երիտասարդական կենտրոնը:

**1996թ. փետրվարի 28**
Ռուսաստանն անդամակցեց Եվրոպայի խորհրդին:

**1997թ. ապրիլի 4**
Կնքվեց Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիան:

**1997թ. հոկտեմբերի 10 և 11**
Ստրասբուրգում (Ֆրանսիա) կայացավ Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների երկրորդ գագաթաժողովը:

**1998թ. հունվարի 12**
Կնքվեց Մարդու իրավունքների և կենսաբժշկության կոնվենցիայի մարդկանց կլոնավորման արգելման մասին լրացուցիչ արձանագրությունը:

**1998թ. նոյեմբերի 1**
Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 11 արձանագրությամբ Ստրասբուրգում հիմնադրվեց մեկ մշտական՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

**1999թ. մայիսի 5**
Եվրոպայի խորհրդի հիմանդրման 50-րդ տարեդարձը:

**2000թ. նոյեմբերի 4**
Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 50-րդ տարեդարձը:

**2001թ. հունվարի 25**
Հայաստանն ու Ադրբեջանն անդամակցեցին Եվրոպայի խորհրդին:

**2001թ. նոյեմբերի 23**
Կնքվեց Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիան:

**2002թ. ապրիլի 24**
Բոսնիա-Հերցեգովինան անդամակցեց Եվրոպայի խորհրդին:

**2002թ. մայիսի 2**
Կնքվեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 13 արձանագրությունը ցանկացած հանգամանքներում մահապատժի վերացման վերաբերյալ:

**2002թ. հուլիսի 15**
Ընդունվեցին «Մարդու իրավունքների պաշտպանության և ահաբեկչության դեմ պայքարի ուղենիշները»:

**2003թ. հունվարի 28**
Կնքվեց Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը համակարգչային ցանցերի միջոցով կատարվող ռասիստական և օտարատյացամետ բնույթի գործողությունների քրեականացման վերաբերյալ:

**2003թ. ապրիլի 3**
Սերբիա և Մոնտենեգրոն անդամակցեց Եվրոպայի խորհրդին:

**2003թ. մայիսի 15**
Կնքվեց Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիան փոփոխող արձանագրությունը:

**2004թ. հոկտեմբերի 5**
Մոնակոն անդամակցեց Եվրոպայի խորհրդին:

**2005թ. մայիսի 15 և 16**
Վարշավայում (Լեհաստան) կայացավ Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթաժողովը:

**2005թ. դեկտեմբերի 13**
Եվրոպական դրոշի 50-րդ տարեդարձը:

# Եվրոպայի խորհրդի տեղեկատվական կենտրոններ

| | |
|---|---|
| *Տեղեկատվական կենտրոն* | Տեղեկատվական կենտրոնը գտնվում է կենտրոնական գրադարանի տարածքում` Եվրոպայի պալատի գլխավոր մուտքից ձախ: Եթե ցանկանում եք ստանալ Եվրոպայի խորհրդի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն կամ փաստաթղթեր դիմեք`<br>Infopoint<br>Council of Europe<br>F-67075 Strasbourg Cedex<br>Հեռ.` +33 (0)3 88 41 20 33<br>Ֆաքս` +33 (0)3 88 41 27 45<br>Էլ-փոստ` infopoint@coe.int<br>Ինտերնետային կայք` http://www.coe.int |
| *Եվրոպայի խորհրդի հրատարակությունները* | Երկու պաշտոնական լեզուներով (անգլերեն և ֆրանսերեն)1500-ից ավելի հրատարակություններ են տարածվում` Եվրոպայի խորհրդի բազմաոլորտ աշխատանքն աշխարհով մեկ ներկայացնելու նպատակով:<br>Council of Europe Publishing<br>F-67075 Strasbourg Cedex<br>Հեռ.` + 33 (0)3 88 41 25 81<br>Ֆաքս` +33 (0)3 88 41 39 10<br>Էլ-փոստ` publishing@coe.int<br>Ինտերնետային կայք` http://book.coe.int |
| *Գրադարանի և արխիվի ծառայությունները* | Հանրության մուտքն արխիվի բաժանմունքներ և գրադարան իրականացվում է 24 ժամ առաջ նախօրոք տեղեկացնելու պայմանով: Ծառայությունը չի գործում Խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանների ժամանակ:<br>Library and Archives Division<br>Council of Europe<br>F - 67075 Strasbourg Cedex |
| *Արխիվների և արձանագրությունների կառավարումը* | Արխիվների և արձանագրությունների կառավարման բաժինը պահպանում է Եվրոպայի խորհրդի բոլոր պաշտոնական փաստաթղթերը, ինչպես նաև տարբեր բաժինների 1949թ. ի վեր պատմական արխիվները: Մատուցվում է սքանի և պատճենահանման ծառայություն:<br><br>Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել`<br>archives@coe.int<br>Հեռ.` + 33 (0)3 90 21 43 77 |

*Ջուզեպե Վեղովատո գրադարանը*

Ջուզեպե Վեղովատո գրադարանը, որը ստեղծվել է Կենտրոնական գրադարանի և Վեղովատո գրադարանի միավորման արդյունքում, բացվել է 2004թ. հունվարի 27-ին: Առաջին գրադարանը հիմնադրվել էր 1951թ. Խորհրդարանական վեհաժողովի առաջին նստաշրջանի ժամանակ: Վեղովատո հավաքածուն պրոֆեսոր Վեղովատոյի (Խորհրդարանական վեհաժողովի նախկին նախագահ) նվիրատվությունն է և 1987թ. ի վեր զգալիորեն ընդլայնվել է: Հավաքածուները տեղեկատվություն են տրամադրում Եվրոպայի խորհրդի ուշադրության կենտրոնում գտնվող եվրոպական հարցերի շուրջ: Գրադարանը տեղակայված է Ստրասբուրգում, Եվրոպայի խորհրդի Բ մասնաշենքի առաջին հարկում:

Հանրության համար գրադարանը բաց է.
Երկուշաբթիից մինչև հինգշաբթի
Դիմել՝
Հեռ.՝ + 33 (0)3 88 41 20 25
Ֆաքս՝ + 33 (0)3 90 21 47 54
Էլ-փոստ՝ infodoc@coe.int

## Եվրոպայի խորհրդի կապի գրասենյակներ

**Փարիզի գրասենյակ**
**Paris Office**
55, avenue Klռber
F - 75 784 Paris Cedex 16
France
Հեռ.՝ + 33 (0)1 44 05 33 60
Ֆաքս՝ + 33 (0)1 47 27 36 47
Էլ-փոստ՝ bureau.paris@coe.int

**Բրյուսելի գրասենյակ**
**Brussels Office**
Avenue de Tervuren 12
B - 1040 Bruxelles
Belgium
Հեռ.՝+ 32 2 230 41 70
Ֆաքս՝ + 32 2 230 94 62
Էլ-փոստ՝ bureau.bruxelles@coe.int

**Եվրոպայի խորհրդի զարգացման բանկ**
**Council of Europe Development Bank**
55, avenue Klռber
F - 75 784 Paris Cedex 16
France
Հեռ.՝ +33 (0)1 47 55 55 00
Ֆաքս՝ +33 (0)1 47 55 03 38
Էլ-փոստ՝ ceb@coebank.org
Ինտերնետային կայք՝ http://www.coebank.org

**Համաշխարհային փոխկախվածության և համերաշխության եվրոպական կենտրոն (Հյուսիս-հարավ կենտրոն)**
**European Centre for Global Interdependence and Solidarity North-South Centre**
Avenida da Liberdade, 229-4´
P-1250 Lisbon
Portugal
Հեռ.՝ + 351 213 584 030
Ֆաքս՝ + 351 213 531 329
Էլ-փոստ՝ nsinfo@coe.int
Ինտերնետային կայք՝ http://www.nscentre.org

**Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոն (Գրաց)**
**European Centre for Modern Languages (Graz)**
Nikolaiplatz 4
A-8020 Graz
Austria
Հեռ.՝ + 43 316 323 554
Ֆաքս՝ + 43 316 323 554-4
Էլ-փոստ՝ information@emcl.at
Ինտերնետային կայք՝ http://www.ecml.at

**Եվրոպական տեսալսողական դիտարան**
**European Audiovisual Observatory**
76, allne de la Robertsau
F - 67 000 Strasbourg
France
Հեռ.՝ +33 (0)3 88 14 44 00
Ֆաքս՝ +33 (0)3 88 14 44 19
Էլ-փոստ՝ obs@obs.coe.int
Ինտերնետային կայք՝ http://www.obs.coe.int

**Դեղամիջոցների որակի եվրոպական տնօրինություն (ԴՈԵՏ)**
**European Directorate for the Quality of Medicines (EDQM)**
BP 907
F - 67 029 Strasbourg Cedex 1
France
Հեռ.՝ +33 (0) 3 88 41 20 00
Ֆաքս՝ +33 (0)3 88 41 27 71
Էլ-փոստ՝ info@pheur.org
Ինտերնետային կայք՝ http://www.pheur.org

**Եվրոպական երիտասարդական կենտրոն Ստրասբուրգում**
**European Youth Centre Strasbourg**
30 rue Pierre-de-Coubertin
F - 67 000 Strasbourg
Հեռ.՝+33 (0) 3 88 41 23 00
Ֆաքս՝ +33 (0)3 88 41 27 77
Էլ-փոստ՝ youth@coe.int
Ինտերնետային կայք՝ http://www.coe.int/youth

**Եվրոպական երիտասարդական կենտրոն Բուդապեշտում**
**European Youth Centre Budapest**
Zivatar utca 1-3
H-1024 Budapest
Hungary
Հեռ.՝+ 36 1 212 40 78
Ֆաքս՝ +36 1 212 40 76
Էլ-փոստ՝ eycb.secretariat@coe.int
Ինտերնետային կայք՝ http://www.eycb.coe.int

## Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակները

Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակները (ԵԽՏԳ) հիմնադրվել են Նախարարների կոմիտեի որոշմամբ՝ կառավարությունների հայցով: Նրանց խնդիրն է տեղեկատվություն տարածել Եվրոպայի խորհրդի, նրա չափանիշների և աշխատանքների վերաբերյալ և համապատասխան երկրներում աջակցել ու խթանել կազմակերպության նախաձեռնությունները: Գրասենյակների աշխատանքները կազմակերպում և ղեկավարում են տեղացի աշխատակիցները՝ տնօրենի ղեկավարությամբ:

**Ալբանիա**
**Albania**
Sheshi Skenderbej
Pallati i Kultures, Kati i pare
Tirana
Հեռ.՝ + 355 4 22 84 19
Ֆաքս՝ + 355 4 24 89 40
Էլ-փոստ՝ information.office@coealb.org
Ինտերնետային էջ՝ http://www.coealb.org

**Հայաստան**
**Armenia**
"European Regional Academy" building
10, David Anhaght street
Yerevan 0045
Հեռ.՝ + 374 10 24 38 92
Ֆաքս՝ + 374 10 24 38 75
Էլ-փոստ՝ coe.yerevan@coe.int
Ինտերնետային կայք՝ http://www.coe.am

**Ադրբեջան**
**Azerbaijan**
39-41, Boyuk Gala Street
Icheri Sheher
Baku AZ 1004
Հեռ.՝ + 994 12 497 31 56 / 54 93 / 31 65

Ֆաքս`    + 994 12 497 23
Էլ-փոստ` office@coe-baku.org
Ինտերնետային կայք` http://www.coe.az

**Բուլղարիա**
**Bulgaria**
Aleksander Zhendov 5
BG - 1113 Sofia
Հեռ.` + 359 2 971 30 00
Ֆաքս` + 359 2 971 22 33
Էլ-փոստ` cid@online.bg
Ինտերնետային կայք` http://www.cid.bg

**Regional Centre**
**European Information Centre**
24 Bulgaria bul.
P.O. Box 345
5000 Veliko Turnovo
Հեռ.`  + 359 62 60 50 60
Ֆաքս`  + 359 62 63 00 48
Էլ-փոստ` coevt@vali.bg
Ինտերնետային կայք`  http://www.europeinfocentre.bg

**Չեխիայի հանրապետություն**
**Czech Republic**
Namesti Pod Kastany 529/2
CZ - 160 00 Praha 6 - Bubenec
Հեռ.`   + 420 233 085 450 / 452
Ֆաքս`   + 420 233 085 451
Էլ-փոստ` dana.bekova@radaevropy.cz
Ինտերնետային կայք`  http://www.radaevropy.cz

**Էստոնիա**
**Estonia**
TınismՊgi 2
EE - 10122 Tallinn
Հեռ.`    + 372 630 72 58
Ֆաքս`    + 372 646 00 89
Էլ-փոստ` eni@coe.ee
Ինտերնետային կայք`   http://www.coe.ee

**Վրաստան**
**Georgia**
7, Erekle II Lane
GE - 0105 Tbilisi
Հեռ.`    + 995 32 989 560 / 988 977
Ֆաքս`     + 995 32 989 657
Էլ-փոստ` information.office@coe.ge
Ինտերնետային կայք`   www.coe.ge

**Հունգարիա**
**Hungary**
(Hungarian Parliament)
P.O. Box 3
H - 1357 Budapest
Հեռ.` + 36 1 441 48 57 / 45 63
Ֆաքս` + 36 1 441 48 78
Էլ-փոստ` idcbud@t-online.hu
Ինտերնետային կայք` http://www.europatanacs.hu

**Լատվիա**
**Latvia**
K. Barona iela 14
LV - 1423 Riga
Հեռ./ֆաքս` + 371 7 28 68 65
Էլ-փոստ` centre@coecidriga.lv
Ինտերնետային կայք` http://www.coecidriga.lv

**Լիտվա**
**Lithuania**
Gedimino pr. 51
LT - 01109 Vilnius
Հեռ.` + 370 52 496 685 / 647
Ֆաքս` + 370 52 496 214
Էլ-փոստ` m.prokopcik@lnb.lt
Ինտերնետային կայք` http://www.etib.lt

**Մոլդովա**
**Moldova**
78 “A”, 31, August Street
MD – 2012 Chisinau
P.O. Box 219
Հեռ.` + 373 22 21 29 30 / 24 10 94
Ֆաքս` + 373 22 24 10 96
Էլ-փոստ` informchisinau@coe.int
Ինտերնետային կայք` www.bice.md

**Լեհաստան**
**Poland**
Al. Niepodleglosci 22
PL - 02653 Warsaw
Հեռ.` + 48 22 845 20 84 / 853 57 73
Ֆաքս` + 48 22 853 57 74
Էլ-փոստ` informwarsaw@coe.int
Ինտերնետային կայք` http://www.coe.org.pl

**Ռումինիա**
**Romania**
6, Alexandru Donici street

Sector 2
RO - 020478 Bucharest
Հեռ.`   + 40 21 211 68 10
Ֆաքս`   + 40 21 211 99 97
Էլ-փոստ` info.office@coe.ro
Ինտերնետային էջ`   http://www.coe.ro

**Ռուսաստանի Դաշնություն**
**Russian Federation**
State Institute for International Relations in Moscow (MGIMO)
Pr. Vernadskogo 76
RU - 119454 Moscow
Հեռ.` + 7 495 434 9077
Ֆաքս`   + 7 495 434 9075
Էլ-փոստ` coemoscow@dionis.iasnet.ru
Ինտերնետային կայք`   http://www.coe.ru

**Ուրալի կենտրոն**
**Centre for the Urals**
Ul. Kolmogorova 54
RU – 620034 Yekaterinburg
Հեռ./ Ֆաքս` + 7 3432 45 92 25
Էլ-փոստ` CIDURAL@mail.utk.ru

**Վոլգայի կենտրոն**
**Centre for the Volga**
Ul. Volskaya 16
RU – 410028 Saratov
Հեռ.`   + 7 845 2 29 91 51
Ֆաքս`+ 7 845 2 22 85 04
Էլ-փոստ` cid.saratov@overta.ru
Ինտերնետային կայք` http://volgacoe.ru

**Սլովակիա**
**Slovakia**
Klariska 5
P.O. Box 217
SK - 810 00 Bratislava 1
Հեռ.` + 421 2 544 35 752
Ֆաքս` + 421 2 544 356 72
Էլ-փոստ`  centrum@radaeuropy.sk
Ինտերնետային կայք` http://www.coe.sk

**Սլովենիա**
**Slovenia**
Rimska cesta 16
SLO - 1000 Ljubljana
Հեռ.` + 386 14 21 43 00
Ֆաքս` + 386 14 21 43 05
Էլ-փոստ`  idc.slovenija@idcse.nuk.si
Ինտերնետային կայք`  http://www.idcse.nuk.si

**Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետություն**
**“The former Yugoslav Republic of Macedonia”**
ul. Mito Hadzivasilev Jasmin b.b.
(Museum of the City of Skopje-I floor)
MK - 1000 Skopje
Հեռ.՝ + 389 2 3123 616
Ֆաքս՝ + 389 2 3123 617
Էլ-փոստ՝ gjorgji.jovanovski@coe.int
Ինտերնետային կայք՝ http://www.iocoe.org.mk

**Ուկրաինա**
**Ukraine**
24-A Ivan Franka Str.
UA - 01030 Kyiv
Հեռ.՝ + 38 044 23 44 084
Ֆաքս՝ + 38 044 23 4 43 778
Էլ-փոստ՝ informkiev@coe.int
Ինտերնետային կայք՝ http://www.coe.kiev.ua

## Եվրոպայի խորհրդի գրասենյակները տեղերում

Եվրոպայի խորհրդի դաշտային գրասենյակները հիմնվել են Նախարարների կոմիտեի որոշմամբ և նրանց նպատակներն ու աշխատելու ձևերը տարբեր են՝ ըստ իրենց տրված հատուկ մանդատների: Առաջին հերթին բոլորը աշխատում են օժանդակել, պահպանել և ամրապնդել Եվրոպայի խորհրդի և ազգային իշխանությունների (կառավարություն և խորհրդարան), քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, քաղաքական կուսակցությունների և լրատվամիջոցների ինչպես նաև միջազգային համայնքի այլ անդամների միջև աշխատանքային փոխհարաբերությունները:

Տարբեր առումներով, նրանց գործունեությունը Եվրոպայի խորհրդին թույլ է տալիս ազդեցություն ունենալ օրենսդրական և այլ բարեփոխումներին, տրամադրել փորձագիտական օգնություն Կազմակերպության ուշադրության ներքո գտնվող ոլորտներում, մշակել արդյունավետ ուսուցողական ծրագրեր (այդ թվում նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վերաբերյալ) և այլն:

Հատուկ ուշադրություն է դարձվում գործողությունները համակարգելու մեր հիմնական միջկառավարական գործընկերների, հատկապես, ՄԱԿ-ի և իր գործակալությունների, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի հետ:

**Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ գրասենյակ (ԳՔՀՆ) Հայաստանում**
**Office of the SRSG to Armenia**
“European Regional Academy” building
10, David Anhaght street

Yerevan 0045
Հեռ.`  + 374 1 24 33 85
Ֆաքս`  + 374 1 24 38 75

**ԳՔՀՆ գրասենյակ Ադրբեջանում**
**Office of the SRSG to Azerbaijan**
6 – 10 Vagif Mustafazade KՖcasi
1st Floor, Icheri Sheher
Baku 370004
Հեռ.`  + 994 124 975 489
Ֆաքս`  + 994 124 975 475

**ԳՔՀՆ գրասենյակ Բոսնիա-Հերցեգովինայում**
**Office of the SRSG to Bosnia and Herzegovina**
Trg Fra Grge Martica 2/III
71000 Sarajevo
Հեռ./Ֆաքս` + 387 33 264 360

**ԳՔՀՆ գրասենյակ Վրաստանում**
**Office of the SRSG to Georgia**
7, Erekle II Lane
0105 Tbilisi
Հեռ.`   + 995 32 989 560 / 988 977
Ֆաքս`   + 995 32 989 657

**ԳՔՀՆ գրասենյակ Մոլդովայում**
**Office of the SRSG to Moldova**
Str. Banulescu Bodoni bl.57/1
2005 Chisinau
Հեռ.`    + 373 22 23 50 34 / 35
Ֆաքս`    + 373 22 23 30 18

**ԳՔՀՆ գրասենյակ Սերբիա**
**Office of the SRSG to Serbia**
Sindjeliceva 9
11000 Belgrade
Հեռ.`+ 381 11 30 88 411 / 30 88 412
Ֆաքս`     + 381 11 30 86 494

**ԵԽ Քարտուղարական գրասենյակ Մոնտենեգրոյում**
**CoE Secretariat Office in Montenegro**
Ul. Novaka Miloseva Nr. 6
81000 Podgorica
Հեռ.` + 381 81 230 819 / 825
Ֆաքս`      + 381 81 230 176

**ԵԽ Քարտուղարական գրասենյակ Կոսովոյում**
**CoE Secretariat Office in Kosovo**
UNHCR HQ Building, 6th Floor
Kragujevci 8
10000 Pristina

Kosovo / UNMIK
Հեռ.` + 381 38 243 749 / 750 / 751
Ֆաքս`      + 381 38 243 752

## Այլ կենտրոններ

**Հատուկ խորհրդական**
**Ալբանիա**
Special Adviser
Albania
Pallati i Kulturus, Kati I pare
Sheshi Skunderbej
Tirana
Հեռ.`   + 355 4 22 84 19
Ֆաքս`      + 355 4 24 89 40

**Ռեզիդենտ փորձագետ**
**Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետություն**
**Resident Expert**
**"The former Yugoslav Republic of Macedonia"**
Council of Europe Information Office
ul. Mito Hadzivasilev Jasmin b.b.
MK - 1000 Skopje
Հեռ.`    + 389 2 3290 232
Ֆաքս`       + 389 2 31 23 617

# Եվրոպայի խորհրդի 46 անդամ պետությունները

Ադրբեջան
Ալբանիա
Անդորրա
Ավստրիա
Բելգիա
Բոսնիա և Հերցեգովինա
Բուլղարիա
Գերմանիա
Դանիա
Էստոնիա
Թուրքիա
Իռլանդիա
Իսպանիա
Իտալիա
Իսլանդիա
Լյուքսեմբուրգ
Լատվիա
Լեհաստան
Լիխտենշտեյն
Լիտվա
Խորվաթիա
Կիպրոս
Հայաստան
Հունգարիա
Հունաստան
Մալթա
Մոլդովա
Միացյալ Թագավորություն
Մոնակո
Նորվեգիա
Նիդեռլանդներ
«Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետություն»
Շվեյցարիա
Շվեդիա
Չեխիայի հանրապետություն
Պորտուգալիա
Ռուսաստանի Դաշնություն
Ռումինիա
Սլովակիա
Սլովենիա
Սան Մարինո
Սերբիա
Վրաստան
Ուկրաինա
Ֆինլանդիա
Ֆրանսիա

*Դիտորդի կարգավիճակով պետություններ*

Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Կանադա
Վատիկան
Ճապոնիա
Մեքսիկա

2006թ. դեկտեմբերի դրությամբ

Ծանոթագրություն

Եվրոպայի խորհրդի գործունեության ուղղությունները ենթարկվում են վերափոխման Վարշավայում (2005թ. մայիս) Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների 3-րդ գագաթաժողովի կողմից ընդունված գործողությունների ծրագրի ներքո: «800 միլիոն եվրոպացիների» մյուս հրատարակությունն ի նկատի կունենա այս գործողությունների վերակազմակերպումն ու իրականացումը: